


# ՓԱՆԹՈՒՐԱՆԻԶՄԸ

ՏՕՔԹ. ԵՂԻԿ ԺԷՐԷՃԵԱՆ




ՊԷՅՐՈՒԹ, 1998

9 (56)  
Յ-59

# ՓԱՆԹՈՒՐԱՆԻԶՄԸ

ՏՕԲԹ. ԵՂԻԿ ԺԷՐԷՃԵԱՆ

3433



ՊԷՅՐՈՒԹ, 1998

## Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Լիբանանի պետական հայ երեսփոխան, Տօքթ. Եղիկ ձէ-  
րէճեան գովելի նախաձեռնութիւնը ունեցած է իր «Փանթու-  
րանիզմը» գիրքով նորահաս հայ սերունդի քաղաքական կազ-  
մաւորման համար անհրաժեշտ բաց մը լեցնելու: Արդարեւ, իր  
«Փանթուրանիզմը» գիրքը հանրամատչելի գիրք մըն է, որ  
ընդհանուր պատկերացում մը կու տայ համաթրքութեան, հա-  
յութեան համար վտանգալից գաղափարախօսութեան եւ այդ  
առնչութեամբ կատարուած աշխատանքին՝ ԺԹ. եւ Ի. դարե-  
րուն: Թուրք պետական դէմքեր չվարանեցան մօտալուտ ԻԱ.  
դարը կոչել թրքութեան դարը եւ սկսան երազել Ատրիականէն  
չինական պարիսպներ տարածուող թուրանական միախմբումին  
մասին: Առ այդ, անհրաժեշտ է, որ հայ նոր սերունդը լաւա-  
տեղեակ դառնայ մեր Մայր Հայրենիքի գոյութեան սպառնացող  
այս վտանգաւոր, ցեղապաշտական գաղափարախօսութեան եւ  
իւր ներդրումը բերէ անոր դէմ տարուող պայքարին:

Տօքթ. Եղիկ ձէրէճեան, շնորհակալ աշխատանք կատա-  
րած է համադրելով թուրանականութեան մասին ծանօթ եւ նոր  
(յատկապէս արաբական աղբիւրներէ) տուեալներ իր ուսում-  
նասիրական գործին՝ «Փանթուրանիզմը» գիրքին մէջ:

Փանթուրանիզմի մասին ստորագրած ըլլալով քանի մը  
յօդուածներ, յատկապէս «Հայաստան Եւ Թուրանականութիւ-  
նը» եւ «Փանթուրանիզմի Վտանգը» ինչպէս նաեւ Համաշ-  
խարհային Բ. Պատերազմի օրերուն Փանթուրանիզմի դրսեւո-  
րումներուն շուրջ ուսումնասիրութիւններ, կը զգանք թէ որեւէ  
ատենէ աւելի ներկայիս, երբ ազատ եւ անկախ Հայաստանի  
Հանրապետութիւն ունինք, որուն դրացիներն են թուրանակա-  
նութեան գլխաւոր գաղափարախօսները պարունակող երկիր-  
ները՝ Թուրքիա եւ Ատրպէյճան, Փանթուրանականութեան վը-  
տանգին հուծիւնը պէտք է լաւապէս հասկցուի ընթերցումովը,  
լայն հասարակութեան՝ յատկապէս նորահաս սերունդին մատ-  
չելի նման գիրքի մը:

## Փանթուրանիկն Բառին Սահմանումը, Ստուգաբանումը Եւ Ծագումը

Փանթուրանիկը, թուրանեան ցեղախումբերէ ծագում առած ժողովուրդներուն միացումով, մէկ երկրի, աւելի նիշդ մէկ կայսրութեան՝ ՄԵՄՆ ԹՈՒՐԱՆԻ ստեղծման գաղափարախօսութիւնն է:

Խորքին մէջ, Թուրան հասկացողութիւնը աշխարհագրական կամ ցեղաբանական հասկացողութիւն մը չէ: Անոր գիտական հասկացողութիւնը լեզուաբանական է:

Լեզուներու դասակարգումին մէջ, գոյութիւն ունի Թուրանեան կամ Ուրալ-Ալթայեան լեզուական մեծ ընտանիքը որ ունի 5 ստորաբաժանումներ. —

### Ուրալ Ալթայեան լեզուաընտանիք — (կամ Թուրանեան)

- ա) Ֆիննո-Ուգրիան ստորաբաժանում,
- բ) Սամոյիտ ստորաբաժանում,
- գ) Թունկուզ ստորաբաժանում,
- դ) Մոնկոլ ստորաբաժանում,
- ե) Թուրք ստորաբաժանում:

Թուրք ստորաբաժանումը ինքն իր կարգին ունի իր նիւղերը. — Սիպիրեան թուրքեր (Եաբուք), Կեդրոնական Ասիոյ թուրքեր (Ղազախ, Իւզպէէ, Խիրիիզ, Թուրմէն), Վոլկայի թուրքեր (Խրիմի եւ Հիւսիսային Կովկասի թաթարներ), Արեւմտեան թուրքեր (իրանեան, օսմանեան եւ ազերի): Սակայն Թուրան լեզուաբանական հասկացողութիւնը, ընթացիկ կեանքին մէջ կ'օգտագործուի աշխարհագրական իմաստով եւ կը նշանակէ այն տարածքները, որոնց վրայ կ'ապրին թուրանեան լեզուաընտանիքին պատկանող ցեղերն ու ազգերը:

Եթէ տրուած սահմանումն ու ստուգաբանումը համադրուի, կը նկատուի որ Թուրան հասկացողութիւնը շատ աւելի լայն է քան թուրք հասկացողութիւնը: Թուրքը, մէկ ստո-

րաբաժանումն է Թուրան հասկացողութեան: Ուստի, Համաթուրանականութիւն կամ Փանթուրանիզմ հասկացողութիւնը շատ աւելի լայն հասկացողութիւն է քան Համաթրուքիւն կամ Փանթուրիքիզմ հասկացողութիւնը եւ գիտականօրէն ճիշդ չէ զանոնք որպէս հումանիշ օգտագործել: Օրինակի համար ֆինները, հունգարները եւ որոշ պուկարներ ունին թուրանեան ծագում, սակայն անոնք թուրք չեն:

Նկատի առնելով որ օտար գրականութեան մէջ շատ աւելի օգտագործուած է Փանթուրանիզմ եզրը (անգլերէն՝ *Panturanian*, արաբերէն՝ *الطورانية*), նաեւ նկատի առնելով որ երազուած կայսրութեան անունը «Մեծն Թուրան» է՝ նախընտրելի է օգտագործել Փանթուրանիզմ բառը:

Փանթուրանիզմին նուիրուած շատ մը աշխատութիւններուն մէջ կը նշուի թէ Թուրան բառը (Թուրա կամ Թուրիա ձեւերով), առաջին անգամ յիշատակուած է պարսկական Աւեստայի մէջ: Թուրա մէկն էր այն երեք եղբայրներէն, որոնցմէ սերած են մարդկային ցեղերը: Արաբ պատմաբաններ կը նշեն թէ Թուրան հասկացողութիւնը, աշխարհագրական իմաստով օգտագործած են արաբ աշխարհագրագէտները, ցոյց տալու համար Իրանի եւ Փաֆիստանի միջեւ ինկած տարածութիւն մը<sup>1</sup>: Թուրան հասկացողութիւնը օգտագործած է նաեւ Ֆերտուսի իր հանրահոշակ Շահնամէին մէջ՝ այդպէս անուանելով Իրանի հիւսիսէն թափանցող վաչկատուն ցեղախումբերը<sup>2</sup>: Եւրոպայի մէջ, թուրան բառը առաջին անգամ օգտագործած է Հարպլուք, 1697ին, իր «Արեւելեան Գրադարան» աշխատութեան մէջ: Սակայն, թուրան աշխարհագրական հասկացութիւնը, առաջին անգամ լայն չափով ընդհանրացած է հունգար արեւելագէտներու կողմէ, 1839ին<sup>3</sup>:

1) «الارمن والعرب بين الطورانية والصهيونية», د. صالح زهر الدين  
Պէյրուք, 1994, էջ 7:

2) «الدولة العثمانية - قراءة جديدة لعوامل الانحطاط», قيس جواد العزوي  
Պէյրուք, 1994, էջ 128:

3) «The Emergence of Modern Turkey», Bernard Levis, 1968, էջ 347:

## Պատմական Ակնարկ

Կեդրոնական Ասիոյ տափաստաններուն վրայ բնակութիւն հաստատած թուրանեան ցեղախումբերէն Օղուզները, 745 թուին, կը կորսնցնեն իշխանութիւնը եւ կ'արշաւեն դէպի Միջին Ասիա: Յաջորդող տասնամեակներուն, այլ ցեղախումբեր եւս կ'ասպատակեն դէպի Միջին Ասիա:

Օղուզ եւ Թուրքմէն ցեղախումբերէն կազմուած բազմութիւն մը, Օսմանեան Սելուկները, 11րդ դարուն, Տուրքիի դեկարութեամբ կը շարժի դէպի Փոքր Ասիա: Վերջինիս զաւակը, Ալի Ասլան, 1071 թուին, Մանգլիքտի նշանաւոր ճակատամարտին, պարտութեան կը մատնէ բիւզանդացիները: Ալի Ասլանի սերունդէն, Օսմանի (Օթոման) օրով կայսրութիւնը կ'ընդարձակուի եւ կը կոչուի Օսմանեան Կայսրութիւն: Մինչ այդ, 7րդ դարուն, երբ շրջանը կը գրաւուի արաբներուն կողմէ, տեղի կ'ունենայ համատարած իսլամացում:

Միւս կողմէ, Կեդրոնական Ասիոյ մէջ, մոնկոլ ձեռնկի գ խան կ'ընդարձակէ իր կայսրութիւնը, որուն մահէն ետք տեղի կ'ունենայ մոնկոլական կարգ մը ցեղախումբերու թրքացումը եւ իսլամացումը: ձեռնկի գ խանի յաջորդներէն Թեմուր Լենկ, աւելի կ'ընդարձակէ կայսրութիւնը եւ 1402ին յաղթել էտք Պայազիտ Ա.ին, կը գրաւէ Փոքր Ասիան:

Այս ձեւով, Եւրոպայի արեւելեան սահմաններէն մինչեւ ձաթոնական Մով երկարող հսկայ տարածքի մը վրայ՝ ներառեալ ամբողջ Ռուսաստանը՝ կը տարածուի թրքական ծագում ունեցող ցեղերու տիրապետութիւնը:

Տեղաբնիկ ժողովուրդներուն հանդէպ արիւնալի ջարդերով եւ նախնիներով ընթացող այս արշաւանքներուն որպէս արդիւնք ձեռք ձգուած այս անձայրածիր տարածութիւնները սակայն, մէկ եւ ամբողջական կայսրութեան մը մէջ չեն միաւորուիր: Յառաջ կու գան թագաւորութիւններ եւ իշխանութիւններ որոնք կը կոչուին խանութիւններ եւ էմիրութիւններ:

16րդ դարուն, ռուսական բանակները, Իվան Սարսափելիի առաջնորդութեամբ, մէկը միւսին ետեւէ իրենց կ'ենթարկեն այս խանութիւններն ու էմիրութիւնները: Աւելի ուշ, Մեծն Պետրոս, կը շարունակէ ռուսական յաղթանակները եւ կ'ուղղուի դէպի հարաւ՝ նպատակ ունենալով հասնիլ "տաֆ ջուրեր":

Այս արշաւանքներուն, պատերազմներուն եւ գրաւումներուն որպէս արդիւնք, գոյութիւն կ'առնեն 2 մեծ կայսրութիւններ.— Ռուսական Կայսրութիւնը եւ Օսմանական Կայսրութիւնը:

— Ռուսական Կայսրութեան տիրող տարրը ռուսն էր. սակայն կայսրութիւնը բազմազգ էր եւ մեծ թիւ կը կազմէին կայսրութեան հպատակ (կամ ֆաղաֆաղ) թուրանեան ծագում ունեցող ժողովուրդները՝ որոնք ընդհանուր անուանումով կը կոչուին թաթարներ<sup>1</sup>:

— Օսմանեան Կայսրութեան տիրող տարրը թուրքն էր. սակայն, այս կայսրութիւնը եւս բազմազգ էր եւ ոչ—թուրք տարրը (արաբ, ֆիւրս, յոյն, հայ, պուլկար, եւայլն) կը կազմէր բնակչութեան մեծամասնութիւնը:

Շարք մը պատերազմներէ ետք, կը գծուի այս երկու կայսրութիւններուն սահմանը, որ կ'անցնի պատմական Հայաստանի մէջտեղէն՝ հայութիւնն ու Հայաստանը բաժնելով երկու հատուածներու՝ Արեւմտեան եւ Արեւելեան:

1) Այս ընդհանուր անուանակոչումէն անկախ, կայ նաեւ թրքական ծագումով թաթար ժողովուրդը որ առաւելաբար կ'ապրի Վոլկա գետի միջին աւազանի օփերուն:

## Փանթուրանիզմի Չարգացումը Ռուսական Կայսրութեան Մէջ

Ռուսական Կայսրութեան հպատակ թուրանեան ծագումով ժողովուրդները (թաթարները), 4 դարեր կ'ենթարկուին ազգային ճնշումի. անոնց վրայ կը գործադրուի խտրական ֆաղաֆաղանութիւն մը: 19րդ դարու սկիզբէն, թաթար մտաւորականութիւնը կ'ապրի ազգային զարթոնքի շրջան մը: Անոնց իտէալը կը դառնայ ազատագրուիլ Ռուսական Կայսրութենէն եւ միանալ իրենց եղբայրներուն՝ Օսմանեան թուրքերուն: Ազգայնական այս ձգտումին համար գրգռիչ ազդակ կը հանդիսանայ այն պարագան, որ թուրք—թաթարը Ռուսական Կայսրութեան մէջ ճնշուած տարր մըն էր, մինչ Օսմանեան Կայսրութեան մէջ ան տիրապետող ու ճնշողն էր:

Օսմանեան թուրքերը, որոնք պատմութեան ընթացքին, թրքածին ցեղերուն մէջ իրենց ցեղագրական յատկանիշներով ամենէն աղաւաղուածն էին բայց ունէին ֆաղաֆաղական անկախութիւն եւ ռազմական ոյժ, կը դառնան այն առանցքը, որուն շուրջ պէտք է համախմբուէր համայն թրքութիւնը: Ռուսաստանի թրքութիւնը, որ ցեղագրականօրէն աւելի հարագատ էր իր նախնիներուն, չունէր ֆաղաֆաղական ազատութիւն եւ զինուորական ոյժ. ուստի, ան կը դառնայ Փանթուրանիզմի իտէալին գլխաւոր ձգտողը եւ անոր տեսական զարգացում տուողը:

Փանթուրանիզմի գաղափարախօսութիւնը սակայն, յատկապէս իր սկզբնական շրջանին, Օսմանեան Կայսրութեան եւ Ռուսական Կայսրութեան մէջ, կ'ապրի զարգացման եւ ինքնահաստատման տարբեր ուղի: Այս երեւոյթին համար կար էական պատճառ մը.— Ռուսական Կայսրութեան մէջ, Փանթուրանիզմը, ազատագրական ձգտման մը արտայայտութիւնն էր, մինչ Օսմանեան Կայսրութեան մէջ, յատկապէս երբ այդ վերածուէր պետական գաղափարախօսութեան, կը դառնար ծաւա-

լապաշտական ֆաղափականութեան մը ծրագիրը:

Այս ձեւով, Ռուսական Կայսրութեան թրփացեղ ժողովուրդներուն մօտ հասունցող ազատագրական ճգնումները իրենց տեսական հիմնաւորումը կը գտնեն Փանթուրանիզմի գաղափարախօսութեան մէջ: Հիւսիսային Թաթարիոյ Ուֆա եւ Քազան ֆաղափները կը դառնան Փանթուրանիզմի միջնաբերդերը, ուր համապատասխանաբար կը գործեն «Թուրք Եւրոտու» եւ «Թուրք Օջախը» պարբերաթերթն ու ակումբը: Անդրկովկասի մէջ Փանթուրանիզմի կեդրոնը կը դառնայ Պաֆուս, իր «Կասպի» հանդէսով:

Այս շրջանի Փանթուրանիզմը գերծ չէր Փանիսլամիզմի<sup>1</sup> տարրերէն. ընդհանրապէս, Փանթուրանիզմը իր զարգացման բոլոր հանգրուաններուն ալ գերծ մնացած չէ Փանիսլամիզմի տարրերէն: Այդ շրջանին, Ռուսիոյ մէջ, Թուրք եւ իսլամ գրեթէ նոյնիմաստ էին: Ռուսական Կայսրութեան թրփացեղ բնակչութեան 90%ը իսլամ էր (չնչին բացառութիւն կը կազմէին Եաֆուսները, Թուվիները, Խաֆարները, որոշ չափով ալ Չուուուները եւ Քազանի թաթարները), իսկ իսլամ կրօնքին պատկանող բնակչութեան 90%ը՝ թրփական ծագում ունէր (գլխաւոր բացառութիւնը Տանիկներն էին որոնց վրայ կ'աւելնար Հիւսիսային Կովկասի ցեղախումբերու փոքր թիւ մը):

Միւս կողմէ, ռուսական տիրապետութեան մէջ ազատագրումի ճգնող թուրք-թաթարին համար գործնական նշանակութիւն մը չէր կրնար ունենալ թէ իր եղբայրներուն միանալու ազատագրական պայքարի դրօշը ազգային՝ դրօշը կ'ըլլայ, թէ՛ կրօնականը: Աւելին, թրփական գոյգ հատուածներու ժողովրդային գանգուածներուն մօտ ալ տակաւին կրօնական պատկանելիութեան զգացումը աւելի գերակշիռ էր քան ազգային պատկանելիութեան զգացումը: Ճիշդ է, որ նոր ծլարձակող

ազգային զարթօնքը, որ յառաջ կը տարուէր երիտասարդ մտաւորականութեան կողմէ, պայքարի մէջ էր կրօնական մոլեռանդութեան ներկայացուցիչներուն հետ, սակայն, վերջնական նշանակալի տեսակետէն, անոնք գաղափարակիցներ էին: Դեպքերուն ժամանակակից եւ հայ ֆաղափական միտքի ամենէն իրապաշտ ներկայացուցիչներէն Յովհաննէս Քաջազունի, այս երեւոյթի մասին կը գրէ. — «Անդրկովկասի թուրքերը իրանց "մուսուլման" են անուանում: Չեն սիրում — նոյնիսկ վիրաւորական են համարում — Թուրք կամ Թաթար անունները: Թուրքի, պարսիկի, քուրտի, տաղստանցի լեզու եւ Քազանի թաթարի միջեւ ոչ մի տարբերութիւն չեն ուզում դնել. բոլորն էլ հաւասարապէս "մուսուլման" են:

Ազգային գիտակցութիւնը բացակայում է կամ ամբողջովին կլանուած է, ծածկուած կրօնական գիտակցութիւնով: Այն աստիճանի, որ փոխարէն ասելով՝ թուրքական զրականութիւն, դպրոց, թատրոն, եւայլն, ասում են՝ մուսուլմանական զրականութիւն, դպրոց, թատրոն: Աւելին եւս. ասում են «մուսուլմանական լեզու»: Եւ վերջապէս՝ «մուսուլմանական ազգ»: Այս տարբերակ աւտոյայտութիւնը ինձ պատահել է լսել շատ յաճախ Թուրք մտաւորականների բերանից եւ կարգալ Պաքուի թուրքական թերթերի մէջ:

Անցեալներում (ինչպէս եւ մինչեւ հիմա ժողովրդական լայն զանգուածների մէջ) սա պարզապէս գիտակցութեան պակասութիւն է եղել. իսկ վերջի շրջանում, քաղաքակրթութեան թուրքերի կողմից, արդէն քաղաքական խաղ է, էութիւնների գիտակցական ու միտումնաւոր քողարկում:

Բայց եւ այնպէս՝ գիտակցական թէ՛ անգիտակցական՝ չփոթը տեղի ունի. ազգը նոյնացւում է կրօնքի հետ, ազգը հասկացւում է իրբեւ դաւանական միութիւն»<sup>1</sup>:

Ռուսական Կայսրութեան Փանթուրանիստներուն համար, 1905 թուականը կարելի է նկատել անկիւնադարձային: Այդ թուականին, ռուս-նաբոնական պատերազմին Ռուսաստան կը պարտուի, ինչպէս նաեւ տեղի կ'ունենայ Ռուսական Ա. Յեղափոխութիւնը: Այսինքն՝ կը հաստատուի թէ Ռուսիա արտաքին աշխարհին առջեւ չի ներկայացներ անպարտելի ոյժ մը եւ ներքինապէս ալ կը բոլորէ անկայուն վիճակ մը. երեւոյթներ՝

1) Փանիսլամիզմը, իսլամ կրօնքը դաւանող ժողովուրդներու քաղաքական միաւորումով յառաջ եկած կայսրութեան գաղափարախօսութիւնն է: Փանիսլամիզմի ականաւոր գաղափարախօսներն են՝ ձեմալ էլ Տիւս Ալ Աֆղանի (պահլանողական թեւ), Մուհամմատ Ապուս (բարենորոգչական թեւ) եւ Սայիտ Ահմատ Խան (լուսաւորչական թեւ): Փանիսլամիզմ եզրը առաջին անգամ օգտագործուած է Ֆրանց Ֆոն Վերների կողմէ «Die Den "Panislamismus" In Ihr Programm Aufgenommen Hat» գիրքին մէջ եւ ապագային ընդհանրացուած է Կապրիէլ Չարմըզի կողմէ:

1) «Ազգ եւ Հայրենիք», Յ. Քաջազունի, Պէյրութ, 1979, էջ 33-34.

որոնք պատմականորեն, կայսրութիւններու անկման գլխաւոր պատճառները կը նկատուին եւ բնականաբար այդ կայսրութիւններուն մէջ յառաջ եկած անջատողական շարժումներուն վրայ կ'ունենան ոգեւորիչ ազդեցութիւն: Ուստի, բնաւ պատահական չէ որ 1905էն ետք Ռուսաստանի մէջ Փանթուրանիզմը աշխուժութիւն կ'արձանագրէ: 1905 Օգոստոսին, Նիժնի Նովկորոտի մէջ, տեղի կ'ունենայ համառուսաստանեան իսլամներու Ա. Համագումարը, 150 պատգամաւորներով: Բ. Համագումարը տեղի կ'ունենայ 1906 Յունուարին, Փեդերգպուրկի մէջ, 100 պատգամաւորներով: Գ. Համագումարը կը գումարուի 1906 Օգոստոսին, Նիժնի Կորոտի մօտ 800 պատգամաւորներով: Վերջինս, արտօնուած համագումար մըն էր, որովհետեւ, մինչ այդ Պետական Դումայի (խորհրդարանի) իսլամ ներկայացուցիչները այս պահանջով ադմուկ բարձրացուցած էին: Համագումարը կ'որոշէ.— «Թրքերէնը ընդունել իբրեւ ազգային լեզու եւ որդեգրել Օսմանեան Կայսրութեան մէջ գործադրուած կրթական զրուժիչը Ռուսաստանի բոլոր "իսլամ համայնքներուն" համար»:

Այս շրջանի Փանթուրանիստ-Փանիսլամիստներու աշխոյժ գործունէութեան արտայայտութիւններէն են.—

— Ուսանողական, բարեսիրական, երիտասարդական եւ այլ անուններու տակ գործող կազմակերպութիւններու ծլարձակումն ու աշխոյժ գործունէութիւնը:

— Աւելի քան 50 հանդէսներու եւ թերթերու հրատարակութիւնը: (Այդ թերթերուն մէջ մինչեւ իսկ կը քննարկուի թէ գալիք թրքական կայսրութեան մէջ ո՞ր թրքերէնը պէտք է ըլլայ պետական լեզուն՝ թաթարերէնը, խրիւրդերէնը, թէ՛ թրքերէնը):

— Գործիչ-ֆարոգիչներու խիտ երթեւեկը Ռուսաստան-Թուրքիա-Եւրոպայի վտարանդիներ գիծին վրայ:

— Պետական Դումայի (խորհրդարան) օգտագործումը որպէս օրինաւոր ամպիոն եւ հեռաւոր շրջաններու մէջ գրտնըւող գործիչներու մէկտեղման յարմարագոյն հաւաքավայր: Օրինակի համար, 1910ին, պատգամաւոր Խալիլ Պէյ Խասմահմետով, Դումայի մէջ առաջարկ կը բերէ "թաթար" անուանումին տեղ "թուրք" օգտագործել, որ սակայն կը մերժուի որպէս ձգտումնաւոր Փանթուրանական:

Ճիշդ է որ ցարիզմը կը փորձէ ազգային զարթոնքներու

պատճառով յառաջ եկած ներազգային գժտութիւնները յեղափոխական զարթոնքին դէմ գործածել (այս ծիրին մէջ պէտք է դիտել 1905ի հայ-թաթարական բախումները), սակայն քաղաքական այս հաշուարկը սահմանափակ նշանակութիւն ունէր միայն: Ցարական իշխանութիւնները, ազգայնական-անջատողական շարժումներուն հանդէպ ամենաթող չէին: Ուստի, հալածանքներն ու պետական արգելքները կը խստանան յատկապէս թուրք-թաթարական ազգայնական շարժման դէմ: Օրինակի համար կանխամտածուած ընտրական օրէնքի մը հաստատումով, Պետական Դումայի մէջ կը նուազի թաթար պատգամաւորներուն թիւը: (1906ի Պետական Ա. Դումայի 25 եւ 1907ի Պետական Բ. Դումայի 35 պատգամաւորներուն փոխարէն, 1907ի Պետական Գ. Դումայի մէջ տեղ կը գտնեն 10ը, իսկ 1912ի Պետական Դ. Դումայի մէջ՝ 6 պատգամաւորներ): Կ'արգիլուի իսլամ այն հոգեւորականներուն գործունէութիւնը, որոնք իրենց կրօնական դաստիարակութիւնը ստացած էին Ռուսաստանէն դուրս, եւայլն:

Այս իրավիճակը, վեր ի վարոյ, կը շարունակուի մինչեւ Համաշխարհային Ա. Պատերազմ կամ Ռուսական Յեղափոխութիւն:

## Փանթուրանիյմի Չարգացումը Օսմանեան Կայսրութեան Մէջ

1876 Մայիսին, Սուլթան Ապտուլ Համիտ, յեղաշրջման միջոցով վար կ'առնէ Սուլթան Ապտուլ Ազիզը եւ ինք կը բազմի Օսմանեան գահին վրայ: Սա, կը նկատուի «Օսմանիզմի» յաղթանակը պահպանողականութեան դէմ: Որովհետեւ, մինչ այդ, Օսմանեան Կայսրութեան տարածքին՝ յատկապէս բուրքերուն մօտ՝ սկսած էր ձեւաւորուիլ ֆաղափական նոր հոսանք մը՝ «Օսմանիզմը» եւ այդ հոսանքէն մարմին առած էր «Նոր Օսմաններ» կազմակերպութիւնը: «Նոր Օսմանները» լաւ կը տեսնէին թէ Օսմանեան երբեմնի հզօր կայսրութիւնը բռնած է տեղատուութեան ճամբան: Այն կը ֆայտայուի. ենթակայ է արտաքին միջամտութիւններու եւ ներքին տագնապներու: «Նոր Օսմաններ»ուն գլխաւոր մտահոգութիւնը եւ նպատակը կը դառնայ Օսմանեան Կայսրութեան ամբողջականութեան պահպանումը: Այդ նպատակին համար՝ յատկապէս կայսրութիւնը ներքին ցնցումներէ զերծ պահելու նպատակով՝ անոնք անհրաժեշտ կը գտնէին կատարել ներքին բարեփոխութիւններ, առաջնահերթաբար՝ հաստատել Սահմանադրութիւն եւ Խորհրդարան:

Սուլթան Ապտուլ Համիտ իր իշխանութեան առաջին երկու տարիներուն Օսմանիստ էր (այդ տարիներուն կը գործէ Սահմանադրութիւնը (Միդիատեան) եւ Խորհրդարանը): Շատ շուտով, ան ամբողջապէս կը հեռանայ կայսրութիւնը բարեփոխութիւններու ճամբով փրկելու գաղափարէն եւ ամբողջապէս կ'իւրացնէ Փանիսլամիզմի գաղափարախօսութիւնը: Այդ շրջադարձը կը կատարուի ռուս-թրքական պատերազմի անմիջական ազդեցութեան տակ. պատերազմ մը՝ որուն հետեւանքով Օսմանեան Կայսրութեան կ'անջատուին Եւրոպական ֆրիստոնէտընակ շրջանները:

Սուլթան Համիտի շրջադարձը Օսմանիզմէն կը բա-

ցատրուի կարգ մը պատճառներով.---

1) Պատերազմը եկած էր փաստելու թէ Կայսրութեան ֆրիստոնեայ տարրը, համապետական շահերու տեսակէտէն, անբարեյոյս էր: Բարեկարգումներու ճամբով ֆրիստոնեայ ժողովուրդներուն ազատագրական ձգտումներուն առաջին առնելը ժամավանառութիւն էր միայն: Կայսրութեան վստահելի տարրը կը մնար իսլամութիւնը:

2) Սուլթանը իր ձեռքին ունէր անսահմանափակ իշխանութիւն: Ան չէր կրնար համամիտ ըլլալ որ Եւրոպայէն ներմուծուած Խորհրդարան, Սահմանադրութիւն եւ նման հաստատութիւններ սահմանափակէին այդ իշխանութիւնը:

3) Սուլթան Համիտ խաւարամիտ հալածախտ մըն էր. անելին, շրջապատուած էր կրօնամոլ, հոգեհմայ, աստղագուշակ խաւարամիտներով, որոնց համար բարեկարգչական նըւազագոյն ձգտումն իսկ սատանային կողմէ խարդաւանք կը նկատուէր:

Հոս կը ծագի անմիջական հարցադրումը. ինչո՞ւ Սուլթան Համիտ երբ կը հրաժարի Օսմանիզմէն, չ'որդեգրեր Փանթուրանիզմը, այլ կը դառնայ Փանիսլամիզդ: Բնական է, այս պարագան եւս ունի իր բացատրութիւնը.---

1.— Ապտուլ Համիտ, ըլլալով Օսմանեան Կայսրութեան Սուլթանը, նաեւ ամբողջ իսլամական աշխարհին Խալիֆան էր (1516—1517 թուականին երբ բուրքերը կը գրաւեն Եգիպտոսը, Մեմլուկներու ձեռքէն կ'առնեն Խալիֆայի իրաւունքը), ուստի անոր կրօնական իշխանութիւնը կը տարածուէր ամբողջ իսլամական աշխարհին վրայ: Դժուար էր համոզուիլ նման անծայրածիր իշխանութիւն մը կորսնցնելու գաղափարին հետ. մանաւանդ որ այդ իշխանութեան սահմաններուն մէջ կ'իյնար «Ճիհատ» յայտարարելու իրաւունքը, որմէ կրնար օգտուիլ Խալիֆան՝ եթէ պայմանները պարտադրէին այդ:

2.— Օսմանեան Կայսրութեան իսլամ ազգաբնակչութեան մեծամասնութիւնը ոչ-թուրքեր էին՝ հիւմնականին մէջ արաբ եւ ֆիւրտ (էապէս տարբեր պատկեր մը Ռուսական Կայսրու-

քեան հետ բաղդատած): Փանթուրանիզմի որդեգրումը որպէս պետական գաղափարախօսութիւն, կրնար ոչ-թուրք իսլամ տարրին զգացումները գրգռել՝ սպառնալով կայսրութեան ամբողջականութեան:

3.— Սուլթան Համիտի փոփոխումները, Պարսկաստանի եւ Աֆղանիստանի վրայով կ'երկարէին մինչեւ Հնդկաստան. այս ծաւալողապաշտ ֆաղափականութեան համար որպէս տեսութիւն կրնար ծառայել Փանիսլամիզմը եւ ոչ Փանթուրանիզմը:

4.— Օսմանեան Կայսրութիւնը շօշափելի, գոյութիւն ունեցող կայսրութիւն մըն էր. մինչդեռ Թուրանական Կայսրութիւնը երազային էր տակաւին եւ անոր ստեղծումը կ'անցնէր Ռուսաստանի հետ առնակատումի ընդմէջէն, բան մը՝ որմէ մեծապէս կը զգուշանար Սուլթան Համիտ:

Յամենայն դէպս, այս եւ այլ պատճառներով, Սուլթան Համիտի օրով, Փանիսլամիզմը կը դառնայ պետական գաղափարախօսութիւն: Այս իրականութիւնը հաստատող բազմաթիւ փաստերէն եւ եղելութիւններէն յիշատակեմք միայն մէկը.— 1892էն կը սկսին կազմուիլ յատուկ գորագունդեր, որոնք Սուլթան Համիտի անունով կը կոչուին «Համիտեան Գունդեր» (Համիտիէ Ալայի): Գունդերուն կրնային մասնակցիլ միայն իսլամները (ֆրիստոնեաները առ հասարակ գէնք կրելու իրաւունք չունէին): Համիտեան գունդերը, որոնք ֆրիստոնեայ բընակչութիւնը ննջելու, ընկնելու եւ ընդհանրապէս զայն վերացնելու նպատակով ստեղծուած զինուորական միաւորներ էին, իրապէս ալ, իրենց կիսա-սանձարձակ, կիսա-անհակալըշիո գործունէութեամբ, կը դառնան պատուհաս ֆրիստոնեայ ազգաբնակչութեան գլխուն: 1899ին արդէն կը գործէին համիտեան 63 գորագունդեր, որոնցմէ 50ը կազմուած էր ֆիրտերէ, 9ը՝ արաբական ծագում ունեցող ցեղախումբերէ, 3ը՝ ֆաւափափախներէ եւ մէկը՝ թուրքմէներէ:

Միւս կողմէ, 19րդ դարու վերջաւորութեան եւ 20րդ դարու սկիզբին, Օսմանեան Կայսրութեան մէջ ծնունդ կ'առնէ եւ կը զարգանայ ֆաղափական նոր շարժում մը՝ Երիտթուրքիւնը: Այս շարժումէն ծնունդ կ'առնէ Իթթիհատ Վէ Թերաֆէր Կուսակցութիւնը, որուն, ապագային, շրջանէն ներս կը վերա-

պահուի կարելոր դերակատարութիւն մը: Երիտթուրքական շարժումը, իր գաղափարախօսական կազմով խայտարղէտ էր: Անոր մէջ կային Օսմանիստներ, Բարեկերպականներ, Փանթուրանիստներ, Փանիսլամիստներ եւ տարբեր ազգերու ազատագրական պայքարի ներկայացուցիչներ:

Գաղափարախօսական այս բազմազան հոսանքները սակայն իրար հետ համաձայն էին մէկ գլխաւոր հարցի շուրջ՝ Սուլթան Ապտուլ Համիտի գահընկեցութիւնը: Այդ նպատակը կ'իրականանայ: 1908ին, պետական հարուածի միջոցով, Իթթիհատ Վէ Թերաֆէր Կուսակցութիւնը կը յաջողի տիրանալ Օսմանեան Կայսրութեան իշխանութեան:

Իթթիհատի իշխանութեան գլուխ գալով, Օսմանիզմը կը դառնայ պետական գաղափարախօսութիւն: Օսմանիզմ հասկացողութեամբ սակայն, Երիտթուրքերը, Օսմանեան Կայսրութեան ամբողջականութիւնը պահպանելը նկատի չունէին միայն: Անոնք նպատակադրած էին նոր ազգի մը՝ Օսմանեան ազգի ձեւաւորումը: Այսինքն, ժխտելով Օսմանեան Կայսրութիւնը բաղկացնող ազգերուն պատմա-անհատականութիւնը, անոնք կ'ուզէին արհեստականօրէն ծնունդ տալ համայնակուլ Օսմանեան Ազգին: Ժամանակաշրջանի ամենէն ակնառու դերակատարներէն եւ ժամանակաշրջանը լաւագոյնս վերլուծողներէն Ստեփան Սապահ Գիւլեան, նկարագրելով Իթթիհատի ղեկավարութեան հետ Հնչակեան Կուսակցութեան ղեկավարութեան ունեցած մէկ հանդիպումը, կը գրէ.— «Մենք փորձեցինք համոզել թէ Օսմանեան ազգ չկայ: Կայ Օսմանեան Կայսրութիւնը կազմող տարբեր ժողովուրդներ: Օսմանեան Կայսրութիւնը եթէ կ'ուզէ գոյատեւել, պէտք է ապահովէ բաղկացուցիչ ազգութիւններուն բնական զարգացման պայմանները: Սակայն, այս տեսակէտները, բացարձակապէս ընդունելի չէին անոնց կողմէ»<sup>1</sup>:

Երիտթուրքերը, Օսմանիզմը պետական գաղափարախօսութիւն ունենալով հանդերձ ֆաղափական գործնական կեանքին մէջ, նարպիկօրէն կ'օգտագործէին իրենց ներսիդին գոյութիւն ունեցող գաղափարական այլակարծութիւնները: Անոնք Օսմանեան Կայսրութեան ֆրիստոնեայ ժողովուրդներուն հետ

1) Օսմանիզմի գաղափարախօսութեան մասին տես Ստեփան Սապահ Գիւլեանի «Երիտասարդ Թուրքիա» գիրքը:

իրենց յարաբերութեան մէջ Օսմանիստներ եւ Բարենորոգչականներ էին. իսլամ ժողովուրդներու հետ իրենց յարաբերութեան մէջ՝ Իսլամիստներ. իսկ թուրք տարրին հետ իրենց յարաբերութեան մէջ՝ Թուրքիստներ: Այս բազմադէմ ֆաղափականութեան վառ օրինակներէն է Իթթիհատ Վէ Թերաֆը Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան անդամ, ինֆիլիք Օսմանիստ եւ Բարեկարգիչ ներկայացնող Պահաէտտին Շաֆիթի գրած նամակը «Կովկասի Իսլամ Եղբայրներուն», 1906 թուականին՝ տակաւին Իթթիհատի իշխանութեան գլուխ գալէն առաջ: Այդ ծրագրային նամակը իր նախաբանին մէջ կ'ըսէ.— «Ստացանք ձեր նամակը, որ կարդացինք մեր կազմակերպութեան ժողովին մէջ: Միաձայնութեամբ կ'ողջունենք իսլամական եւ ազգային իրաւունքներու պաշտպանութեան համար ձեր կողմէ Կովկասի բոլոր վայրերուն մէջ գիտական ու քաղաքական ընկերութիւններու ստեղծումը, դպրոցներուն եւ հրատարակութիւններուն մէջ օսմանեան թուրքերէն գործածելը, մեզի հետ յարաբերութիւնները սերտացնելու համար Եւրոպա ներկայացուցիչներ ղրկելու ձեր մտադրութիւնները»: Ապա, իր 7րդ վերջին կէտին մէջ կ'եզրակացնէ.— «7— Մեր թշնամին հանդիսացող եւ ձեզ ուսերու լուծէն ազատելուն դէմ ամենամեծ արգելքներէն մէկը հայերն են: Մշակեցէք կանոնաւոր ծրագիր մը անոնց ջլատելու համար»<sup>1</sup>:

Այս ժամանակաշրջանի գաղափարախօսը կարելի է նկատել Եուսուֆ Ահչուրան, որուն «Իւչ Թարգի Սիասէթ» (Երեք Ձեւի Քաղաքականութիւն) յօդուածը, տպուած Գահիթէի «Թուրք» հանդէսին մէջ 1904 Յունիսին, կը դառնայ գործունէութեան ծրագիր: Այդ յօդուածով, Ե. Ահչուրա կը պաշտպանէ այն տեսակէտը, որ ապագայ Օսմանեան Կայսրութիւնը իր ֆաղափականութիւնը պէտք է մշակէ երեք զուգահեռ գիծերով.— 1) Օսմանականութիւն, 2) Իսլամութիւն, 3) Թրքութիւն:

Իշխանութեան գլուխ գալէն քանի մը տարի ետք, պետական գաղափարախօսութեան տեսակէտէն, խոր եւ էական շրջադարձ մը կը կատարուի Օսմանեան վերնախաւէն ներս: Օսմանիզմը, իր ե՛ւ ազգայնամոլական ե՛ւ բարեկարգչական տարատեսակներով, ամբողջապէս կը նետուի պատմութեան աղբա-

նոցը եւ իր տեղը կու գայ բռնելու Փանթուրանիզմը: Ի՞նչ պատճառներով եւ ի՞նչ ներգործութիւններու ազդեցութեան տակ կը կատարուի այս փոփոխութիւնը:

Ա) Երիտթուրք դեկաւարները կը համոզուին որ երկդիմի ֆաղափականութեամբ եւ բարեկարգչական խոստումներով կարելի չէ բաղկացուցիչ ազգերու ազատագրական ձգտումներուն առաջին առնել: Ազատագրական ձգտումներ կ'արտայայտեն ոչ միայն քրիստոնեայ ժողովուրդները, այլեւ՝ իսլամները, յատկապէս արաբները: Այսինքն, գործնական ֆաղափականութեան եւ ռազմավարական տեսակէտներէն յուսալի եւ վստահելի տարր կը մնայ միայն թուրքը:

Բ) Կայսրութեան բոլոր ժողովուրդներն ալ կ'ապրին ազգային ինքնագիտակցութեան զարթօնք մը, որուն որպէս հակազդեցութիւն, հրապարակ կու գայ թրքական ազգայնականութիւն մը, ծանօթ Թիւրքիլիւիք անունով: Թիւրքիլիւիքը, որ կը վայելէ պետական հովանաւորութիւն, ֆաշալերանքի եւ ֆինանսաւորում, իր դրսեւորումը կ'ունենայ հոգեւոր գործունէութեան բոլոր ասպարէզներուն մէջ՝ մշակոյթ, արուեստներ, գրականութիւն, լեզուաբանութիւն, կանանց—ուսանողական—երիտասարդական կազմակերպութիւններ եւ այլն: Հրապարակ կու գան ակումբներ՝ (Օջախներ), կազմակերպութիւններ, թերթեր, եւ այլն: 1911էն, Պուլսոյ մէջ կը գործէ «Թուրանեան Գիտահետազօտական Կեդրոնը»: Թիւրքիլիւիքի ազգայնամոլական հոսանքը լայն տարածում կը գտնէ Օսմանեան թուրքերուն մօտ: Աւելորդ է ըսել թէ թքու ազգայնամոլական Թիւրքիլիւիքը քանի մը քայլ կը բաժնէր Փանթուրանիզմէն, որուն հասնելու համար մանրատոտիկ «տա՛տի՛» մը պէտք էր միայն...<sup>1</sup>

Գ) Առաջին օրէն իսկ, Երիտթրքական շարժման մէջ տեղ կը գրաւեն Կովկասեան ծագումով ականաւոր թաթար Փանթուրանիստներ, ինչպիսիք են Ա. հիմատ Աղայեւ, Եուսուֆ Ահչու-

1) Թիւրքիլիւիք շարժման մասին տես Զարեանդի «Միացեալ, Անկախ Թուրանիա», Հրաչիկ Սիմոնեանի «Թուրք Ազգային Պուրժուազիայի Գաղափարաբանութիւնը եւ Քաղաքականութիւնը», Ստեփան Պողոսեանի «Փանթուրանիզմը երէկ եւ Այսօր» գիրքերը:

1) «Յեղասպան Թուրքը», Հայկազն Ղազարեան, Պէյրութ, 1968, էջ 153—154:

րա, Գասփիրսկի, Թոփերիպաշե եւ ուրիշներ: Ասոնց աշխոյժ եւ յարատեւ աշխատանքը կ'ըլլայ Փանթուրանիզմը բարձրացնել Օսմանեան Կայսրութեան պետական գաղափարախօսութեան մակարդակին՝ Կովկասի իրենց ազգակիցներուն ազատագրման համար ամուր յենակէտ մը ստեղծելու առաջադրանքով:

Գ) Սուլթան Ապտուլ Համիտի օրերէն արդէն, եւրոպացի արեւելագէտները, որոնց մէջ յայտնի անուններ՝ Armenius Vambery <sup>1</sup>, Leon Cahun <sup>2</sup>, Costanty Borzecky <sup>3</sup>, J. De Guignes <sup>4</sup>, David Lemley <sup>5</sup>, Max Muller <sup>6</sup> եւ ուրիշներ, տեսական գետնի վրայ կ'ապացուցէին թէ Օսմանեան թուրքերն ու Ռուսաստանի թաթարները ցեղագրական նոյն ծագումը ունին: Այս տեսակէտը, որ սկզբնական շրջանին արհամարհանքով կ'ընդունուի Օսմանեան թուրքերուն կողմէ – ի՞նչպէս Օսմանեան ազնիւ ծագումով թուրքը եւ կովկասեան խաժամուժ թաթարը նոյն նախահայրերը կրնային ունենալ – ապագային կը դառնայ Փանթուրանիզմի տեսական հիմնաւորումը, այն համոզիչ առաւելութեամբ որ տեսակէտը յղացողները թուրքեր չէին՝ այլ եւրոպացիներ: Զօր. Մոլթէ, առաջինն էր, որ 1842ին, Օսմանեան Կայսրութիւնը հակառուս դարձնելու նպատակով, վերջիններու ցոյց կու տար Փանթուրանիզմի նամբան:

Այն պարագան, որ եւրոպայի արեւելագէտներէն եւ Իթթիհատ Վէ Թերաֆը Կուսակցութեան ղեկավարներէն շատեր հրէական ծագում ունէին եւ անդամ էին մասոնական օթեակներու, Փանթուրանիզմի զարգացման եւ անոր արդիւնքը եղող հայկական ջարդերուն պատասխանատուութեան մէջ, հրեայ-սիոնիզմ-մասոն առանցքին հանդէպ լուրջ կասկածներ կ'առաջացնէ: Շատ մը հեղինակներ յատուկ ուշադրութիւն կը

դարձնեն թուրք-սիոնիզմ-մասոն առնչութիւններուն<sup>1</sup> վրայ եւ երբեմն կը հասնին սուր եզրայանգումներու: Օրինակի համար պատմաբան Ղայս Ճաուատ ԱլԱզաուլի կը գրէ. – «Թրքական ազգայնականութեան հիմնադրութեան, բացայայտման եւ դըր-դապատճառներուն ուղղութեամբ մեր թափած ճիգերը արդիւնաւորուեցան մեզ դնելով յոյժ կարեւոր իրականութիւններու դիմաց, որոնց հաւաքագրումէն, դասաւորումէն եւ վաւերագրական նիւթերով հաստատելէն ետք կրնանք ըսել. – թուրք ազգայնական մտածողութիւնը արեւմուտքի ցեղաբաններուն եւ հրեաներուն գործն է»<sup>2</sup>:

Կասկածէ դուրս է որ հրեաները մասնայատուկ ձեւով շահագրգռուած էին Օսմանեան Կայսրութեան նակատագրով եւ ջանք չէին խնայեր այդ կապակցութեամբ տեղի ունեցող փա-

- 
- 1) Այսօրինակ հեղինակներէն կարելի է յիշել. –
    - Ernest Ramsaur («The Young Turks - Prelude To The Revolution Of 1908»)
    - د. صالح زهر الدين <<الارمن والعرب بين الطورانية والصهيونية>>
    - جهاد صالح <<الطورانية التركية – بين الاصولية والفاشية>>
    - د. عنايت الله رضا <<التوسعية التركية في الوطن العربي وإيران>>
    - د. حسين عمر حماده <<شهادات ماسونية>>, <<الادبيات الماسونية>>
    - محمد علي الزعبي <<الماسونية في العراق>>
    - مروان بحيري, Journal Of Palestine Studies, 1977 XII vol.
    - Մեվլան Զատէ Բիֆաթ, («Օսմանեան Յեղափոխութեան Մութ Մալքերը»)
    - د. حسان علي حلاق <<موقف الدولة العثمانية من الحركة الصهيونية>>
    - د. مرغريت حلو <<العلاقات التركية – الاسرائيلية>>
    - إيلي قدوري Middle Eastern Studies, vol. 7, 1971
    - د. حنا سعيد الحاج <<العلاقات الاسلامية – الارمنية منذ الفتح العربي حتى اليوم>>
    - محمد حرب ماسونى, 1991, «شأنك»
    - قيس جواد العزاوي <<الدولة العثمانية – قراءة جديدة لعوامل الانحطاط>>
    - Փրոֆ. Զոն Կիրակոսեան, («Երիտթուրքերը Պատմութեան Դասատանի Առաջ»)
    - Գասպար Տէրտէրեան, («Սիոնիզմի եւ Բանթուրքիզմի Առնչութիւնները եւ Անոնց Սպառնալիքը Հայաստանի Լինելութեան»)
    - Փիեռ Հերես (Պետրոս Սիմոնեան), ("La Dernier Bal Du "Grand Soir" Ou "La Republique Universelle"),
    - Լեւոն Վարդան, («Շիրակ» ամսագիր, 1984, թիւ 4-5)
    - سمير رفعت <<اضواء على القضية الارمنية>>
  - 2) قيس جواد العزاوي, «الدولة العثمانية – قراءة جديدة لعوامل الانحطاط», 1994, էջ 127:

---

- 1) «La Turquie d'Aujourd'hui et D'avant Quarante Ans» եւ «Voyage D'un Jeune Derviche Dans l'Asie Centrale»
- 2) «Introduction a l'Histoire De l'Asie»
- 3) «Les Turcs Anciens et Modernes»
- 4) «Histoire Des Turcs, Des Mongols et Des Huns»
- 5) «Grammaire Turque»
- 6) «The Languages Of The Seat Of War In The East With A Survey Of 3 Families Of Languages, Semitic, Arian And Turanian».

ղափական իրադարձութիւններուն մէջ դերակատարութիւն մը ունենալէ: Փաստօրէն, «խոստացեալ հողեր»ը՝ Պաղեստին՝ մաշկը կազմէր Օսմանեան Կայսրութեան, որուն քայքայումէն կախեալ էր անոնց ապագայ տունդարձը:

Ե) Եւրոպացի արեւելագէտներու գիտական պրպտումները գերծ չէին քաղաքական միտումներէ: Միջին Արեւելքը եւ Հիւսիսային Ափրիկէն՝ այսինքն Օսմանեան Կայսրութեան հարաւային տարածքները՝ ինկած էին Անգլիոյ եւ Ֆրանսայի կենսական շահերու ոլորտին մէջ (բան մը, որ Ա. Աշխարհամարտէն ետք ապացուցուեցաւ Սայֆա-Փիֆոյի համաձայնագրով): Որպէսզի Օսմանեան Կայսրութեան քայքայումը արագ ընթանար եւ Օսմանեան պետական մտածողութիւնը դիւրութեամբ հրաժարէր այդ տարածքներէն, պէտք էր բրբական միազանգուածութեան առջեւ բանալ արտրժաբեր նոր հորիզոններ: Այդ՝ Թուրանական Կայսրութիւնը կրնար ըլլալ: Միւս կողմէ, բրբո-նուսական հակամարտութիւն մը, գորաւոր հարուած մը կ'ըլլար Ռուսիոյ բիկունքին (փորատակին), ու կը տկարացնէր վերջինիս դիրքերը Ֆրանսայի եւ Անգլիոյ հետ իր մրցակցային առնակատման մէջ: Այս դիտանկիւնէն, ճիշդ կը նկատուի նաեւ պատմաբան Ա. համատ Ալ Սաիտ Սուլէյման երբ կը գրէ. — «Այս զաղափարախօսութեան (Փանթուրքիզմ) հիմնադիրը հունգար արեւելագէտ Վամպէրին էր, 1868 թուականէն մինչեւ 1874: Անգլիացիները որդեգրեցին այդ որպէսզի Օսմանեան թուրքերէ եւ Արեւելեան թուրքերէ կազմուած մարդկային զանգուած մը յառաջ բերեն՝ հարուածելու համար Կեդրոնական Ասիոյ վրայ աւելցող ուսական ազդեցութիւնը»<sup>1</sup>:

Մէկ խօսքով, միջազգային քաղաքականութեան մէջ տեղ գտած միջ-պետական յարաբերութիւնները եւս բոյլատու եւ քաղաքական էին որպէսզի Օսմանեան Կայսրութեան պետական գաղափարախօսութիւնը շրջադարձ կատարէ Օսմանիզմէն դէպի Փանթուրանիզմ:

Զ) Շրջադարձը հիմնապէս տեղի կ'ունենայ 1912ին:

1911ին Օսմանեան Կայսրութիւնը կը պատերազմի Իտալիոյ դէմ՝ որուն որպէս արդիւնք կը կորսնցնէ Լիպիան: 1912ին տեղի կ'ունենայ Պալքանեան Պատերազմը՝ որուն որպէս ար-



Փանթուրանիստներու կողմէ հետապնդուած տարածքները ցոյց տուող քարտէս մը:

դիւնք եւրոպական տարածքներ կ'անջատուին Օսմանեան Կայսրութենէն:

Թուրք վերնախաւի համար պարզ կը դառնայ թէ Օսմանեան Կայսրութեան ամբողջականութիւնը պահպանելու հարցը դրուած է անհնարութեան առջեւ: Իւրաքանչիւր պատերազմ ոչ թէ նոր հողեր է որ կը կցէր Կայսրութեան (այն ինչին որ սովոր էր բուրքը), այլ՝ եղածներն է որ կ'անջատուէին Կայսրութենէն:

Անդրադառնալով Պալքանեան Բ. Պատերազմին ձգած բարոյա-հոգեբանական ազդեցութեան վրայ, Իքսթիատի ղեկավարներէն Հուսէյն Ճահիտ կը գրէ. — «Պալքանեան Պատերազմը Թուրք ժողովուրդի գոյութեան տեսակէտէն ֆիզիքական պարտութիւն մը եղաւ, բայց, բարոյական մեծ յաղթանակ մը տուաւ»<sup>1</sup>:

Այս շրջադարձային հանգրուանին վրայ ուշադրութիւն բերեալ շատ մը պատմաբաններէն Bernard Lewis կը գրէ. — «Կայսրութեան անկման {զաղափարը} նոր էր եւ շատերը շուս-

1) أحمد السعيد سليمان ، «التيارات القومية والدينية في تركيا المعاصرة» ، فياسيرت، 1961، էջ 23:

1) «Փանթուրքիզմը երէկ եւ Այսօր», Ստեփան Պօղոսեան, Երեւան, 1990, էջ 16:

րած էին: Փոքր չըջազիծով) ազգային-նահանգ մը անբաւարար եւ անգրաւիչ կը գտնէին: Փանթուրքական շրջանակներուն մէջ եւ մասնաւորաբար թաթար վտարանդիներուն մօտ, այս մտահոգութիւնը առօրէական էր: Անոնք կը հաւատային թէ նոր կայսրութեան մը ճակատագիրը կը սպասէ թուրքիոյ՝ որուն պարտականութիւնն է ոչ թէ վերագարթնել բազմալեզու եւ բազմազգ Օսմանեան կայսրութիւնը, այլ ստեղծել թուրք եւ թաթար ժողովուրդներէ բաղկացած նոր, Փանթուրքական կայսրութիւն մը, որ կը տարածուի Եգէական Մովէն Չինական Մով»<sup>1</sup>:

Այսինքն, ԿԱՅՄՐՈՒԹԵԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՀԵՌԱՆԿԱՐԸ ԿԸ ՓՈՒԱՐԻՆՈՒԻ ՆՈՐ ԿԱՅՄՐՈՒԹԻՒՆ ՄԸ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՈՎ: Այդ, Թուրանեան կայսրութիւնը կրնար ըլլալ միայն:

Ահա գլխաւոր այս պատճառներով, թրքութեան երկու հատուածները, Օսմանեանը (իր պետական գաղափարախօսութեամբ) եւ Ռուսականը (իր ազգային ձգտումներով), պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով կը հանդիպին ու կ'ողջագուրեն զիրար գաղափարական նոյն ենթահողին՝ Փանթուրանիզմին վրայ:

Ռուսաստանի թրքութիւնը, Օսմանեան թրքութեան մէջ կը տեսնէ արեւակիցներ, որոնք Մեծն Թուրանի կայսրութեան ստեղծման համար ունին ռազմական եւ դիւանագիտական անհրաժեշտ հնարաւորութիւնները: Իսկ Օսմանեան թուրքերը, յաջս Ռուսաստանի թրքութեան, կը տեսնեն այն շօշափելի տարրը, որուն վրայ կրնար ձեւաւորուիլ գալիք կայսրութիւնը:

Եւ որպէս պատմական օրինաչափութիւն, ժամանակը կը ծնի նաեւ իր գաղափարախօսը: Հրապարակ կու գայ Փանթուրանիզմի մեծագոյն գաղափարախօսը՝ Ջիա Կէօֆ Ալի:

Ջիա Կէօֆ Ալի (1876-1924), իր հաղափական-գաղափարական աշխատասիրութիւնները հրատարակած է հիմնականին մէջ 1911-1918 եւ 1922-1924 տարիներու միջոցին: Այսինքն, Ա. հանգրուանին՝ Օսմանեան կայսրութեան մէջ Փանթուրանիզմի զարթոնքին, անոր պետական գաղափարախօսութեան

1) «The Emergence Of Modern Turkey», Bernard Lewis, London, 1968 էջ 358:

վերածման եւ Ա. Աշխարհամարտին այդ կենսագործելու հնարաւորութեան պայմաններուն տակ, եւ Բ. հանգրուանին՝ Ա. Աշխարհամարտէն ետք Փանթուրանիզմի իրագործման ճախողութեան եւ անկէ պաշտօնապէս հրաժարելու պայմաններուն տակ: Ջիա Կէօֆ Ալիի կարեւոր յօդուածներէն հաւաքածոյ մը տպագրուած է 1959ին, Լոնտոն, «Թրքական Ազգայնականութիւնը եւ Արեւմտեան Քաղաքակրթութիւնը»<sup>1</sup> խորագրին տակ:

Ջիա Կէօֆ Ալիի ժամանակաշրջանին, Թուրքիոյ մէջ, իրար զուգահեռ գոյութիւն ունէին երեք գաղափարախօսութիւններ... Օսմանիզմ (որ իր մէջ ունէր բարեկարգչական-արդիականացման միտումներ), Փանիսլամիզմ եւ Փանթուրանիզմ: Այս ուղղութիւնները, որպէս զուգահեռ ընթացող հաղափական երեք գիծեր, կը կազմէին Եուսուֆ Աֆչուրայի գաղափարախօսութեան հիմքը: Ջիա Կէօֆ Ալիի մօտեցումը, քանի մը կէտերով, էապէս կը տարբերէր Աֆչուրայէն...-

ա) Կէօֆ Ալիի մօտ չկայ Օսմանիզմի գաղափարը: Ան, այս ուղղութեան վերցուցած է միայն անոր բարեկարգչական միտումը եւ զայն անուանած է Արեւմտականացում: Որովհետեւ, Կէօֆ Ալի, Օսմանեան կայսրութեան ամբողջականութիւնը (այնպէս ինչպէս որ կայ) պահպանելու կոչուած գաղափարախօսը չէր: Ան, հիմնադիրն էր Օսմանեան կայսրութիւնը մէկ այլ կայսրութեամբ փոխարինելու գաղափարախօսութեան:

բ) Թրքութիւնը, Ջիա Կէօֆ Ալիի մօտ, կը զարգանայ մինչեւ Փանթուրանիզմ:

գ) Իսլամը, Կէօֆ Ալիի մօտ կը մնայ որպէս կրօնք՝ Փանիսլամիզմի հետ շատ թոյլ արտայայտուած կապերով:


դ) Ջիա Կէօֆ Ալիի ստեղծած ամբողջ գաղափարախօսութիւնը կը յենի այն ըմբռնումին վրայ, թէ այս երեք ուղղութիւնները իրար հակասող (կամ իրար հետ զուգահեռ ընթացող) չեն, այլ՝ իրար ամբողջացնող: Անոնք կը կազմեն համընդհանուր գաղափարախօսութեան մը բաղկացուցիչ մասերը:

«Իսլամիզմի իմացականութիւնը, ճշմարիտ թուրքիզմը եւ իրական մոտեցումը իրար հետ հաշտ են եւ անոնք գոյակեցութեամբ ու փոխգործակցութեամբ գոյութիւն ունին ոչ միայն

1) «Turkish Nationalism And Western Civilization»:

ազգին անզհտակիցին մէջ, այլեւ, գիտակցական մակարդակի վրայ».— կը գրէ Կէօֆ Ալփ իր «Ընկերային Արժէքներ Եւ Հաստատութիւններ» յօդուածին մէջ<sup>1</sup>: Իսկ «կրօնք, կրթութիւն Եւ Ընտանիք» յօդուածին մէջ, Կէօֆ Ալփ կը գրէ.— «կրթութեան մէջ մեր հետապնդած նպատակները երեքն են.— Թուրքիզմ, Իսլամիզմ եւ Մոտեռնիզմ»<sup>2</sup>: Եւ որպէսզի այս գաղափարախօսութեան տայ պատմական ենթահող, ան, իր «Նոր Արեւելում» յօդուածին մէջ կը բացատրէ թէ Միջերկրականեան Աւազանի հին մշակոյթի կերտիչները թուրքերն էին (սումերներ, փիւնիկեցիներ, հիթիթներ, հեֆտսներ եւայլն), որոնք Սեմական եւ Արիական ժողովուրդներէն պարտուելով ժամանակաւոր ցահանջ մը կատարած են ու ապա վերադարձած շրջան եւ ընդունած իսլամական կրօնքը: Այսինքն՝ արեւմտեան քաղաքակրթութիւնը, թրքութիւնը եւ Իսլամը կը կազմեն թուրք ազգին 3 ստորոգելիները<sup>3</sup>: Այսպիսի մեկնարանութեամբ, Ջիա Կէօֆ Ալփ իւրովի կը լուծէ նաեւ տարածաշրջանէն ներս թուրքերու եկուոր թէ բնիկ ըլլալու հարցը: Որովհետեւ, եթէ հիմք ընդունուի շրջանէն ներս թուրքերու տեղաբնիկ ըլլալը, ապա, մեծ հարուած կը ստանայ Կեդրոնական եւ Մայրագոյն Արեւելի ժողովուրդներուն հետ անոնց ունեցած ցեղակցական կապի գաղափարը, իմա՝ Փանթուրանիզմը: Իսկ եթէ հիմք ընդունուի թուրքին ցեղակցական կապը յիշեալ ժողովուրդներուն հետ եւ անոր եկուոր ըլլալը՝ ապա, ինքնաբերաբար կը հաստատուի նաեւ անոր բռնագրաւիչ տարր ըլլալը եւ կ'արդարացուի բնիկ ժողովուրդներուն հողային պահանջները: Այս երկսայրի հարցադրումը Ջիա Կէօֆ Ալփ կը լուծէ այնպէ՛ս մը, որ թուրքերը տեղաբնիկ են, նահանջած են Կեդրոնական Ասիա ու ապա վերադարձած: (Աւելորդ է ըսել թէ նման տեսակէտ գիտական ֆենարկման չի կրնար դիմանալ):

Ջիա Կէօֆ Ալփի գաղափարախօսութիւնը երկրաչափութեամբ պատկերացնելու պարագային, կը ստացուի եռանկիւն մը: Եթէ այդ եռանկիւնը տեղադրենք Թուրքիոյ քարտէսին վրայ, եռանկեան անկիւնները կը դասաւորուին այսպէս.— դէպի



Ջիա Կէօֆ Ալփի եռանկիւնը

արեւմուտք՝ Արդիականացման կամ Արեւմտականացման անկիւնը (ա), դէպի հիւսիս՝ Փանթուրանիզմի անկիւնը (բ) եւ դէպի արեւելք՝ Իսլամիզմի անկիւնը (գ): Այս եռանկիւնի շրջագիծին մէջ գործած է ու կը գործէ Թուրքիոյ պետական քաղաքականութիւնը: Այս եռանկիւնին աչքի առջեւ ունենալով միայն կարելի է լաւապէս ըմբռնել Թուրքիոյ վարած քաղաքական մարտավարութիւնները:

Ջիա Կէօֆ Ալփի գաղափարախօսութիւնը շատ խոր ազդեցութիւն կ'ունենայ թուրք հասարակական մտածողութեան վրայ. անոր դրսեւորումներուն կարելի է հանդիպիլ մինչեւ այսօր: 1960 Մայիս 27ի բիւով, «Թուրքիա» թերթին մէջ Հալիլ Թիտէլի կը գրէ.— «Վերջնական յաղթանակը կը պատկանի այն ազգայնականներուն, որոնք հետեւած են վերջին մեծագոյն ազգայնականներուն, որոնք հետեւած են վերջին մեծագոյն մտածողին՝ Ջիա Կէօֆ Ալփի ուղիին: Զարգացած Թուրքիան պիտի բարձրանայ զօրաւոր բազուկներուն եւ ազնիւ ուսերուն վրայ անոնց՝ որոնք կը պատկանին թուրք ցեղին, Իսլամ համայնքին եւ Արեւմտեան քաղաքակրթութեան: Թրքական մեծ պետութիւնը, շատ շուտով, իր արժանի տեղը պիտի գրաւէ աշխարհի քարտէսին վրայ»<sup>1</sup>: 1989 Սեպտեմբեր 17ին, Ատրպէյ՝նանի ժողովրդային ձակաւոր ղեկավարներէն Ի. Ալիեւ, Ապու Տապի հրատարակուող «Ալ Պայան» թերթին կը յայտարարէ.— «Մեքոտարանութեան եւ ծրագրաւորման տեսանկիւնէն մենք մեր առջեւ երեք նպատակ դրած ենք.— 1) Մեր թուրք ազգային

1) Նոյն էջ 181:

2) Նոյն էջ 233:

3) Նոյն էջ 267:

1) «Political And Social Thought In The Contemporary Middle-East», Kamal Karpat, U.S.A., 1968:

անհատականության վերադառնալը, 2) Մեր իսլամական մշակութային արժեքներուն վերադառնալը, 3) Արդիականացումը»<sup>1</sup>:

1993 Նոյեմբերին, «Արաբական Միացեալ Ուսումնասիրության Կեդրոն»-ին կողմէ, Պէյրուքի մէջ կազմակերպուած «Արաբ-Թրքական Յարաբերութիւնները. Հեռանկարային Ջրրոյց» համագումարին, որուն կը մասնակցէին Թուրքիայէն եւ արաբական եկրիրներէն եկած շատ մը ականաւոր մտաւորականներ, լիբանանցի հրապարակագիր Ժիհատ էլ Զէյն կը գտնէ թէ, Թուրքիոյ մէջ կան երեք ուղղութիւններ՝ Աթաթրականութիւն (Քեմալ Աթաթրիւքի իշխանութեան գլուխ գալէն ետք, աթաթրականութիւն եւ արդիականացում բառերը կը դառնան հոմանիշ), Փանթուրանականութիւն եւ Իսլամականութիւն, որոնց միջեւ առկայ մրցակցութեան զուգահեռ, կայ այդ երեքը հաշտեցնելու ճիգ մը<sup>2</sup>:

Քաղաքական կեանքին մէջ եւս Թուրքիոյ 3 ձգտումները՝ միանալ Եւրոպական Հասարակաց Շուկային (դէպի արեւմուտք), Ատրպէյճանի վրայով միանալ Կեդրոնական Ասիոյ (դէպի հիւսիս), մաս կազմել Իսլամական Երկիրներու Վեհաժողովին (դէպի արեւելք)՝ այլ բաներ չեն, եթէ ոչ Զիա Կէօֆ Ալփի եռանկեան դրսեւորումը ժամանակակից քաղաքական կեանքին մէջ:

Մէկ խօսքով, Օսմանեան Կայսրութեան մէջ Փանթուրանիզմը կը դառնայ պետական գաղափարախօսութիւն եւ երկրի պաշտօնական քաղաքականութիւնը կը շարժի ա՛յդ ուղղութեամբ:

Փանթուրանիզմի իրագործումը սակայն իր դէմ ունէր 2 մեծ խոչընդոտներ. —

Ա. — Քաղաքական-նազմական խոչընդոտը, այսինքն՝ Թուրքիոյ դարաւոր թշնամի՝ Ռուսական Կայսրութիւնը, իր նազմա-քաղաքական վիթխարի ոյժով:

Բ. — Աշխարհագրական-քննակական խոչընդոտը, այսինքն՝ Պատմական Հայաստանն ու հայ ժողովուրդը, որոնք կը գտնուէին թրքական երկու հատուածներուն միացման կէտին

վրայ եւ անկախ իրենց կամքէն՝ կ'արգիլէին այդ միացումը:

Այս խոչընդոտները յաղթահարելը դիւրին գործ չէր. այդ կրնար տեղի ունենալ շրջանէն ներս նազմա-քաղաքական արմատական փոփոխութեան մը առկայութեան պարագային միայն: Պատմական նման առիթի մը սկսկալումը սակայն չէր արգիլեր որ Փանթուրանիստները անցնէին տեսական ու կազմակերպչական նախապատրաստական աշխոյժ աշխատանքի: Այդօրինակ աշխատանքի գագաթնակէտերը կը դառնան Իթթի-հատ Վէ Թերաֆը Կուսակցութեան տարեկան համագումարները եւ այլ համաժողովներ: 1910 թուականին, Սալոնիկի մէջ գումարուած Իթթիհատի Գ. Համագումարին, Փանթուրանիզմի գաղափարախօսներէն Տոֆ. Նազըմ, ուրուագծել էտք Թուրանական Կայսրութեան իր պատկերացումը, կ'եզրակացնէ. — «Պահ մը երեւակայեցէք արեւելեան նահանգներուն վրայ հայկական պետութեան մը կազմութիւնը: Նման պետութիւն մը Թուրանական ծրագրին տապանաբարը կ'ըլլայ»: Ապա, կուտայ այդ արգելքը վերացնելու 6 կէտերէ բաղկացած նախածրագիր մը, որուն 6րդ կէտին մէջ կ'ըսուի. — «Այդ ամենէն յետոյ, ամենամեծ խոչընդոտին անհետացումով կը Հարթուի ճամբան այն մեծ խոչալին՝ Փանթուրանականութեան զաղափարին իրականացման համար, որուն կառչած ենք մեր ամբողջ էութեամբ»: Աւելի ուշ, 1913 թուականին, Պայագլիտի մէջ գումարուած խորհրդաժողովի մը մէջ, կ'որոշուի «Թուրք ժողովուրդի արեւելեան եւ արեւմտեան հատուածներուն միութիւնը», եւ երկու կողմերու ներկայացուցիչներուն միջեւ կը կնքուի համագործակցութեան դաշինք:

Փանթուրանիզմի գաղափարախօսութիւնը արագ թափով կը մտնէ թրքական մտածողութեան, քաղաքական թէ հոգեւոր գործունէութեան բոլոր ոլորտներէն ներս: Անոր մէկ այլ յայտնի գաղափարախօսը, Թեֆիկ Ալի (Մոնիգ Քոնէն), Համաշխարհային Պատերազմի նախօրեակին, 1914ին, կը հրատարակէ երկու տեսական գիրքեր՝ «Ի՞նչ կրնան Շահիլ Թուրքերը Այս Պատերազմէն» եւ «Թուրքիզմը Եւ Փանթուրիզմը»: Երկրորդ գիրքին մէջ ան կը գրէ. — «Թուրքան հասկացութիւնը քաղաքական հասկացութիւն չէ: Այդ աշխարհագրական է՝ ինչպէս օրինակ Իտալիան: Այդ կրնայ դառնալ աշխարհի թուրքերը միաւորող ապագայ թրքական պետութեան անուանակոչումը: Կուգայ այն օրը, երբ Ռուսաստանը, ուր այսօր թուրքեր կ'ապրին, կը կործանուի՝ ինչպէս կործանուած են այլ կայսրութիւններ եւ

1) «Արարատ» (օրաթերթ, Պէյրուք), 24/10/1989:

2) «العلاقات العربية - التركية: حوار مستقبلي», Պէյրուք, 1995, էջ 364:

թուրքերը, ոգեշնչուած ազգայնական գաղափարով, վեր կը բարձրացնեն իրենց նախահօր՝ Ճենկիզ Խանի ոսկեայ թագը: Վեր կը բարձրացնեն այդ թագը, որովհետեւ Թուրանը պատմական հասկացութիւն մը չէ: Թուրանը ցեղագրական հասկացութիւն է: Թուրանը իրականութիւն է. որովհետեւ, ազգայնական Թուրքիան լի է կենսական ոյժերով: Թուրանը տասնապատիկ մեծ է Անատոլիայէն: Թուրանը կենդանի է, սակայն, կը գտնուի չինական նիրաններուն մէջ եւ ռուսական կրունկի տակ: Թուրանը նուաճուած եւ ճնշուած է: Թուրք ազգին համար Թուրանի թուրքերուն վիճակը ամենամեծ նուաստացումն է: Իւրաքանչիւր թուրքի առաջնահերթ եւ սրբազնագոյն պարտքը՝ չինական վիշապէն եւ ռուսական երկգլխանի արծիւէն Թուրանը ազատագրելու ազգային պարտականութեան գիտակցումն է»:

Թուրքիոյ մէջ գերմանական զինուորական առաքելութեան գերագոյն հրամանատար, մարշալ Լիման Ֆոն Սանտերսի թարգման Հայնրիխ Ֆիրպիլիւէր, անդրադառնալով Իթքի-հատի Փանթուրանական ցնորքներուն մասին կը գրէ. — «Որքան Երիտթուրքերը գործնական փիչ ծրագրեր էին իրականացնում, այնքան յանդուգն երազներ էին փայփայում: Քաղաքական իշխանութիւնը երբեք նման վտանգաւոր ցնորամիտների ձեռք չէր անցել, նրանք, բառի վատթարագոյն իմաստով, ապիկարներ էին: Չնայած դրան, «Միութիւն եւ Յաւաջդիմութիւն» Կոմիտէին համակել էին ծաւալապաշտական պատրանքները: Դեբեւս դարասկիզբին աֆղան տերվիշ Ճեմալ էլ Տիւրք եզնում էր «Կարմիր Սուլթանին» համոզել, որ թուրքական քաղաքականութիւնը հիմնի Փանիսլամութեան վրայ, հաւատացնում էր. որ միայն այդ ձեւով երկիրը հնարաւոր կը լինի փրկել Անգլիայի ու Ռուսաստանի մասնատումից: Չնայած տերվիշի՝ համոզելու բացառիկ կարողութեանը, որն այդ առումով շատ էր յիշեցնում Ռասուլզիւնիին, Ապտուլ Համիտը բաւականաչափ խելք ունէր, որ խուսափէր կրակի հետ խաղալուց: Երիտթուրքերը, սակայն, հրապուրուեցին աֆղանցու մտայնութեամբ եւ այն վերածեցին Փանթուրանութեան: Մուլապար ուղեղներից դա մինչեւ անսահմանութիւն նախքելու հիանալի հնարաւորութիւն ընձեռեց»<sup>1</sup>:

## Փանթուրանիւր Համաշխարհային Ա. Պատերազմին

Թրքական երկու հատուածներուն միացումը իրագործելու համար սպասուած պատմական առիթը եւս չ'ուշանար: Կը պայթի Ա. Համաշխարհային Պատերազմը:

Գերմանիոյ կողմէ Ռուսիոյ դէմ պատերազմի յայտարարութենէն (1914 Օգոստոս 1) անմիջապէս ետք, Թուրքիա պատերազմի մէջ կը մտնէ Գերմանիոյ կողմին եւ վերջինիս հետ կը ստորագրէ զինուորական համաձայնագիր մը: Այդ համաձայնագրի 5րդ կէտին մէջ կ'ըսուի. — «Գերմանիան կը պարտաւորուի Թուրքիոյ ապահովել իր արեւելեան սահմաններուն աջակիսի ճշգրտում մը, որ անոր Հնարաւորութիւն տայ անմիջական շփում հաստատել Ռուսաստանի իսլամական տարրերուն հետ»<sup>1</sup>... Փանթուրանիւր կենսագործումը հետապնդող ինչպիսի՛ քաղաքավար եւ գրական ձեւակերպում: Իսկ պատերազմի մէջ մտնելու կապակցութեամբ իր հրապարակած հաղորդագրութեան մէջ, Իթքիհատ վէ Թերաքը Կուսակցութիւնը կը նշէ. — «Համաշխարհային Պատերազմին մեր մասնակցութեան նպատակը մեր ազգային խոչալին պաշտպանութիւնն է: Մեր ժողովուրդին եւ Հայրենիքին ազգային խոչալը մեզի կը մղէ խորտակել Մոսկովեան թշնամին՝ հասնելու մեր կայսրութեան համար բնական սահմանի մը, որուն մէջ կը պարփակուին ու կը միանան մեր ազգին բոլոր ստորաբաժանումները»<sup>2</sup>:

Սոյն մէջբերումներէն յստակօրէն կ'երեւի պատերազմի մէջ մտնելով Թուրքիոյ հետապնդած նպատակները:

Խօսքէն անցնելով գործի, Իթքիհատի ղեկավարութիւնը գործադրութեան կը դնէ Արեւմտահայութիւնը բնաջնջելու իր

1) «Հայաստան 1915 – Գերմանացի Սպայի Վկայութիւնը», Հայնրիխ Ֆիրպիլիւէր (Թարգմ. Գրիգոր Զանիկեան), Երեւան, 1995, էջ 36:

1) Հրաչիկ Սիմոնեան, նշ. աշխ., էջ 320:

2) «ARMENIA - The Survival Of A Nation», Christopher J. Walker, Նիւ Եորք, 1990, էջ 198:

հրեշալոր ծրագիրը՝ որպես կարեւոր մէկ օղակը Փանթուրանիզմի իրագործման: Հոս, մեր անմիջական նիւթէն դուրս սեպելով, չենք ուզեր ծանրանալ Մեծ Եղեռնի մանրամասնութիւններուն վրայ. այդ մասին արդէն իսկ գոյութիւն ունի հրակայ գրականութիւն: Կը բաւարարուինք մէջքերելով միայն երկու վկայութիւն: Ժամանակաշրջանի ամենէն ականաւոր քաղաքական գործիչներէն Ուինսթըն Չըչիլ, իր «The Aftermath» գիրքին մէջ կը գրէ. — «Պատերազմը իրենց վրայ հրաւիրեց (Հայերուն. — Ե. ձ.) չարիքի նոր շարք մը ամբողջ. պալքանեան պատերազմներէն ետք, Փանթուրքիստները մէկդի դրին "օսմանացում"ն ու "թրքացում"ը որպէս միջոց իրենց պետութիւնը վերստեղծելու: Անոնք իրենց երկրին ոչ-թուրք ցեղերուն կը վերագրէին մասամբ այն աղէտները, որոնց ենթարկուած էր թրքական կայսրութիւնը: Բիրտ բայց հասկնալի լեզուով մը անոնք եզրակացուցին թէ այս ցեղերը "արժանի չէին նկատի առնուելու իսկ. բեռ ու արգելք էին. թող գրողը տանէր զանոնք": ...Տրամաբանական ո՛չ մէկ կասկած կայ, թէ այս ոճիրը ծրագրուած եւ գործադրուած էր քաղաքական պատճառներով: Պատեհուութիւնը ներկայացած էր թրքական հողը մաքրելու քրիստոնեայ ցեղէ մը՝ որ դէմ էր թրքական բոլոր փառասիրութիւններուն, ունէր ազգային ձգտումներ ու տենչեր, որոնք կրնային գոհացուիլ թուրքիոյ ի վնաս միայն, եւ որ աշխարհագրականօրէն կը գտնուէր թրքական եւ կովկասեան իսլամ ժողովուրդներու միջեւ: Կրնայ ըլլալ որ անգլիական յարձակումը Կալիփոլի թերակղզիին վրայ հրահրած ըլլայ անողոք կատաղութիւնը թրքական կառավարութեան: Փանթուրքիստները կը խորհէին որ եթէ Պոլիսը ինչպէս եւ թուրքիան կորսնցնէր պատերազմը՝ այդ պարագային իսկ հայերու ընաշնչումը պիտի ունենար իր հետեւանքները եւ մնայուն առաւելութիւն մը ապահոված պիտի ըլլար թուրք ցեղին ապագային հաշտոյն»<sup>1</sup>:

Թուրք հետազոտող Թանիէր Ա. Բեմ, հարց տալէ ետք թէ ի՞նչ դրդապատճառներով Իթթիհատի ղեկավարութիւնը դիմեց հայ ժողովուրդը բնաջնջելու ծանրակշիռ որոշումը առնելու, կ'եզրակացնէ. — «Առաջը առնելու համար Օսմանեան Կայսրութեան քայքայման: Սակայն, ստեղծումովը նոր կայսրու-

1) Մէլքեռումը կատարուած է ըստ «Յուշամատեն Մեծ Եղեռնի» գիրքին, Գերսամ Ա. Տարոնեան, Պէյրութ, 1965, էջ 1040-1041:

թեան մը, որ յենած պէտք է ըլլար թուրք հաւատարիմ ժողովուրդներուն վրայ: Այդ նոր հայրենիքին (որ կը կոչուի նաեւ «Մեծն թուրան») քաղաքական սահմանները պիտի տարածուէին հոն ուր թրքական մշակոյթ եւ լեզու գոյութիւն ունէր»<sup>1</sup>:

Պատերազմական գետնի վրայ սակայն, թրքական բանակները կ'ենթարկուին անբարունակ ճակատագրի մը: Էնկիլթալի Փաշայի գլխաւորած բանակները, Կովկասեան ռազմաճակատին վրայ ջարդուփշուր կ'ըլլան եւ կը նահանջեն: Ռուսական բանակները կը սկսին յառաջանալ դէպի Օսմանեան Կայսրութեան խորքը: Կարծես միանգամայն լուծուած էին Օսմանեան Կայսրութեան ճակատագրին եւ Փանթուրանիզմին վերաբերող բոլոր հարցերը: Սակայն, պատմական դէպքերը կը զարգանան այլ ուղղութեամբ:

1917 Փետրուարին Ռուսաստանի մէջ տեղի կ'ունենայ յեղափոխութիւն եւ ցարը գահընկեց կ'ըլլայ: Նոյն թուի Հոկտեմբերին, Լեհիին առաջնորդութեամբ կը պայթի Հոկտեմբերեան Յեղափոխութիւնը: Միւս կողմէ, արեւմտեան ռազմաճակատին վրայ, ռուսական բանակները ձախողութիւններ կ'արձանագրեն եւ 1918 Մարտին Գերմանիոյ եւ Ռուսիոյ միջեւ կը կնքուի Պրեստ-Լիթովսկիի համաձայնագիրը: Մինչ այդ, Լեհիին կողմէ արձակուած "տուն դարձ"ի կոչին ընդառաջելով, ռուս զինուորը կը լքէ զէնքն ու կը սկսի վերադառնալ տուն:

Պարտուած եւ ներքին ցնցումներու մէջ ինկած Ռուսաստան մը եւ արագօրէն կազմալուծուող Կովկասեան ռազմաճակատ մը պատմական լուազոյն առիթներն էին Փանթուրանիզմի կենսագործումը վերստին հետապնդելու համար: Ուստի, հակառակ որ երեք տարուան ընթացքին Օսմանեան բանակները ծանր հարուածներ կրած էին, իրենց մէջ ոյժ կը գտնեն վերակազմակերպուելու եւ քանի մը ուղղութիւններով շարժելու դէպի Անդրկովկաս՝ վնասակար հարուածով մը Փանթուրանեան երազը իրականութիւն դարձնելու առաջադրանքով: Թրքական բանակներուն արագ յառաջխաղացումը, 1918 Մայիսին, Սարդարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաֆիլիսէի մէջ կը հանդիպի հայ ժողովուրդի միահամուռ ընդդիմութեան եւ

1) «الهوية القومية التركية والقضية الأرمنية», تانير أکجام, (Արարերէնի թարգմաննց Տոքթ. Ալեքսանտր Քէլչիլեան), Դամասկոս, էջ 78-80:

կանգ կ'առնէ: Սակայն, թրֆական բանակի մէկ այլ թեւ, թաթարական տեղական ոյժերուն հետ, կը յաջողի տապալել «Պաֆու-յի Կոմունան» (Պաֆու ֆաղաֆի խորհրդային իշխանութիւնը), եւ Սեպտեմբեր 15ին կը մտնէ Պաֆու: Այդ բանակները կը շարունակեն իրենց յառաջխաղացքը Տաղստանի ուղղութեամբ: Թըրֆական բանակի մէկ այլ թեւ, Հիւսիսային Պարսկաստան մտնելով, առաջադրանք կը ստանայ Կասպից Ծովուն վրայով շարժիլ դէպի Թուրքմէնիստան:

Փաստօրէն, Փանթուրանական երազը իրագործուած էր. թրֆութեան երկու հատուածները, Անդրկովկասի մէջ ձեռնըլած էին իրար հետ: Սակայն, Համշխարհային Ա. Պատերազմի ելքը կ'որոշուի այլ ձեւով: Թրֆական բանակները Մակեդոնիոյ մէջ պարտութիւն կը կրեն ֆրանսացիներէն, իսկ Պաղեստինի մէջ՝ անգլիացիներէն: Սեպտեմբերին, Թուրքիոյ դաշնակից Պուլկարիան կը յանձնուի՝ անպաշտպան ձգելով Պոլսոյ արեւմտեան թիկունքը: 1918 Հոկտեմբեր 30ին Թուրքիա կը ստորագրէ իր պարտութիւնը ընդունող Մուտրոսի համաձայնագիրը: Թրֆական բանակները կը հեռանան Անդրկովկասէն՝ իրենց հետ տանելով Փանթուրանիզմը իրագործած ըլլալու պատմական յուշը... իսկ պատմութեան մէջ բան մը չի կրնար աւելի համոզիչ ըլլալ քան ա'յն՝ ինչ որ եղած է անգամ մը:

Համաշխարհային Ա. Պատերազմի ծիրին մէջ մտնող ռազմական այս գործողութիւններուն զուգահեռ եւ անոնցմէ անմիջապէս ետք, տեղի կ'ունենան ֆաղաֆական եւ դիւանագիտական խնկուած յարաբերութիւններ, որոնք Փանթուրանիզմի հեռագնայ նպատակները բացայայտելու տեսակէտէն նոյնքան կարեւոր են որքան ռազմական գործողութիւնները:

Ռուսական Յեղափոխութենէն անմիջապէս ետք, Անդրկովկասի մէջ յառաջ կու գան երեք հանրապետութիւններ՝ Ատրպէյճան, Վրաստան, Հայաստան՝ որոնք միասնաբար կը կազմեն Անդրկովկասեան Հանրապետութիւններու Դաշինքը՝ ՍէՅՄը: Թուրքիոյ ֆաղաֆականութիւնը կ'ըլլայ նախ ՍէՅՄը անջատել Ռուսաստանէն եւ ապա այն պառակտել ինքն իր մէջ՝ փոքր ու տկար Հայաստան մը իր դէմ ունենալու նպատակով: Ատրպէյճան, բացայայտօրէն համաձայն էր նման ֆաղաֆականութեան մը. Վրաստան, Գերմանիոյ հետ իր մասնայատուկ կապերէն մեկնած, նոյնպէս համաձայն էր այդ ֆաղաֆականու-

թեան՝ զոր կ'արտայայտէր աւելի թափուն ձեւով: 1918 Ապրիլին, ՍէՅՄը կ'որոշէ Անդրկովկասը յայտարարել Ռուսաստանէն անկախ: Ամիս մը անց, Անդրկովկասեան Հանրապետութիւններէն իւրաքանչիւրը կը յայտարարէ իր անկախութիւնը: Այս անկախութեան մասին Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Ալեքսանտր Խատիսեան կ'ըսէ.— «Յամենայն դէպս, ուշադրութեան արժանի է, որ անկախութեան գաղափարը եւ այդ գաղափարի հրահրումը եկան Թուրքիայէն»<sup>1</sup>:

Հայաստանի անկախ Հանրապետութեան ֆաղաֆական առաջին փորձաքննումը կ'ըլլայ Թուրքիոյ հետ վարել Պաթումի բանակցութիւնները (1918 Յունիս 1), ուր պիտի ճշդուէին Հայաստանի Հանրապետութեան եւ Թուրքիոյ սահմանները: Այդ բանակցութիւններուն, թրֆական պատուիրակութեան նախագահ Խալիլ պէյ, ցոյց տալով ֆարտէսը, անպաճոյն ցինիկութեամբ մը կ'ըսէ.— «Դուք կը տեսնէք որ ճակատագիրը կը քաշէ Թուրքիան արեւմուտքէն արեւելք. մենք հեռացանք Պալքաններէն, կը հեռանանք նաեւ Ափրիկէէն, բայց մենք պէտք է տարածուինք դէպի արեւելք. հոն է մեր արիւնը, մեր կրօնքը ու լեզուն: Եւ ասիկա տարեւրային ձգողութիւն ունի. մեր եղբայրները Պաքու, Տաղստան, Թուրքիստան եւ Ատրպէյճան են: Մենք պէտք է ճամբայ ունենանք դէպի հոն: Եւ դուք՝ Հայերդ կանգնած էք այդ ճամբուն վրայ»<sup>2</sup>:

Այս տրամադրութեամբ բանակցութեան սեղան նստած թրֆական պատուիրակութիւնը կը յաջողի իր առաքելութեան մէջ: Պաթումի դաշնագրով ձեռք ձգուած փաստաթուղթը, Փանթուրանիզմի կենսագործման տեսակէտէն դիւանագիտական մեծ յաղթանակ մըն էր:

Միւս կողմէ, 1919էն սկսեալ, Թուրքիոյ մէջ կը ձեւաւորուի ֆաղաֆական նոր հոսանք մը՝ Քեմալիզմը (շարժման առաջնորդ Քեմալ Աթաթուրքի անունով): Շարժման ծնունդին գլխաւոր պատճառը Արեւմտեան երկիրներու կողմէ Թուրքիոյ վրայ գործադրուած նշուումներուն դէմ պայքարի ձգտումն էր. շարժման ծաւալման համար պատրուակ կը ծառայէ անգլիական հովանաւորութեամբ յունական զօրքերու Իզմիրի (Ջմիրու-

1) «Հայաստանի Հանրապետութեան Ծագումն ու Զարգացումը», Ալ. Խատիսեան, 1969, Պէյրութ, էջ 30:

2) Նոյնը, էջ 86:

նիա) գրաւումը՝ 1919 Մայիսին:

Իշխանութեան տիրանալէն ետք, Արեւմտեաններուն դէմ պայքարելու համար, Քեմալականներուն կը մնար միայն մէկ ուղի՝ մօտեցնալ Համայնավար Ռուսիոյ: Միւս կողմէ, Լեւիհի գլխաւորութեամբ իշխանութեան տիրացած խորհրդայինները, մեծ յոյսեր կը տածէին Արեւելի մէջ յառաջ գալիք հակագաղութատիրական յեղափոխական շարժումներուն նկատմամբ: Անոնց գլխաւոր նպատակն էր, յեղափոխական այդ շարժումները օգտագործել ի շահ իրենց ընդհանուր քաղաքականութեան: Մուստաֆա Քեմալ, լաւագոյնս օգտագործելով խորհրդայիններուն այս տրամադրութիւնները, կը հագնի կարմիր յեղափոխականի՝ նոյնիսկ համայնավարի՝ պատմունան եւ քեմալական շարժումը կը ներկայացնէ որպէս խորհրդայիններուն ջերմ համակիր եւ դաշնակից շարժում մը. եւ կը յաջողի ալ: Խորհրդային Ռուսիան կ'օգնէ քեմալական շարժման: Այդ բարեկամական յարաբերութեան տարիներուն կը զուգահիշի Անդրկովկասի սահմաններուն ձեւաւորումը՝ որմէ մեծապէս կ'օգտուի քեմալական Թուրքիան: Աւելին. 1920 Սեպտեմբերին Հայաստանի Հանրապետութեան դէմ թրքական բանակներու սանձագերծած յարձակումին, թրքական զօրագունդերը հայկական քաղաքները կը մտնեն կարմիր դրօշներով՝ ներկայանալով որպէս ազատարար-համայնավարներ... մինչդեռ, թրքական յարձակման բուն նպատակը, յստակօրէն կ'երեւի Արեւելեան ռազմաճակատի հրամանատար Ալի Ֆուատ ձեպետոյի Մուստաֆա Քեմալին գրած նամակէն, ուր կ'ըսուի. — «Հայերի դէմ բարենպաստ պատերազմ սկսելով, պէտք է չհրաժարիլ նաեւ Ատրպէյճանը Թուրքիոյ միացնելու միտքէն»<sup>1</sup>:

Համաշխարհային Պատերազմի վերջաւորութեան եւ անկէ անմիջապէս ետք, երբ մէկ կողմէ Փանթուրանիզմը ռազմական միջոցներով իրագործելու թրքական փորձերը ձախողութեան կը մատնուին, միւս կողմէ, Թուրքիա, նարպիկ լարախաղացութիւններով, կը յաջողի Փանթուրանիզմի ապագային հաշտոյն դիւանագիտական շահեր ապահովել:

Կասկածէ դուրս էր, որ Թուրքիոյ միացումը Ատրպէյճանին կրնար տեղի ունենալ 2 համրով. կամ արեւելեան սահմա-

նէն Պարսկաստանի վրայով՝ եւ կամ հիւսիսային սահմանէն Հայաստանի վրայով (հիւսիսային սահմանէն Վրաստանի վրայով Ատրպէյճանին միացման փորձը շատ աւելի երկար էր ու աւելի անհաւանական): Թուրքիա եւ Ատրպէյճան, այս երկու ուղղութիւններով կը յաջողին լուրջ ձեռքբերումներ արձանագրել, որոնց հեռագնայ նպատակները կը բացայայտուին պատմութեան հոլովոյթին հետ:

1918ին աշխարհագրական քարտէսին վրայ առաջին անգամ երեւան եկող Ատրպէյճան կոչուող հանրապետութեան անուանումը ինքնի՛ն, Փանթուրանական հեռանկարներու արտայայտութիւնն էր: Մինչ այդ, Ատրպէյճան անունով տարածք գոյութիւն ունէր հիւսիսային Պարսկաստանի մէջ: Այս ձեւով, փորձ կ'ըլլար ստեղծել այն տպաւորութիւնը, թէ գոյութիւն ունի Ատրպէյճանի անկախ հանրապետութիւնը եւ Պարսկաստանի կողմէ գրաւուած Ատրպէյճան մը, որոնք, օր մը, պէտք է միանան իրար (ըստ երեւոյթին խորհրդայինները եւս համաձայն էին այս տրամաբանութեան): Եւ, իրապէս ալ, ապագան այդպիսի հնարաւորութիւն կը ծնի: Համաշխարհային Բ. Պատերազմի ռազմական տեղաշարժերու ծիրէն ներս, 1941ին, հիւսիսային Պարսկաստանը կը գրաւուի Կարմիր Բանակին կողմէ<sup>1</sup>: Հիւսիսային Պարսկաստանի մէջ ծնունդ կ'առնեն Իրանեան Ատրպէյճանի եւ Իրանեան Քիւրտիստանի Դեմոկրատական Հանրապետութիւնները: Խորհրդային Ատրպէյճանի Համայնավար Կուսակցութեան Ա. քարտուղար Միրնաֆար Պաղիրով եւ Իրանեան Ատրպէյճանի Դեմոկրատական Կուսակցութեան ղեկավար Փիշեվարի զուգահեռ աշխատանքներ կը տանին երկու Ատրպէյճանները վերջնականապէս իրար միացնելու համար: 1946ին, Խորհրդային զօրքերուն Պարսկաստանէն նահանջէն ետք, այս ծրագիրը կը ձախողի, զոյգ հանրապետութիւնները շատ դիւրութեամբ կը լուծարուին եւ Պարսկաստան կը վերագտնէ իր հողային ամբողջականութիւնը: Սակայն, հարցը ամբողջապէս մոռացութեան գիրկը չի նետուիր: Շուրջ կէս դար ետք, Ատրպէյճանի նախագահ Ապուլ-

1) «Թուրք Ազգային Պուրժուազիայի Գաղափարաբանութիւնը եւ Քաղաքականութիւնը», Ն. Սիմոնեան, Երեւան, 1968, էջ 511:

1) 1907ի Անգլո-Ռուսական դաշնագիրով, Պարսկաստան կը բաժնուէր ազդեցութեան 2 ոլորտներու. Հիւսիսայինը՝ Ռուսական, Հարաւայինը՝ Անգլիական: Այս տրամաբանութիւնը կը գործէր Համաշխարհային Ա. եւ Բ. Պատերազմներուն ժամանակ:


Ֆատիլ էլչիպէյ, նախագահ ընտրութեանէն քանի մը ամիս առաջ, 1992 Մարտին, «Թրքիշ Թայմզ» բերքի թղթակիցին կը յայտարարէ. — «Իրանը պիտի կազմալուծուի եւ անոր տարածքին վրայ երեւան պիտի գան հինգ նոր պետութիւններ՝ քրտական, արաբական, պարսկական, պալոշական եւ թրքական. պիտի աւորու պէյճանները միանան (Իրանեան Ատրպէյճանը եւ Ատրպէյճանի Հանրապետութիւնը) ու յառաջ պիտի գայ նոր պետութիւն մը 40 միլիոն ազերի բնակչութեամբ»<sup>1</sup>: Աւելի ուշ, 1998ին, էլչիպէյ կը յայտարարէ թէ ինք դարձած է «Միասնական Ատրպէյճան» կազմակերպութեան նախագահը, որուն նպատակն է իրագործել զոյգ Ատրպէյճաններուն միացումը. նպատակ մը՝ որ «10–15 տարի յետոյ կու տայ իր արդիւնները»:

Ամփոփելու համար այս բաժինը, կ'արժէ մէջբերել Ղարաբաղի Հարցին մասին բուրժուաֆալանական մեկնարան Իսսան Ղուրբանի կատարած վերլուծութիւնը: Վերջինս, «Թուրքիան Աշխարհաֆալանական նոր կացութեան Մէջ եւ Անոր Ազդեցութիւնը Թուրք-Արաբական Ապագայ Յարաբերութեան Վերայ» գեկոյցին մէջ, գտնել է ետք թէ Ղարաբաղի հարցով ուսները կ'օգնէին հայերուն որպէսզի հիւսիսային եւ հարաւային Ատրպէյճաններուն միջեւ "պուֆերային" շրջան մը յառաջացնեն, կը շարունակէ. — «Պէտք չէ մոռնանք, որ սկզբնական շրջանին, իրանցիները, ազերիներուն դէմ օգնեցին հայերուն, 20 միլիոն հաշուող զօրաւոր հարաւային ազերիները իրենց տիրապետութեան տակ պահելու գլխաւոր նպատակով, եւ թերեւս, 7 միլիոն հաշուող հիւսիսային ազերիները ասոնց կցելու իրենց երազներուն իրականացման համար»<sup>2</sup>:

1) «التوسعية التركية في الوطن العربي وإيران», د. عناية الله رضا، 1992، էջ 55: Պէյրուէթ, 1992, էջ 55:

Այս հարցին մասին տես նաեւ «Փանթուրքիզմը եւ Ատրպէյճանի Հարցը (Ազոտանք Կամ Կովկասեան Ալպանիա)», Աթէնք, 1990, գիրքը, ինչպէս նաեւ «Երեկոյեան Երեւան» 2 Մարտ 1990, Գառնիկ Ասատրեանի «Ազգակցական "Կապերի" Ետեւում Մերկացումը Է Պարսիկ Մտաւորականը» յօդուածը եւ Փ. Ժ. Լա Շընէի «Անգրկովկասի Ժողովուրդները» գիրքին (1921, Փարիզ) եզրափակիչ գլուխը՝ արտասպումած «Ազգակ»-ի կողմէ 27 Մարտ 1992ին:

2) «العلاقات العربية - التركية : حوار مستقبلي», Պէյրուէթ, 1995, էջ 594:



«Եւրոպայի Թուրք Ուսանողներու Միութեան» կողմէ Հրատարակուած սոյն քարտէսը (1992 Վիեննա), որ կը կոչուի «Թուրքիան 21րդ Դարուն», ցոյց կու տայ այն տարածքները որուն կը հաւակնին թուրքերը: Նկատելի է, որ այս քարտէսին մէջ, Փանթուրանիզմի ճամբան անցած է Պարսկաստանի վրայէն:


Ինչ կը վերաբերի Փանթուրանիզմի ճամբան Հայաստանի տարածքէն անցընելու հեռանկարին, ապա, այդ կապակցութեամբ կը կատարուին վիրաբուժական նրբին գործողութիւններ: Յստակ է թէ «Հայաստանի տարածք» եզրով, այս պարագային, առաւելաբար կը հասկցուի Փանթուրանիզմի ճամբան խաֆանող Նախիջեւան-Չանգեզուր-Ղարաբաղ գիծը. գիծ մը՝ որ 1992ին, Թուրքիոյ վարչապետ Սուլէյման Տէմիրբելի կողմէ պիտի կոչուէր «չարաֆաստիկ եռանկիւնի»...: 1918–1923 ընթացող միջազգային թէ շրջանային ֆալանական բարդ փոխարաբերութիւններուն ընթացքին, Թուրքիոյ գլխաւոր մտահոգութիւնը կ'ըլլայ կարելի եղած չափով փոքրացնել, տկարացնել եւ տարանջատել «չարաֆաստիկ այդ եռանկիւնին»՝ անոր վերջնական վերացումը ձգելով ապագայ ձեռնտու պայմաններու: Պատմութիւնը կու գայ հաստատելու որ այս ուղղութեամբ քաֆուած նիգերը եւս հեռանկարային էին: Այսպէս. —

1. Նախիջեւանը, որպէս Նախիջեւանի Ինքնավար Հանրապետութիւն, կը դրուի իր հետ ցամաֆային ոչ մէկ կապ




Ներկայի քարտեզը

ունեցող Ատրպեյճանի հովանաւորութեան տակ, ուր, ապագային կը կիրարկուի հայաթափման հետեւողական քաղաքականութիւն մը: Միւս կողմէ, 1932ին, Թուրքիա անադմուկ ձեւով, Պանիթիկէի շրջանին մէջ հողամասեր կը զիջի Պարսկաստանին՝ որուն դիմաց կը ստանայ Նախիջեւանի հետ 11 ֆիլովեքրանոց



Հայաստանի մօտաւոր սահմանը Նախքան Իրան-Թուրքիա հողային փոխանակութիւնը



Փօլ Կոպչիլի առաջարկած քարտեզը

(սւաբով ցոյց տրուած է Փանթուրանիզմի առջև բացուող ճամբան)

սահման մը: Այս ձեւով նախ կ'ապահովուի Նախիջեւանի թիկունքը եւ ապա "յուսոյ պատուհան" մը կը բացուի դէպի Փանթուրանիզմի ապագայ նպատակները: Այդ "յուսոյ պատուհանը" աննպատակ չէր...

1992 Մարտ 9ի թիւով, «The Times» կը գրէ թէ, Թուրքիա Ղարաբաղի հարցին լուծման համար առաջարկած է «երկու անցք» լուծումը: Մէկ անցքը՝ Հայաստանի Հանրապետութիւնը ցամաքային կապով պիտի միացնէ Ղարաբաղին, միւս անցքը՝ Նախիջեւանը պիտի միացնէ Ատրպեյճանի: Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Հիմէթ Չեքին, այս առաջարկը բերանացի ձեւով ներկայացուցած է Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար ձէյմա Պէյքըրին: Աւելի ուշ, այս առաջարկը կը մշակուի Ա.Մ.Ն.ի արտաքին գործոց նախարարութեան ազգային հարցերու գծով խորհրդական Փօլ Կոպչիլի կողմէ եւ որպէս տագնապի լուծման ձեւ կը ներկայացուի Ղարաբաղի հարցին շուրջ վիճող կողմերուն<sup>1</sup>: Առաջարկի գործադրութեան պարագային, նախիջեւանեան "յուսոյ պատուհանիկ"ին միջոցով, ամբողջապէս կը բացուէր Փանթուրանիզմի

1) Փօլ Կոպչիլի ծրագրին մասին տես «Արարատ» Բացառիկ, 1/1/1998, էջ 6-9:



Ղարաբաղի մարզը սահմանակից Հայաստանին

նամբան: Հետաքրքրական է որ, այս առաջարկը կ'արժարժուի նաև 1994 Մայիսին, Լիբանանի Իսլամական Շիի Համայնքի Գերագույն Խորհուրդի կողմէ կազմակերպուած «Իսլամը եւ Իսլամները Փոփոխուող Աշխարհին Մէջ» վերնագրին տակ կայացած համագումարին, ուր, «Խորհրդային Միութեան Քայ- փայման Ազդեցութիւնը Թուրքիոյ Վրայ» նիւթին շուրջ կար- դացուած զեկոյցին մէջ կ'ըսուի.- «Թուրքիոյ արտաքին գոր- ծոց նախարար Հիքմէթ Չեթինի առաջարկը հողային փոխանա- կութիւն մըն է Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ, այնպէս մը որ, ցամաքային մնայուն անցք մը ապահովուի Հայաստանի եւ Ղարաբաղի միջեւ եւ ցամաքային նոյնաձեւ անցք մը Նախիջե- ւանի (որ ենթակայ է Ատրպէյճանի եւ աշխարհագրականօրէն անջատուած է անկէ, սակայն սահման ունի Թուրքիոյ հետ) եւ Ատրպէյճանի միջեւ: Այս առաջարկը, անշուշտ գործադրու- թեան պարագային, կը նշանակէ առաջին ցամաքային անընդ- հատ կապը հաստատել Թուրքիոյ եւ Իսլամական-թրքական բո- լոր հանրապետութիւններուն միջեւ: Այս ձեւով, կարելի էր քայլ մը կատարուած կ'ըլլայ, որպէսզի "զաւակները" համախմբուին իրենց "մօր" շուրջ»<sup>1</sup>:

1) «شؤون تركية», Թիւ 12, 1994 Ամսու, էջ 36-43, (չակերտա- ւորումները բնագիրինն են):



Կարմիր Քիւրտիստան

2- Ղարաբաղը, որպէս Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ (ԼՂԻՄ), դարձեալ կը դրուի Ատրպէյճանի հովանաւորութեան տակ: Ղարաբաղի մէջ եւս կը կիրարկուի հայաթափման ֆաղափականութիւն: Սակայն, ղարաբաղցի իր պայքարող նկարագրով ծանօթ էր պատմութեանէն: Դժուար էր իր սահմանի ամբողջ երկայնքով Հայաստանի հետ ցամաքային կապ ունեցող ղարաբաղցի ընկնել: Ուստի, այս նպատակին համար գոր- ծադրութեան կը դրուի այլ բեմադրութիւն մը: 1923ին, Հայաս- տանի եւ Ղարաբաղի արանքին, յանկարծակիօրէն գոյառում կ'առնէ «Կարմիր Քիւրտիստանը» (Քիւրտկրայ): «Կարմիր Քիւրտիստանը» ոչ հանրապետութիւն էր, ոչ ինքնավար մարզ: Այդ, անորոշ սահմաններով եւ իրաւասութիւններով քրտական "մշակութային ինքնավարութիւն" մըն էր՝ "ուեզդ": Մինչեւ այ- սօր տակաւին յստակ չէր թէ ո՞ր որոշումով գոյութիւն առաւ «Կարմիր Քիւրտիստանը» եւ այդ ի՞նչ պատճառաբանութեամբ վերստին լուծուեցաւ: Փաստը այն է որ 1923-1929 թուական- ներուն, Խորհրդային Միութեան ֆարտէսին վրայ կ'երեւայ «Քիւրտկրայ»ը: Անոր անհետացումէն ետք, տարածքը կը դառնայ Ատրպէյճանի բնական հողամաս՝ Ղարաբաղը ցամա- քային կապով ամբողջապէս խզելով Հայաստանէն:

«Կարմիր Քիւրտիստան»ի լուծարման դէմ բողոք բարձրացնող ֆիւրտերը կը հալածուին, կը ձերբակալուին ու կ'աֆտորուին՝ որպէս վերջին վարագոյր Ղարաբաղը Հայաստանէն անջատելու բեմադրութեան<sup>1</sup>:

3- Փաստօրէն, միայն Ձանգեզուրն է որ, ի գին յամառ պայքարներու, կը դիմադրէ Փանթուրանական ծրագիրներուն, կը մնայ Հայաստանէն անբաժան եւ որպէս այդպիսին կը խափանէ թրքական երկու հատուածներուն ցամաքային միացումը: Ահա թէ ի՞նչ բանի կը ծառայէին Փօլ Կոպէլի թէ այլոց կողմէ Ձանգեզուրը Հայաստանէն անջատելու ծրագիրները:

## Փանթուրանիւմը Համաշխարհային Ա. Պատերապան Ետք

Համաշխարհային Ա. Պատերապմէն ետք, երբ մէկ կողմէ Մուստաֆա Քեմալի վարչամեքենան Փանթուրանիզմի ապագային հաշույն ձեռքբերումներ կ'արձանագրէր, միւս կողմէ, Փանթուրանիզմի առաւել ծայրայեղ թելը, չէր համոզուէր որ Փանթուրանիզմը իրականացնելու հնարաւորութիւնը կորսւած է ու կը դիմէր տարբեր արկածախնդրութիւններու: Այս թելին յայտնի ներկայացուցիչը կը դառնայ Էնվեր Փաշան: Ան, նախ կը յաջողի շահիլ Խորհրդայիններուն վստահութիւնը. կ'այցելէ Մոսկուա եւ հակազարուքատիրական յեղափոխականի դիմակը հագած, 1920 Սեպտեմբերին, Պաֆուի մէջ կը մասնակցի Արեւելի ժողովուրդներու Համագումարին: Քոմիւնդերնի Գործադիր Մարմինն կողմէ նախաձեռնուած սոյն համագումարին նպատակն էր զարկ տալ Արեւելի մէջ հակազարուքատիրական պայքարին. սակայն, այդ յարմար առիթ մը կ'ըլլայ ամէն ձեւի Փանիսլամիստներու եւ Փանթուրանիստներու մէկտեղման: Խայտաբղէտ կազմով այդ բազմամարդ համագումարին մէջ կը հնչեն ամէն տեսակի արտաոտոց եւ ծայրայեղական կոչեր<sup>2</sup>: Էնվեր, «Ինդերնացիոնալիստ»ի դիմակին տակ, որոշ ժամանակ մը, կը յաջողի կապեր ու յարաբերութիւններ ստեղծել Խորհրդային Ռուսիոյ Փանթուրանիստներ-

1) 1996 Մայիսին, Մոսկուայի մօտ տեղի կ'ունենայ P.K.K.ի Հետ սերտ կապեր ունեցող «Քրտական Կազմակերպութիւններու Դաշինք»ին Համագումարը: Համագումարը որոշում կ'ընդունի ԵԱՀԽի երկիրներուն յուշագիր ներկայացնել, պահանջելով «Կարմիր Քիւրտիստան»ի վերահաստատումը:

1) Արեւելի ժողովուրդներու Համագումարը բաւական յաջող կերպով պատկերուած է Warren Beatyի «Reds» ժապաւէնին մէջ՝ յենած ամերիկացի թղթակից John Reedի աշխատութիւններուն վրայ: Այս մասին տես նաեւ «Մայիսեան Ապստամբութիւնը Քոմիւնիզմին Նիւթերու», Հրանդ Աւետիսեան, Երեւան, 1981:

րուն հետ՝ անոնց գործունեությունը համադրելու նպատակով: Ապա, երբ կը բացայայտուի անոր կեղծարարությունը, ան կ'անցնի Միջին Ասիա եւ կը ստանձնէ Պասմանական Շարժման ղեկավարությունը:

Պասմանական Շարժումը (թրքերէն *պասմաֆ* բառէն, որ այստեղ կը թարգմանուի – զարնո՛ղ, հարուածո՛ղ), 1918–1926, Միջին Ասիոյ տարբեր շրջաններուն մէջ յառաջ եկած հակա-խորհրդային, հակահամայնավար գինեալ շարժում մըն էր, որ ունէր Փանթուրանական–Փանիսլամական գունաւորում: Շարժման ընկերային յեմքը կրօնամոլ եւ խաւարամիտ գիւղացուքիւնն էր: Անգլիա, որ մէկ կողմէ պայքար կը մղէր Ռուսիոյ մէջ համայնավարական կարգերու ամրապնդման դէմ եւ միւս կողմէ կ'ուզէր խորացնել Ռուսիոյ ներքին դժուարութիւնները՝ աշխարհի նոր բաժանման գործընթացին մէջ իր դէմ տկար Ռուսիա մը ունենալու հեռանկարով, կը հովանաւորէ ու կը գինէ Պասմանական Շարժումը: Կարմիր յեղափոխականի պատմունանը հագած Քեմալական Թուրքիա, չէր կրնար բացայայտօրէն թիկունք կանգնիլ Պասմանական Շարժման: Ան, իր համակրանքը կ'արտայայտէ գաղտնօրէն: Կարծես, պաշտօններու լռելիայն բաժանում մը կը գոյանայ Մուստաֆա Քեմալի եւ էնվեր Փաշայի միջեւ: Այդ մասին «Կոլոս Ռոսիի» (Ռուսաստանի Չայն) բերթը իրաւացիօրէն նկատել կու տայ թէ.— *«էնվերի եւ Քեմալի միջեւ անձնական տարածայնութիւններն ու առաջնութեան պայքարը չեն խանդարում, որ նրանք վարեն ըստ էութեան միեւնոյն քաղաքականութիւնը, մրցելով սոսկ այդ պայքարը գլխաւորելու արուեստին մէջ, իսկ նրանց գործողութիւնները ասպարէզի ներկայիս տարածքային սահմանազատումը (Փոքր Ասիան մէկի համար, Կեդրոնական Ասիան՝ միւսի) յաջող կերպով կարգաւորում է նրանց անձնական քոնֆլիքտները»*<sup>1</sup>: Նոյն տեսակետին է նաեւ բուրք պատմաբան, Փանթուրանիզմի ջատագով ձեմալ Քուրայ, որ «Աթաթիւրքի եւ էնվեր Փաշայի Հետ Կապուած Իրադարձութիւնները» խորագրուած ուսում-

նասիրութեան մէջ կը հրատարակէ երկուքին միջեւ փոխանակուած նամակները՝ ապացուցելու համար որ անոնք համախոհ էին իրենց հետապնդած վերջնական նպատակին մէջ<sup>2</sup>:

Ստեղծուած իրավիճակը, էնվերին կու տայ ամբողջական հնարաւորութիւն, որպէսզի ան "նակատ"էն պարտուած Փանթուրանիզմը հետապնդէ "խորք"էն: Էնվեր կը դառնայ «իսլամական բոլոր զօրքերու գլխաւոր հրամանատար» եւ մինչեւ իր սպանութիւնը այդ համբուն վրայ (1922 Յուլիս), Փանթուրանիզմի հեռանկարներով կ'առաջնորդէ Պասմանական Շարժումը: Պասմանական Շարժումը, Կարմիր Բանակի հարուածներուն տակ, վերջնականապէս կը պարտուի եւ կ'անհետանայ<sup>2</sup>:

Այդ շրջանին, երբ տակաւին ամբողջապէս յստակ չէր խորհրդային Իշխանութեան վարելիք քաղաքականութիւնը նախկին Ռուսական Կայսրութեան քաղկացուցիչ ազգերուն հանդէպ եւ համայնավարներու կողմէ յառաջ քաշուած «ազգերու ինքնորոշման ազատութիւնը» գործնական կեանքին մէջ շօշափելի փաստ մը չէր արձանագրած, Փանթուրանիզմի դըրսեւորումներուն կը հանդիպինք նոյնիման Խորհրդային Միութեան Համայնավար Կուսակցութեան ներս: Այս երեւոյթին վառ օրինակն է Սուլթան Քալիբը (անոր անունով կոչուող Սուլթանգալիեականութիւնը), որուն գլխաւոր նպատակն էր, համայնավարական յեղափոխութեան միջոցով ազատագրուիլ ցարիզմի կապանքներէն եւ Կեդրոնական Ասիոյ մէջ ստեղծել թրքական–իսլամական անկախ հանրապետութիւն մը: Սուլթան Քալիբը, Համայնավար Կուսակցութեան գերագոյն ժողովներուն մէջ, կը պաշտպանէ «Իսլամական Համայնավարական

1) «Հայ ժողովրդի Նոր Երջանի Պատմութեան Նենգափոխումը Թուրք Պատմագրութեան Մէջ», Ե. Սարգսեան եւ Ի. Սահակեան, Երեւան, 1963, էջ 41:

2) Պասմանական Շարժման եւ անոր մէջ էնվերի խաղած դերին մասին տես Վլատիմիր Պետրոսեանի «Ինդերնացիոնալիզմի Դրօշին Հաւատարիմ» (Երեւան, 1983) եւ «էնվերի Վերջը» (Պէյրութ, 1996) գիրքերը եւ Հրաչիկ Սիմոնեանի «Թուրք Ազգային Պուրժուազիայի Գաղափարաբանութիւնը եւ Քաղաքականութիւնը» (Երեւան, 1986) եւ «Թուրք–Հայկական Յարաբերութիւնների Պատմութիւնից» (Երեւան, 1991) գիրքերը:

1) «Թուրք–Հայկական Յարաբերութիւնների Պատմութիւնից», Լ. Սիմոնեան, Երեւան, 1991, էջ 458:

Կուսակցութիւն» ստեղծելու, ինչպէս նաեւ «Իսլամական Բանակ» կազմելու գաղափարները՝ որոնք, առաջին իսկ հայեացքէն, կը հետապնդէին Փանթուրանական հեռագնայ նպատակները: Այս մասին անդրադառնալով, պարսիկ պատմաբան Ամիր Թահիրի կը գրէ. — «Քալիբը կը փորձէր վերակենդանացնել Քազանի թաթարներուն հին երազները՝ ստեղծելու կայսրութիւն մը, որ պիտի ընդգրկէր Ռուսիոյ թրքական բոլոր ժողովուրդները: Հետագային, այս կայսրութիւնը աւելի եւս պիտի ընդարձակուէր եւ պիտի ընդգրկէր մնացեալ թրքական բոլոր պետութիւնները, իսկ աւելի ուշ՝ իսլամական աշխարհը»<sup>1</sup>: (Սուլթան Քալիբ, 1923 թուականին կ'արտաբերուի Համայնավար Կուսակցութեան եւ մինչեւ 1929, ընդլայտակի մէջ, կը հետապնդէ «Համայնավար Թուրանիայի» մը ստեղծումը, ապա կը ձերբակալուի ու կը գնդակահարուի):

Խորհրդային Միութեան մէջ, Փանթուրանական ձգտումները անգամ մը եւս իրենք զիրենք կը բացայայտեն, Միջին Ասիոյ Խորհրդային Հանրապետութիւններու սահմաններուն նշգրտման միջոցին: Փանթուրանիզմի թափուն ջատագովները կը պաշտպանեն Միջին Ասիոյ մէջ Խորհրդային մէկ Հանրապետութիւն ստեղծելու գաղափարը: Այս հարցին մասին անտարբեր չի մնար նաեւ քրքական մամուլը: Պոլսոյ «Ենի Թուրքիստան» թերթը կը գրէ. — «Անհրաժեշտ է պայքարիլ կոմունիստական փրոփականտայի միջոցով թաթարների, իրիւրզ-Ղազախների, Պաշկիրների, Իւզպէքների եւ այլոց բաժանելու դէմ: Պէտք է խոչընդոտ հանդիսանալ մանր հանրապետութիւնների կազմաւորմանը, բացատրելով թրքական Դաշնակցային Հանրապետութեան ստեղծման անհրաժեշտութիւնը»<sup>2</sup>: Մէկ այլ թուրք ֆաղափական գործիչ Ճաֆար Սէյիտ Ահմատ Խրիմի կը գրէ. — «Եթէ թրքական պետութիւնները չյառաջանան կայուն հիմքերու վրայ ու անոնք չվերածուին քիչ թէ շատ կարեւոր միաւորներու եւ եթէ այդ հանրապետութիւններուն միջեւ զօ-

րաւոր կապեր չստեղծուին, ռուսերը, առանց կասկածի, պիտի օգտուին այդ սկարութեանն եւ ռուսական իմբերիալիզմը դարձեալ պիտի տիրապետէ»<sup>1</sup>: Երբ քրքական միասնական հանրապետութիւն մը ստեղծելու ձգտումները յաջողութիւն չեն գտներ, ուշադրութիւնները կը կեդրոնանան պատմական, մշակութային եւ լեզուական ընդհանրութիւններուն վրայ: 1935-36 թուականներուն, տեղի կ'ունենան միջինասիական ժողովուրդներուն պատմական հարցերուն նուիրուած գիտա-ժողովներ: Այդ ժողովները, կեդրոնական իշխանութիւններուն կողմէ կը նկատուին Փանթուրանական, կ'արգիլուի անոնց յետագայ կայացումը եւ հոն արժարծուած նիւթերը չեն հրատարակուիր:

Այդ տարիներուն արդէն, Խորհրդային Միութեան երես կը հաստատուի ամուր, պողպատեայ վարչակարգ մը՝ որ իր կլաններուն տակ կը նմիւ ազգայնական եւ կրօնական ամենաթոյզն արտայայտութիւնն իսկ. — սա, ներքին ճակատին վրայ: Իսկ արտաքին ճակատի վրայ, կը սկսի թել առ թել հիւսուիլ «Երկարեայ Վարագոյրը»՝ որ Խորհրդային Միութիւնը կը պարսպէ արտաքին աշխարհէն ներքափանցել փորձող գաղափարախօսական, ֆաղափական եւ մշակութային բոլոր հոսանք-

1) Միջին Ասիոյ Խորհրդային Հանրապետութիւններու վարչական իրավիճակներուն եւ սահմաններուն ճշգրտումը կ'անցնի երկարաժամկէտ, բարդ հանգրուաններէ: 1924-1925ին կը կազմաւորուին Միջինասիական Սովետական Սոցիալիստական երեք Հանրապետութիւններ. — Իւզպէքական, Թուրքմէնական եւ Ղազախական: Կ'առաջանան նաեւ Տաճիկական Ինքնավար Մարզը՝ Իւզպէքական ՍՍՀ կազմին մէջ, Քարա-Քալիֆեան Ինքնավար Մարզը՝ Ղազախական ՍՍՀ կազմին մէջ եւ Քարա-Խըրխըզական Ինքնավար Մարզը՝ Ռուսաստանի Դաշնակցային ՍՍՀ կազմին մէջ: 1929ին, Տաճիկական Ինքնավար Մարզը դուրս կու գայ Իւզպէքիստանի կազմէն եւ կը դառնայ առանձին Սովետական Սոցիալիստական Հանրապետութիւն: 1932ին, Քարա-Քալիֆեան Ինքնավար Մարզը դուրս կու գայ Ղազախական ՍՍՀէն եւ կը մտնէ Իւզպէքական ՍՍՀ կազմին մէջ՝ որպէս Ինքնավար Հանրապետութիւն: 1936ին, Քարա-Խըրխըզական Ինքնավար Մարզը դուրս կու գայ Ռուսաստանի Դաշնակցային ՍՍՀէն եւ կը վերածուի առանձին Սովետական Սոցիալիստական Հանրապետութեան:

1) «Crescent In A Red Sky», Amir Tahiri, LnGտոն, 1989, էջ 94:

2) Տես «Թուրք-Հայկական Յարաբերութիւնների Պատմութիւնից», Հ. Սիմոնեան, Երեւան, 1991, էջ 455:

ներէն: Կը սկսի կերտուիլ «սովետական մարդը»: 1920ականներու աւարտին կը վատթարանան նաեւ Խորհրդային Միութիւն-Քեմալական Թուրքիա յարաբերութիւնները: Մէկ խօսքով, Փանթուրանիզմի երազը եղող թրքական երկու հատուածներուն միացումը, որ այնքան մօտիկ կը թուէր, դարձեալ կը հեռանայ: Անոնց միջեւ քաղաքական, գաղափարական, մշակութային, քաղաքական եւ այլ բնոյթի յարաբերութիւնները, Խորհրդային Կեդրոնական իշխանութեան կողմէ թշնամական ու դաւաճանական կը նկատուին եւ խստօրէն կը հալածուին: Փանթուրանական եւ Փանիսլամական ձգտումները Խորհրդային Միութեան մէջ կ'անցնին «խոր ընդյատակ»: Աւելին. վարչակարգի բարձրագոյն ոլորտները թափանցելու համար համոզուած համայնավար եւ համոզուած միջազգայնական ձեւանալու մարմանը՝ որ ընդհանուր երեւոյթ կը դառնայ Խորհրդային Միութեան մէջ՝ ընդգծուած ձեւով կ'արտայայտուի Ատրպէյճանի եւ Միջինասիական հանրապետութիւններուն մէջ: Ընդհանուր մթնոլորտին տուրք տալով Խորհրդային Միութեան պետական եւ կուսակցական բարձրագոյն ոլորտները բարձրանալու այս ձգտման մէջ, շատեր կը գտնեն Փանթուրանական թափուն եւ հեռագնայ նպատակներ:

Այդուհանդերձ, ազգայնական եւ կրօնական թափուն ըզգացումները Խորհրդային Միութեան թրքական հանրապետութիւններուն մէջ, երբեմն կը բացայայտեն իրենց առկայութիւնը: Օրինակի համար, «Փրաւտա» պաշտօնաթերթը ականայ խոստովանութիւն մը կը կատարէ երբ 1954 Յուլիսին կը գրէ. — «Թուրքիստանի եւ Ատրպէյճանի կոլխոզներուն մէջ, հունձքի ամենէն հրատապ շրջաններուն, պետական ծրագիրները չեն իրագործուիր, որովհետեւ կրօնական արարողութիւնները կը դանդաղեցնեն անոնց գործադրութեան ընթացքը: Հանրածանօթ իրողութիւն մըն է թէ երիտասարդներ, եւ նոյնիսկ համայնավար երիտասարդներ, իրենց մասնակցութիւնը կը բերեն այդ արարողութեանց»<sup>1</sup>:

1) Մէջբերումը կատարուած է ըստ «Ցեղասպանութիւնը Խորհրդային Միութենէն Ներս» գիրքին (Խորհրդային Միութեան Ոստանախրութեան Կաճառ, Թարգմ. Եղիշէ Մանուկեան, Պէյրութ), էջ 125:



Իր բացուած վիճակին մէջ 5 ս.մ. երկարութիւն ունեցող այս Ղուբանը, որ հանգիստ ձեւով կը տեղաւորուի ծխախոտի տուփի մը մէջ, յատուկ ձեւով պատրաստուած է Խորհրդային Միութեան Իսլամական Հանրապետութիւններ ներմուծելու եւ տարածելու համար:

Մինչ Խորհրդային Միութեան տարածքին Փանթուրանական ձգտումները կ'անցնին "ընդյատակ", անդին, Քեմալական Թուրքիոյ տարածքին, Փանթուրանիզմը կ'ապրի զարգացման եւ դրսեւորման բոլորովին այլ ճամբայ մը:

Քեմալական Շարժման (Միլլի Շարժում) Բ. Համագումարը (Սվազ, 1919 Սեպտեմբեր), կը ստանայ Փանթուրանական նկարագիր: Համագումարին կը մասնակցին Կովկասէն, Պարսկական Ատրպատականէն եւ Թուրքմէնիստանէն եկած պատգամաւորներ: Համագումարին կը մասնակցի նաեւ Կարմիր Մոսկուայէն եկած թաքաւ պատուիրակ մը: Սվազի Համագումարը կ'որոշէ հիմնել «Իսլամ Ազատագրութեան Լիկայ» մը, ինչպէս նաեւ կը մշակէ Թուրք-Ատրպէյճանական դաշինքին բովանդակութիւնը՝ որ կը կնքուի 1919 Հոկտեմբերին:

Այս շրջանին, Քեմալական շարժումը կ'ապրի գաղափարական-քաղաքական երկուութիւն մը: Շարժումը ըստ էութեան ուղղուած էր Արեւմտեան պետութիւններուն դէմ եւ կը վայելէր Խորհրդային Միութեան նեցուկը. Փանթուրանականութեան հանդէպ որեւէ համակրական կեցուածք, կը վտանգէր Խորհրդային Միութեան հետ բարեկամական յարաբերութիւնը՝ Թուրքիան դնելով երկու ճակատներու վրայ կոուկու սպառ-

նալիքին դիմաց: Միւս կողմէ, Քեմալական շարժման ղեկավարները իրենց ըմբռնումներով էապէս Փանթուրանիստներ էին եւ դժուար թէ անոնք, մէկ օրէն միւսը կարենային հրաժարիլ իրենց համոզումներէն: Այս հակասութիւնը տեղ կը գտնէ Շարժման մէջ, ուր երեւան կու գան երկու հոսանքներ՝ Արեւմտականներ եւ Արեւելականներ: Յաղթանակողը կ'ըլլայ Մուստաֆա Քեմալի գլխաւորած Արեւմտական հոսանքը: Այս հոսանքին համաձայն, Թուրքիա ա.․․ պէտք է "հրաժարէր" Փանթուրանական ձգտումներէն (նկատի առած հզօրացող Խորհրդային Միութիւնը եւ անոր հետ յարաբերութիւնները բարիդրացիական պահելու անհրաժեշտութիւնը), բ.․․ պէտք է "հրաժարէր" Փանիսլամական ձգտումներէն (նկատի առած որ Օսմանեան Կայսրութեան նոր ազատագրուած արաբները, թուրքիոյ հանդէպ ոչ մէկ համակրութիւն ցոյց կու տային) եւ գ.․․ պէտք էր բացուիլ դէպի Արեւմուտք՝ Թուրքիան եւրոպականացնելու եւ այդ նամբով զօրաւոր պետութեան մը վերածելու հեռանկարով: Փաստօրէն, առաջնայինը կամ հնարաւորը կը դառնայ Զիա Կէօֆ Ալլիի եռանկեան (ա) անկիւնին հետապընդումը: Այդ կը կատարուի ոչ թէ Փանթուրանիզմէն ըստ էութեան հրաժարելու գնով, այլ՝ քաղաքական իրավիճակի թելադրանքէն մեկնած:

Այս մթնոլորտին մէջ է որ Մուստաֆա Քեմալ իր հրապարակային ելոյթներուն մէջ կը ժխտէ Փանթուրանիզմի եւ Փանիսլամիզմի հեռանկարները, կը դատապարտէ զանոնք հետապնդողները՝ այդ գաղափարախօսութիւնները որակելով "ցնորական": Ան, բրֆական խորհրդարանին առջեւ արտասանած իր նախնի մէջ կ'ըսէ.․․ «Մենք Փանիսլամիզմի կամ Փանթուրանիզմի ջատագովները չենք: Այս գաղափարախօսութիւններուն հետեւանքով մենք շարժեցինք տարբեր պետութիւններու գայրոյթը՝ որոնք մեզ ջարդարար ամբաստանեցին: Մենք այս երկուքն ոչ մէկն ենք: Մենք ժողովուրդ մըն ենք որ կ'ուզէ ազատ ապրիլ եւ պատրաստ է արիւն թափել իր ազատութեան համար»<sup>1</sup>: Փանթուրանիզմի յայտնի գաղափարախօսներէն «Նոր Թուրան» գիրքին հեղինակ Խալիտ Էտիպ Հանըմ, որ

պատերազմէն առաջ կ'ըսէր.․․ «Կը փափաքիմ աշխարհի Թուրքերը քաղաքականապէս եւ մշակութապէս մեծ եւ անկախ տեսնել»<sup>1</sup>, Քեմալական շարժման միանալէն ետք կը գրէ.․․ «Քաղաքականօրէն կարելի չէ Ռուսիոյ Թուրքերը մեզի միացնել այն ձեւով որ կը խորհէինք թէ կարելի է»<sup>2</sup>: 1924ին, Թուրքիոյ տարածքին կը վերաշխուծանան "Թուրք Օջախ"ները: Այս կազմակերպութիւններուն Ա. Համագումարին, Աթաթուրք իր ողջոյնի նախնի մէջ, կը ֆննդատէ Փանթուրանիզմը. ուստի, անոնց նոր կանոնադրութեան մէջ կ'արձանագրուի.․․ «Թուրքիան որպէս պետութիւն կը խզուի Փանթուրանական քաղաքականութենէն եւ Օջախները, որպէս թրքական ազգի կազմակերպութիւններ, այսուհետեւ կ'աշխատին միայն ազգային եւ պետական սահմաններուն մէջ»:

Միջազգային քաղաքական պայմաններուն պատճառով Փանթուրանիզմէն երեւութապէս հրաժարելու բայց ըստ էութեան զայն քաղաքական մտածողութեան մէջ առկայ պահելու վարձագիծը վրիպած չէ շատ մը պատմաբաններու ուշադրութենէն, որոնցմէ ակադեմիկոս Տիմիդրի Երեմէն կը գրէ.․․ «...Քեմալական յեղափոխութիւնից յետոյ քեմալականները, եւ յատկապէս ինքը՝ Ք. Աթաթուրքը, հանդէս եկան Փանթուրքիզմի ծայրայեղութիւնների դէմ: Սակայն, նախկին Երիտասարդ Թուրքերի Թուրք շատ Փանթուրքիստներ, խօսքով ընդունելով իրենց գաղափարների սխալականութիւնը, գործով շարունակում էին Փանթուրքիզմի փրոփականտան: Այդ պատճառով ալ Փանթուրքիստական գաղափարախօսութեան ազդեցութիւնը Թուրքիայի հասարակական քաղաքական կեանքում զգացուցելու Թուրքիայի հասարակական քաղաքական կեանքում զգացուցելու նաեւ Քեմալական յեղափոխութիւնից յետոյ»<sup>3</sup>: Ռուս քաղաքագետ-փիլիսոփայ Վիկտոր Նադէին-Ռաեւսկի, անդրադառնալով այս հարցին կ'ըսէ.․․ «Ատրպէյճանի կազմի մէջ Նախիջեւանի մտցնելը մեր կառավարութեան վզին փաթաթուեց Թուրքիայի կողմից եւ դա վկայում էր այն մասին, որ խօսքով հրաժարուելով Փանթուրքական տողերինայից (վարդապետութենէն)․․․

1) «Միացեալ, Անկախ Թուրանիա», Զարեւանդ, Աթէնք, 1988, էջ 82:

2) «The Ottoman Empire: Its Record And Legacy», Wayne S. Vuncinich, Նիւ Եորք, 1965, էջ 168:

3) «Թուրքերի Ծագումը», Տ. Երեմէն, Երեւան, 1975, էջ 44:

1) «اببعاد (مجلة الدراسات الليتانية والعربية) - التحركات القومية في العالم العربي», էջ 73: Նաեւ «The Emergence Of Modern Turkey», Bernard Lewis, 1968, London, էջ 353:

Ե.Ճ.), քեմալականները շարունակում էին գործով հետեւել նրան»<sup>1</sup>:

Մուստաֆա Քեմալի եւ անոր յաջորդներուն կողմէ կիրարկուած Արեւմտականացումի այս փառաբանականութեան ծիրէն ներս, Թուրքիոյ մէջ կը կատարուին արմատական բարեփոխութիւններ. 1922ին, սուլթանութիւնը կը ջնջուի. 1923ին, Թուրքիա կը հռչակուի հանրապետութիւն. 1924ին, կը ջնջուի խալիֆայութիւնը. 1928ին, կ'որդեգրուի լատինական այբուբենը, եւ այլն:

Այս ժամանակաշրջանին, Փանթուրանիզմի աշխոյժ գործունէութեան դաշտ կը ծառայէ «Պրոմէթէական Ուխտը» (Promethean League), «Պրոմէթէոս»<sup>2</sup> պաշտօնաթերթով:

1926ին, պետական հարուածով, Լեհաստանի իշխանութեան կը հասնի հակախորհրդային պայքարի ղեկավար Փիլսուտցիին: Վերջինս լաւապէս կ'ըմբռնէ թէ անհնար է առանձնաբար յաջողութեամբ պսակել ազգայնական-հակախորհրդային այդ պայքարը. անոր վստահութիւնն ու հաւատքը մեծ կ'ըլլայ բուրժուաբար ոյժերուն հանդէպ, որոնք, 1920ի լեհ-խորհրդային կռիւներուն, կոռուած էին լեհ ազգայնականներուն կողմին: Ուստի, Փիլսուտցի կը հիմնէ «Պրոմէթէական Ուխտը», որուն մէջ կը փորձէ համախմբել բոլոր հակախորհրդային, հակահամայնավար հոսանքները: Փանթուրանիստներուն համար կը բացուի գործունէութեան նոր ասպարէզ մը: Անոնցմէ շատեր, սկսած ազերիական Մուսավաթ Կուսակցութեան հիմնադիր Մէհմէտ Ռասուլզատէէն, կը միանան այս Ուխտին: Եւ չի սխալիր պատմաբան Տէյվիտ Թուրքաե երբ «Պրոմէթէա-

կան Ուխտին» մասին կը գրէ.— «Այդ, Հակապոլշեւիկեան դաշինք մըն էր Փանթուրանական տարրերով»<sup>1</sup>: «Պրոմէթէական Ուխտը» կը վայելէ Արեւմտեան աշխարհին լայն նեցուկը: Սակայն, բոլոր հաշիւները կը խառնուին, երբ 1939ին, հակախորհրդային պայքարի համար նախապատրաստուող Լեհաստանը յարձակման կ'ենթարկուի ֆաշիստական Գերմանիոյ կողմէ: «Պրոմէթէական Ուխտը» կ'անցնի պատմութեան գիրկը<sup>2</sup>:

1) «Նորհրդային Ղարաբաղ», 15/Դեկտեմբեր/1989:

2) Պրոմէթէոս, Հին Յունական դիցաբանութեան մէջ եղած է մարդասէր աստուած մը եւ պաշտպանած է մարդկութիւնը աստուածներուն կամայականութիւններէն: Այս պատճառով, Զեւս զայն շղթայել տուած է Կովկասեան Լեռներուն, ուր, ամէն օր արծիւ մը կտցահարած է անոր լեարդը: Այս նիւթին հիման վրայ էսքիլէս գրած է «Պրոմէթէոս Շղթայուած» ողբերգութիւնը: Համբաւուող շատ մը գրողներ եւ արուեստագէտներ, այս նիւթին շուրջ ունին ստեղծագործութիւններ:

1) «The Soviet Caucasus», David Tutaeff, London, 1942:

2) «Պրոմէթէական Ուխտ»էն անկախ, բայց իրենց աշխատանքները անոր Հետ Համադրած, եւրոպական տարբեր մայրաքաղաքներումէջ, որպէս վտարանդիական կազմակերպութիւններ, Փանթուրանական ուղղուածութեամբ կը գործեն՝ ազերիական «Քիւրդիւլիւլ»ը, թրքական «Սեվերնիյէ Կովկաս»ը, թաթարական «Ենի Միլլի Եօլ»ը, թուրքմէնական «Եաշա Թուրքիստան»ը, ղազախական «Վոլնոյէ Քազաչեստօ»ն, Նիւիթի թաթարական «Էմէլ»ը, քալմուքական «Քուլիւնիյէ Վոլնի»ն, եւ այլն:

## Փանթուրանիպը Համաշխարհային Բ. Պատերապսին



Համաշխարհային Բ. Պատերապսը Փանթուրանիստե-րուն առջեւ կը բանայ նոր հեռանկարներ ու վերստին կը գրգռէ անոնց ախորժակները: Թուրքիա, ֆաշիստական Գերմանիոյ հանդէպ ջերմ համակրանք տածելով հանդերձ, կը պահէ զգուշաւոր չէզոքութիւն մը եւ չի մտնէր պատերապսին մէջ: Այդ չէզոքութեան հիմնական պատճառները Ա. Աշխարհամարտի փորձն էր՝ երբ Թուրքիա, Գերմանիոյ կողմին, մեծ յոյսերով պատերապսին մէջ մտնելէ ետք, անկէ դուրս եկաւ պարտուած՝ եւ Բ. Աշխարհամարտին մէջ ներգրաւուած երկիրներուն, յատկապէս Խորհրդային Միութեան հզօրութեան առթած վախն էր: Փաստերը ցոյց կու տան թէ Թուրքիա իր զգուշաւոր դիրքը պիտի պահէր մինչեւ պատերապսական իրավիճակին մէջ կտրուկ փոփոխութեան մը յառաջացումը, որմէ ետք, Ա. Աշխարհամարտին նմանողութեամբ պիտի բանար Կովկասեան Ռազմանակաւոր: Այդ կտրուկ փոփոխութիւնը Ստալինկրատի անկումը պիտի ըլլար: «Փրաւտա» պաշտօնաթերթը 17 Մարտ 1947ի թիւով կը գրէ. — «Արդարեւ, գերման վաւերաթուղթերէն յայտնի եղաւ թէ Թուրքիոյ ծրագրած էին Ս. Միութեան վրայ յարձակիլ Կովկասեան ճակատէն՝ Պաքուն զբաւելու նպատակով՝ 1942 թուի Նոյեմբերին, անգամ մը որ Գերմանիան յայտարարէր Ստալինկրատի անկումը»<sup>1</sup>:

Այս շրջանին, Թուրքիոյ ամբողջ տարածքին, պետական եւ ժողովրդային մակարդակներու վրայ, Փանթուրանիպի քարոզչութիւնը կը տարածուի արագօրէն: Ընթացիկ մամուլին մէջ Փանթուրանական ներշնչումով գրուած յօդուածներուն գուգահեռ, կը սկսին հրատարակուիլ բացառապէս այդ հարող-

Համաշխարհային Բ. Պատերապսի ընթացքին, Թուրքիոյ մէջ կը հիմնադրուի եւ մինչեւ մեր օրերը կը գործէ «Գորշ Գայլեր» ծայրայեղ աջ, Ֆաշիստական, Փանթուրանական, կիսա-գիտնորական կազմակերպութիւնը, որուն լոյս ընծայած հրատարակութիւններէն (1941 Յուլիս) առնուած սոյն քարտէսը ցոյց կու տայ Թուրան Կայսրութեան սահմանները:

չութեան ծառայելու կոչուած մամուլի նոր օրկաններ, որոնցմէ «Ջինար Ալթը»-ն, էնվերի փառաբանութեան նուիրուած յօդուածին մէջ կը գրէ. — «Ան, նահատակուելով Թուրքիստանի հողին վրայ, բոլոր Թուրքերու պատմութեան համար ցոյց տուաւ զոհողութեան գերագոյն օրինակը»: Խիստ աշխուժացում կ'արձանագրեն նաեւ Փանթուրանական կազմակերպութիւնները, որոնք, այդ շրջանին կը ստանան ֆաշիստական գունաւորում:

1) Մէլքերումը կատարուած է ըստ Զաւէն Մալլուեանի «Հայկական Հարցի Մասին» գիրքին, Պէյրութ, 1978, էջ 22:

Պետական ֆաղափականութեան արտայայտիչը ըլլալով, վարչապետ Սարաճօղլու, 1942 Օգոստոսին, Սըվազի մէջ ունեցած հրապարակային ելոյթին կ'ըսէ.— «Մենք մտադիր չենք փախցնել յարմար առիթը՝ մէկ հարուածով վերադարձնելու այն, ինչ մենք կորսնցուցինք պարտութեան տարիներուն»<sup>1</sup>: "Յարմար առիթ"ը՝ Համաշխարհային Բ. Պատերազմն էր ու Խորհրդային Միութեան պարտութիւնը. "մէկ հարուածով"ը՝ Կովկասեան ռազմանակատի բացումով Խ. Հայաստանի գրաւումն էր. "ինչ կորսնցուցինք պարտութեան տարիներուն"ը՝ Պաֆուսն էր՝ որպէս Փանթուրանական հեռանկարներու առաջնային նպատակակէտ...

Անգարայի մօտ Գերմանիոյ դեսպան Ֆոն Փափէն, «Փանթուրանական Շարժումները» վերնագրած իր հեռագրին մէջ կը տեղեկագրէ.— «Նկատի ունենալով գերմանական զինուորական յաջողութիւնները Ռուսիոյ մէջ, թրքական կառավարական շրջանակները տակաւ աճող հետաքրքրութիւն ցոյց կու տան իրենց այն ազգակիցներուն վիճակով, որոնք կը գտնուին Թրքական-Խորհրդային սահմանէն անդին, մասնաւորաբար ատրպէյճանցի թուրքերու նկատմամբ: Այս շրջանակները հակամէտ են յիշելու 1918 թուի դէպքերը, իրենց փափաքն է վերել նշուած շրջանը կցել, մասնաւորաբար Պաքուի քարտէզի դաշտերը»<sup>2</sup>:

1942 Յունիսին, Պերլինի մէջ, թրքական հարցերու մասնագէտ Տոկտ. Հարունի եւ Գերմանիոյ արտաքին գործոց նախարարութեան պաշտօնակատար Հենտիմգի միջեւ տեղի ունեցած գաղտնի զրոյցին ընթացքին կը նշուի թէ.— «... Մենք թուրքական շարժումը ոչ միայն գոյութիւն ունի, այլեւ ամբողջ ժամանակ ամրապնդում է ու աւելի եւ աւելի մեծ չափեր է ձեռք բերում»<sup>3</sup>:

Քազմաթիւ վաւերաթուղթեր կը խօսին այն մասին որ Գերմանիա-Թուրքիա գաղտնի յարաբերութիւններուն ընթացքին, Փանթուրանիզմը արժանացած է յատուկ ուշադրութեան<sup>1</sup>:

Համաշխարհային Բ. Պատերազմի ընթացքին, Փանթուրանիզմի գործունէութեան իւրայատուկ ձեւ էր նաեւ գերմանական բանակի կազմին մէջ մտնող եւ անոր կողմէ գրաւուած տարածքներուն վրայ գործող թուրք-թաթարական զօրամիաւորումներուն ստեղծումը: Ֆաշիստական Գերմանիան շահագրգռուած էր ազգային կազմով զօրամիաւորումներու կազմութեամբ, այն հեռանկարով, որ Ստալինկրատի անկումէն եւ Մոսկուայի գրաւումէն ետք, այդ զօրամասերը ըլլան դէպի Խ. Միութեան տարբեր տարածքներ յառաջացող գերմանական բանակներուն յառաջապահները: Փանթուրանիստները, այդ զօրամիաւորումներուն մէջ կը տեսնէին իրենց նպատակներուն հասնելու համար անհրաժեշտ զինուորական միաւորներ: 1941ին արդէն կազմուած էին այդպիսի 4 լեգիոններ.— Թուրքիստանեանը, Կովկասի մահմետականներունը, Վրացականը եւ Հայկականը, որոնց կողմին կը գործէր Արեւելա-Թրքական Տ. Տ. միաւորումը 4 ստորաբաժանումներով.— Թուրքիստանեան, Ատրպէյճանական, Խրիմի թաթարական եւ Վոլկա Ուրալ Թուրքիստանեան:

Փանթուրանիստները, այս զօրամիաւորումներուն ունեցալիք դերին հանդէպ մեծ յոյսեր եւ հեռանկարներ կը տածէին: Մինչդեռ, գերմանական ծրագիրներուն մէջ անոնց դերը կը սահմանափակուէր միայն «Քնդանօթի մացուներ» հայթայթելով: Գերման արտաքին գործոց նախարար Ռոզենպայրկ բացայայտօրէն դէմ էր թուրք-թաթարական (նաեւ որեւէ այլ ազգի) ինֆնալարութեան գաղափարին: Ան, նման խոստում մը կ'ուզէր որպէս ֆաղափական խաղաթուղթ օգտագործել Թուրքիան Գերմանիոյ կողմին պատերազմի մէջ ներքաշելու համար:

1) 1947ին, Երեւանի մէջ հրատարակուած է «Գերմանիայի Արտաքին Գործերի Մինիստրութեան Փաստաթղթեր»ուն 2րդ պրակը՝ «Գերմանական Քաղաքականութիւնը Թուրքիայում (1941-1943 թ.թ.)» վերնագրով, ուր տեղ գտած Փանթուրանիզմին հետ առնչուած վաւերաթուղթերէն քաղուածք մը կատարած է Հրաչիկ Սիմոնեան «Թուրք-Հայկական Յարաբերութիւններ Պատմութիւնից» գիրքին մէջ, էջ 486-496:

1) Տե՛ս «Սովետա-Թրքական Յարաբերութիւնների Պատմութեան Հակագիտական Լուսաբանումը Ժամանակակից Թուրք Պատմագրութեան Մէջ», Բ. Սահակեան, Երեւան, 1969, էջ 95:

2) «Turkism And The Soviets», Charles Warren Hastler, London, 1957, էջ 172:

3) «Արարատ» Օրաթերթ, 1 Յունուար 1993:

Ֆաշիստական Գերմանիոյ ջախջախումը ի թերեւ կը հանդիսանայ Փանթուրանիստներուն բոլոր երազները: 1945 Փետրուարին, երբ արդէն վնասուած էր պատերազմին ելքը, Թուրքիա ձեռնարկեց պատերազմ կը յայտարարէ Գերմանիոյ դէմ:

Մինչ այդ, 1944 Մայիսին, քաղաքական հսկայ աղմուկի մը ընկերակցութեամբ, Փանթուրանիզմը Թուրքիոյ մէջ պաշտօնապէս կը յայտարարուի օրէնքէ դուրս. կը ձեռքակալուին Փանթուրանիստ շատ մը յայտնի գործիչներ, որոնցմէ 23ը կը դատապարտուին 2-10 տարուան բանտարկութեան: Այդ օրերուն, նախագահ Իսմէթ Ինէնիւ, Երիտասարդութեան Տօնին առիթով իր արտասանած ճառին մէջ խստօրէն կը դատապարտէ Փանթուրանիզմը, այն գտնելով Թուրքիոյ համար խիստ վնասակար: Թրքական իշխանութիւնները կը ձեռքակալեն նաեւ Խորհրդային Միութենէն փախած 195 փախստականներ եւ գանձ կը յանձնեն Խորհրդային իշխանութիւններուն:

Կատարուած այս դիմափոխութեան եւ կտրուկ շրջադարձին պատճառները ակնյայտ էին: Համաշխարհային Պատերազմի ելքը արդէն իսկ յստակ էր եւ Թուրքիա կ'ուզէր ինքզինքն զանազան յաղթանակը տարած երկիրներու շարքին. ուստի, ճիշդ կը նկատէ պատմաբան Քիթ Երբ կը գրէ. — «*Կ'երեւի թէ թրքական իշխանութիւնները քաղաքական որոշում մը առած էին ճշտելու Փանթուրանական շարժումները, յուսալով որ այս քայլը իրենց համար բարենիշ մը կ'ապահովէ Մոսկուայի մօտ*»<sup>1</sup>: Այս տեսակէտը պաշտպանած են նաեւ կարգ մը բուրք պատմաբաններ:

Հրապարակուած փաստագրական նիւթերը բաւ են, համոզուելու համար որ Համաշխարհային Բ. Պատերազմին, Փանթուրանիզմը դարձած է Թուրքիոյ պետական կիսապաշտօնական գաղափարախօսութիւնը, իսկ պատերազմի աւարտէն անմիջապէս առաջ... այդ նկատուած է վնասակար:

1) Տես «Short History Of The Middle East», Kirk, LnՄոսկու, էջ 267:

## Փանթուրանիզմը Պաղ Պատերազմի Տարիներուն

Համաշխարհային Բ. Պատերազմի աւարտէն անմիջապէս ետք, 1947 Մարտին, Ա.Մ.Ն.ի նախագահ Հանրի Թրումէն կը հրապարակէ Ամերիկայի արտաքին գաղափարականութեան ռազմավարական սկզբունքները՝ ծանօթ «Թրումէնեան Վարդապետութիւն»ը, որուն միջոցով Ա.Մ.Ն. յստակ կը դարձնէ թէ հակախորհրդային իր պայքարին մէջ Թուրքիան եւ Յունաստանը կը նկատէ իրեն համար կենսականօրէն կարեւոր շրջաններ: Յանձնա Ա.Մ.Ն.ի, Թուրքիա կը գտնէ իր նոր տէրը (այդ շրջանին է որ ձեռքակալուած Փանթուրանիստները կը վերադասուին եւ ազատ կ'արձակուին): 1951ին Թուրքիա կ'անդամակցի ՆԱԹՕին: 1955ին կ'անդամակցի Պաղտատի Ուխտ-ին՝: 1959ին կ'ընդունուի Ամերիկո-Թրքական ռազմական համաձայնագրով, Ա.Մ.Ն. իրաւունք կ'ունենայ Թուրքիոյ տարածքին հըրքիոյն ռազմակայաններ հաստատել: Մէկ խօսքով, Թուրքիա կը դառնայ Արեւմտեան ճամբարի հաւատարիմ զինուորը:

Պաղ պատերազմի տարիներուն, Թուրքիա Մերձաւոր Արեւելի մէջ կը դառնայ ՆԱԹՕի հարուածող բազուկը: Հակախորհրդային եւ հակահամայնակար պայքարը Թուրքիոյ համար լոկ վարչակարգի եւ գաղափարախօսութեան նախընտրութեան պայքար չէր. այդ պայքարին մէջ աշխոյժ դերակատարութիւն ունենալով Ա.Մ.Ն.էն ռազմական եւ տնտեսական մեծամեծ նըպաստներ ստանալը եւս հարցին մէկ մասն էր միայն: Թրքական գաղափարական միտքը շատ չարչարուելու պէտք չունէր համոզուելու համար, որ Փանթուրանիզմի իրականացումը

1) «Պաղտատի Ուխտ»ը կամ ՍԵՆՂՕն (The Central Treaty Organization), Ա.Մ.Ն.ի Հովանաւորութեամբ կազմուած Հակախորհրդային զինուորական դաշինք մըն էր կնքուած Թուրքիոյ, Իրաքի, Փաքիստանի, Իրանի եւ Անգլիոյ միջեւ:

կ'անցնէր Խորհրդային Միութեան փլուզման ընդմէջէն: Ճիշդ է, որ այդ տարիներուն Փանթուրանիզմը Թուրքիոյ մէջ պաշտօնական ֆաղափականութիւն չի դառնար, սակայն, իրատես կեցումածով մը, այդ կը ֆողարկուի հակախորհրդային պայքարի ֆողով: Այս մասին յոյն պատմաբան Նիփօս Մարանկօս կը գրէ. — «Անկասկածօրէն Թուրքիոյ կարեւոր դրացիներէն է նաեւ Խորհրդային Միութիւնը: Սակայն, այս ուղղութեամբ, Թուրքիա իր թշնամութիւնը բացայայտ, հետեւողական եւ աշխոյժ ձեւով հանդէս չի բերեր: Թրքական կառավարութիւնները կը նախընտրեն լուռ, կողմնակի եւ պարագայական ձեւերը եւ ուրախութեամբ կը ծրագրեն Թուրքիոյ պատմական "rendez-vous" ն Խորհրդային Միութեան հետ: Այդ ժամանակ է որ անոնք, Թուրքիոյ ատելութիւնը այս դրացիին հանդէպ տարբեր ձեւերով ցոյց կու տան բոլորին՝ ներառեալ իրենց անդրովկիանոսեան հովանաւորներուն»<sup>1</sup>:

Փանթուրանիզմի հետապնդումը հակախորհրդային պայքարի ընդմէջէն յառաջ տանելու վարձագիծը ֆաղափական երեւակայութեան մը ծնունդը չէր: Մօտիկ անցեալի պատմութիւնը կը փաստէր թէ Փանթուրանիզմի կենսագործման իրական հնարաւորութիւններ ստեղծուած էին միայն այն ատեն երբ Ռուսական Կայսրութիւնը, ապա եւ Խորհրդային Միութիւնը, գտնուած էին ներքին կամ արտաքին ցնցումներու դիմաց: Այս մասին դիպուկ կը նկատէ Թուրքիոյ ամերիկեան ռազմախարհախնամներուն մէջ ծառայած Ջօր. Չարլզ Ուորըն Հոսդլըր երբ կը գրէ. — «20րդ դարուն, շրջանէն ներս պատերազմներու եւ յեղափոխական փոփոխութիւններու ժամանակ, թրքական քաղաքականութիւնը, պատմական օրինաչափութեամբ մը շարժած է դէպի Փանթուրքիզմ: Սա, երիտթուրքերու քաղաքականութիւնն էր Ա. Աշխարհամարտի ընթացքին եւ 1917ի Ռուսական Յեղափոխութենէն ետք: Էնվեր Փաշայի կատարած արկածախնդիր թափառումները Թուրքիստանի մէջ, 1921–22ին, քաղաքական այս գիծին հետեւանքն էր: Նոյն տրամադրութիւնները ակներեւ էին Թուրքիոյ մէջ 1941–43ին, Խորհրդային Միութեան վրայ գերմանական յարձակումին ընթացքին: Վերոյիշեալ փաստերը կ'արդարացնեն այն պնդումը թէ Երրորդ Աշխարհա-

մարտի մը պարագային — կամ երբ Պաղ Պատերազմը դառնայ շեշտակի — կամ երբ ներքին դժուարութիւնները Խորհրդային Ոյժը բերեն անդամահատման, թրքական ազգայնականութիւնը (յատկապէս թրքական ազգայնականութեան Փանթրքական տարատեսակը) կ'ունենայ իր ազդեցութիւնը թրքական հանրապետութեան եւ Խորհրդային Միութեան քաղաքականապէս զարգացած թրքալեզու ժողովուրդներուն գործունէութեան վրայ»<sup>1</sup>:

Պաղ Պատերազմի եւ անոր յաջորդող տարիներուն, որքան ալ Թուրքիոյ պաշտօնական ֆաղափականութիւնը զգուշաւոր կ'ըլլայ Փանթուրանիզմի մասին ուղղակի արտայայտուելէ, կ'ըլլան սակայն սպողումներ, թափուած նպատակներու ակամայ խոստովանութիւններ, որոնցմէ քանի մը հատը կու տանք որպէս նմոյշ. —

ա) 1955 Մարտին, Պոլսոյ մէջ տեղի կ'ունենայ բուրժվարանդիներու եւ տեղափոխուածներու Ա. համագումարը, ուր ելոյթ ունեցողները կոչ կ'ընեն ընդարձակել թրքական աշխարհի սահմանները՝ «ազատագրելով Թուրքիայէն դուրս բընակուող բուրժ եղբայրները»: Համագումարը, «Մեծն Թուրքիոյ» սահմաններուն մէջ կը մտցնէ Կովկասն ու Միջին Ասիան: Համագումարը պատուոյ նախագահ կ'ընտրէ վարչապետ Ատման Մեմետեքսը<sup>2</sup>:

բ) 1966ին, Անգարա տպուած «Թրքերէն Լեզուի Բացատրական Բառարան»ը կը գրէ. — «Թուրք = Գոյական, յատուկ անուն: Անուանումն է ժողովուրդի մը, որ հին ժամանակներէն բնակած է Միջին Ասիոյ մէջ: Այժմ այդ ժողովուրդը կ'ապրի եւ կը բնակի Պաշտաններէն մինչեւ Չինաստան»<sup>3</sup>:


գ) 1977 Դեկտեմբեր 1ի թիւով, «Թերեխիւման» թերթին մէջ Փրոֆ. Ֆարուք Թիմուրթաշ, «Մեծն Թուրքիոյ ձամբուն վրայ» խորագրեալ յօդուածին մէջ յստակօրէն կը գրէ. — «Մեր ժամանակաշրջանի ազգային գաղափարախօսութիւնը մեծ Թուրքիոյ մը ստեղծումն է: "Իսլամ եւ ազգայնական թուրք"

1) «Turkey : Ruthless Trouble-Maker Of The Balkans», Nikos Marangos, Աթէնք, 1986, էջ 137:

1) «Turkism And The Soviets», Charles Warren Hostler, London, 1957, էջ 3:

2) «Հայ ժողովրդի Նոր Շրջանի Պատմութեան Նենդափոխումը Թուրք Պատմագրութեան Մէջ», Ե. Սարգիսեան, Երեւան, 1963, էջ 95:

3) «Աւանկարտ» 1/4/1990:



«Ատրպէյճանի Աշակութային Հիմնարկ» մատենաշարի 37րդ Հրատարակութիւնը (Անգարա, 1989), որ կը կոչուի «Լեռնային Ղարաբաղ—Յօրինումներ եւ Իրողութիւններ», տպած է սոյն քարտէսը՝ ուր կ'երեւի Փանթուրանիզմի առջեւ բացուած ճամբան եւ փոքրիկ "Էրմէնիստան"ը...

նոյն իմաստը ունին: Բառերը կրնան տարբեր ըլլալ, սակայն աւնոնք կ'արտայայտեն մէկ նպատակ.— Մեծն Թուրքիա»:

դ) 1980ին Թուրքիոյ նախագահական պաշտօնին հասած Թուրքուք Էօզել, այդ պաշտօնին հասնելէն քանի մը ամիս առաջ կը յայտարարէ.— «Մենք կրնանք աշխարհի մէջ տիրող ուժերուն յարաբերութիւնը փոխել՝ եթէ մեր դաշնակիցները գնահատեն մեր դերին կարեւորութիւնը: Խորհրդային Միութեան մէջ կան թրջական ծագումով 87 միլիոն Հայրենակիցներ. Իրանի բնակչութեան կէսը թուրք է: Ինչպէս կը տեսնէք, եթէ Թուրքիան ուզէ եւ եթէ մեր դաշնակիցները Համաձայն ըլլան, միջազգային մակարդակի վրայ շատ բան կրնանք փոխել»<sup>1</sup>:


1) «السفير», 1980, Յունիս 10:

Կարելի է երկարել մէջբերումներու այս շարքը. կը բաւարարուինք մէջբերում մը եւս ընելով, անոր շուրջ կատարելով փոքր խորհրդածութիւն մը: 1973ին, Նիխալ Աթարզ, «Թուրանցիները» խորագրեալ յօդուածին մէջ կը գրէ.— «Փանթուրանիզմը մեզի Համար սրբազնագոյն նպատակ մըն է... երէկ Հերթը Հաթայինն էր, այսօր Կիպրոսինն է, իսկ վաղը՝ Հերթը պիտի գայ Արեւմտեան Թրակիոյ եւ Քերքուքի եւ Հետեւեալ օրն ալ Ատրպէյճանը եւ Հուսկ ուրեմն աւելի անդիինը...»:

Ինքնին, բաւական խօսուն է Ն. Աթարզի համարակ յայտարարութիւնը: Ճիշդ է, որ Փանթուրանիզմը իր սուր ծայրով ուղղուած է դէպի Անդրկովկաս, սակայն, թրքական ծաւալապաշտութիւնը առիթը չուզեր փախցնել Թուրքիոյ տարածքները բոլոր կողմերէն ընդարձակելու համար: Ժամանակակից Թուրքիոյ նուիրուած աշխատութիւններուն մէջ, յանախ կը կրկնուի «Միլիոններ» օրաթերթի 16 Օգոստոս 1986ի յայտնած միտքը, որ կ'ըսէ.— «Չկայ դրացի երկիր մը որուն Հետ Թուրքիա Հարց չունենայ: Ան Հարցեր ունի Պուլկարիոյ, Յունաստանի, Սուրիոյ, Իրանի, Իրաքի եւ Խորհրդային Միութեան Հետ»: Թէ այդ հարցերէն իւրաքանչիւրը ե՞րբ կը բարձրացուի՝ այդ կախեալ է միջազգային ու շրջանային ռազմա-քաղաքական իրավիճակէն: Եւ իբօք, 1939 Յունիսին, Թուրքիա, օգտագործելով գաղութատիրական երկիրներու շահադիտութիւնները, իրեն կցեց սուրիապատկան Ալեքսանտրէթի Սաննագը՝ Հաթայը: Այդ բռնակցումէն տարիներ ետք, Փանթուրանիզմի տեսաբաններէն Իսմայիլ Պալթասօղլու «Թուրք Տիլի» լեզուագիտական հանդէսին մէջ, բացատրելու համար որ Մեծն Թուրքիոյ մէջ կրնան գոյութիւն ունենալ նաեւ ոչ թրքախօս թուրքեր՝ կը բերէ Հաթայի բնակչութեան օրինակը, որոնք արաբախօս ըլլալով բնիկ թուրքեր են<sup>2</sup>:

Ն. Աթարզի վերոյիշեալ յայտարարութեանէն տարի մը անց, իրապէս որ "եքթը" Կիպրոսին կու գայ: 1974 Յունիսին, թրքական զօրքերը կը գրաւեն հիւսիսային Կիպրոսը եւ 1983 Նոյեմբերին կը յայտարարուի «Հիւսիսային Կիպրոսի Թրքական Հանրապետութիւն»ը: Հակառակ եղած բազմապիսի միջամտութիւններուն, հակառակ ՄԱԿի թիւ 789 որոշումին, որ Կիպրական Հարցի անլոյծ մնալուն պատասխանատուն կը նշուէր թրքական կողմը՝ Թուրքիա, մինչեւ թուականս կը մնայ

1) «The Trap Of Pan-Turkism», Mihail Yanchev, Սոֆիա, 1989, էջ 35:



Մոցի պատերազմին Իրաքի հաւանական բաժանումը կատարող շրջանառութեան մէջ գրուած քարտէս մը:

անգլիշոյ: Աւելին, 1997 Յուլիսին, Կիպրոսի գրաւման 23րդ տարեդարձին առիթով իր արտասանած նաոխն մէջ, Թուրքիոյ փոխ վարչապետ Պիլէնք Էնելիտ, կը խոստանայ Հիւսիսային Կիպրոսի «մասնակի միաձուլումը» Թուրքիոյ:

Չուշանար Գաւրուքի "հերթը": Մոցի Բ. Պատերազմին, 1990-1991, թրքական պետական շրջանակները, ամենայն լրջութեամբ կը ֆննարկեն կացութեան օգտուելով Քերքուքի շրջանը գրաւելու հնարաւորութիւնները: 1991 Յունուարին, նախագահ Էօզել իր մօտ կը հրահրէ վարչապետ Եիլտըրմ Աֆյուլաթը եւ սպայակոյտի պետ Ջօր. Նաժիպ Թուրումբայը եւ անոնց առջեւ կը դնէ Մուսուլն ու Քերքուք գրաւելու ծրագիրը<sup>1</sup>: Եւ երբ, այդ շրջանին Թուրքիա այցելած Խորհրդային

Միութեան արտաքին գործոց նախարար Շեվարտնաձէ, Անգարայէն կը յայտարարէ թէ «Իրաքի ամբողջականութիւնը երաշխաւորուած չէ»՝ քաղաքական դէտերը լաւապէս կ'ըմբռնեն թէ հարցը ի՞նչ բանի կը վերաբերի: Ցարդ, ամբողջապէս յայտնի չէ թէ Թուրքիա քաղաքական ի՞նչ ազդեցութիւններու տակ չդիմեց այդ ֆայլին: Յստակը այն է, որ բուլիսներու ետին տեղի ունեցած գործարքներէ ետք, Թուրքիոյ քաղաքական միտքը Քերքուքի գրաւման կապակցութեամբ կասկածելի եւ անորոշ կարծիքներ սկսաւ արտայայտել: Մինչ նախագահ Էօզալ, 1992 Դեկտեմբերին, «Թուրքիոյ Ազգային Անվտանգութիւնը եւ Հողային Ամբողջականութիւնը» նիւթին շուրջ տուած դասախօսութեան մէջ կ'ըսէր. — «Այսօր, ուրիշներուն հողը գրաւելը ծայրայեղօրէն սխալ գործ մըն է: Այդ մեծ վտանգ մըն է ձեր գլխուն: Մեր հողերը կը բաւեն մեզի: Մոցի Պատերազմին ժամանակ գրուեցաւ թէ ախորժակներ ունիմ Քերքուքի հանդէպ: Սուս է»<sup>1</sup>, անդին, Ռաֆահ Կուսակցութեան պետ եւ սպագային վարչապետ Նաժմէտտին Էրպաֆան կը յայտարարէր. — «Մուսուլը եւ Քերքուքը անգլիացիներն է որ գողցան Թուրքիայէն: Թուրքիա, Մոցի Պատերազմի ժամանակ կրնար իր իրաւունքները վերագործնել, սակայն, ցաւօք սրտի, չըրաւ այդ: Հիմա շատ ուշ ենք»<sup>2</sup>:

Կիպրոսէն, Քերքուքէն եւ Ալեքսանտրէքի Սաննաֆէն անկախ, Թուրքիա հարցեր ունի նաեւ Յունաստանի եւ Պուլկարիոյ հետ՝ որոնք դարձեալ արդիւնքն են անոր տարածողական ձգտումներուն: Նոյն տրամադրութիւններուն արդիւնք է նաեւ Քիւրտ ժողովուրդին հանդէպ անոր վարած ցեղապաշտական, այլամերժ քաղաքականութիւնը: Այս կապակցութեամբ պատմաբան Ժիհատ Սալեհ «Թրքական Փանթուրանիզմը Արմատականութեան եւ Ֆաշիզմի Միջեւ» գիրքին մէջ կը գրէ. — «Տարբեր հանգրուաններուն եւ տարբեր միջոցներով, Փանթուրանիզմը մնաց թրքական իշխանութիւններուն վարած քաղաքականութեան գլխաւոր շարժիչ ոյժը, որպէսզի անոնք կարենան իրենց տիրապետութիւնը ամուր պահել Թուրքիոյ ազգային փոքրամասնութիւններուն վրայ եւ պատրուակներ գտնել իրենց զբաղի երկիրներուն ներքին գործերուն միջամտելու համար: Պարագայ մը, որ Թուրքիան վերածեց թշնամիներով

1) Այս լուրը առաջին անգամ կը հաղորդէ թրքական «Հուրրիյէթ» թերթը իր 6 Յուլիս 1994ի թիւով, որուն հիման վրայ, Լիբանան հրատարակուող «شؤون تركية» (Թրքական Հարցեր), գիտահետազոտական պարբերաթերթը, իր 13րդ թիւին մէջ (1994 Աշուն), «Մոցի Պատերազմի Գաղտնիքներէն. — Էօզալը եւ Մուսուլն Ու Քերքուքի Խնդիրը» խորագրին տակ կը կատարէ ուշագրաւ ուսումնասիրութիւն մը:

1) «شؤون تركية» թիւ 5, 1992 Յունուար, էջ 31:  
2) Նոյն, էջ 18:

չըջապատւած կղզիի մը»<sup>1</sup>:

Միւս կողմէ, 1960ականներէն, թուրք հասարակական մտքին մօտ կը վերագարթնի «արտասահմանեան հայրենակիցներուն» հանդէպ ցոյց տրուած հետաքրքրութիւնը որպէս Irredentaja<sup>2</sup> բնական ձեւ մը ներկայացնելու գաղափարը: Անդրկովկասի եւ Կեդրոնական Ասիոյ թրքացել ժողովուրդներուն հանդէպ հետաքրքրութիւնը որպէս Irredenta ներկայացնելու փորձը նոր չէր. այդ, առաջին անգամ կատարուած էր Փանթուրանիզմի վաղ գաղափարախօսներէն Թեֆիկ Ալփի կողմէ, տակաւին Օսմանեան Կայսրութեան օրերուն: Թեֆիկ Ալփիին կը պատկանին թրքական Irredentaja մեկնաբանող սա տողերը. — «Irredentaja, որ ուրիշ ազգերու պարագային կրնայ նկատուիլ որպէս շոյալանք (երբեմն դժուարին եւ ծախսալից), թուրքերու համար քաղաքական եւ ընկերային անհրաժեշտութիւն մըն է: Թրքական Irredentaja շարժառիթը, ի տարբերութիւն այլ ազգերէն, բռնազրաւումներ կատարելու ընչաքաղցուցիչներ չէ, որովհետեւ, թուրքիան պէտք չունի յաւելեալ տարածքներու: Անատոլիայի բերրի հողերը կրնան սնունդ եւ բնակարան ապահովել թուրքիոյ ներկայ բնակչութեան երեք անգամը հաշուող ժողովուրդի մը: Հայրենաբնակ թուրքը նիւթականէն աւելի պէտք ունի բարոյական ընդարձակումի եւ զօրացման: Օսմանեան թուրքերը, շատ ազդուած են իրենց երկրին պայմաններէն եւ շատ բան կորսնցուցած են իրենց ազգային արժանիքներէն, մինչ, տարբեր պայմաններու մէջ ապրող արտասահմանի թուրքերը աւելի լաւ կրցած են պահել այդ արժէքները: Օրինակի համար, Օսմանեան թուրքերը չեն կրցած պահել իրենց նախահայրերուն յայտնի ռազմական ոգին: Անդին, Քաշքայ ցեղերը Պարսկաստանի մէջ, Աֆղանները եւ այլ թրքական տարրեր ամբողջապէս պահպանած են շօշափելի այս արժէքը: Օսմանեան թուրքերը, դարեր ամբողջ քաղաքական յատուկ վարչաձեւի մը մէջ գտնուելով, պաշտօնակալութիւնն ու դիւանակալութիւնը դարձուցած են իրենց գերագոյն նպատակը: Հոգեկան եռանդը այլեւս անոնց մէջ գոյութիւն չունի: Հա-

կառակը, Ռուսիոյ մէջ ապրող Աարպէյճանի թուրքերուն մօտ այս արժէքը պահպանուած է շատ բարձր մակարդակի վրայ»<sup>1</sup>:

Թրքական Irredentaja այս ակունքներէն սնող նոր տեսարաններէն Նէֆտէ Սանֆար, իր «Արտասահմանի թուրքերու Հարցը» ուսումնասիրութեան մէջ, կը գտնէ թէ թուրքիոյ հետաքրքրութիւնը դէպի դուրսի իր ազգակիցները կը սահմանափակուի հիմնական երեք կէտերով՝ 1) Ազգային արժանապատուութիւն, 2) Պետական անվտանգութիւն, 3) Մարդասիրական հարց:

Փանթուրանիզմը Irredentaja ձեւով ներկայացնելը, խորքին մէջ, անոր յարձակողական-տարածողական բնոյթէն նահանջ մըն էր դէպի աւելի քաղաքակարգի թրքեր՝ որուն պատճառը Խորհրդային Միութեան հզօր ներկայութիւնն էր: Այլ պատճառ մըն էր նաեւ Պաղ Պատերազմի ձիւնհալը՝ որուն ստեղծած մթնոլորտին մէջ, շատ ու շատ երկիրներ սկսած էին պաշտօնական ձեւով այլարձայն կապեր հաստատել արտասահմանեան իրենց ազգակիցներուն հետ: Ի՞նչ բան կ'արգիլէր որ թուրքիա եւս չփորձէր ունենալ նոյնանման կապեր...

1) «الطورانية التركية بين الاصولية والفاشية», էջ 6, 1987, Պէյրութ:

2) Irredentaja — Քաղաքական հասկացութիւն մըն է որ կը գործածուի այն պարագային, երբ պետութիւն մը, բացի իր քաղաքացիներէն, հետաքրքրուի նաեւ այլ երկիրներու մէջ բնակող իր ազգակիցներուն ճակատագրով: Irredentaja եզրը առաջին անգամ գործածուած է 19րդ դարու վերջաւորութեան, երբ Իտալիա հետաքրքրուած է իր սահմաններէն դուրս գտնուող Իտալացի ազգաբնակչութեամբ:

1) «The Turkish And Pan-Turkish Ideal», Tekin Alp, Լոստոն, էջ 70: Այս մասին տես նաեւ «Pan-Turkism: A study of Irredentism» Jacob Landau, Լոստոն, 1981:

## Փանթուրանիպը Խորհրդային Միութեան Քայքայումէն Ետք

Խորհրդային Միութեան քայքայումը եւ Կովկասի ու Միջին Ասիոյ մէջ թրփախօս-իսլամ անկախ հանրապետութիւններու յառաջացումը, Փանթուրանական միտքը կը դնէ նոր հեռանկարներու առջեւ:

1988էն, կը սկսի Խորհրդային Միութեան քայքայման գործընթացը: Իւրաքանչիւր հանրապետութեան ներս կը սկսին տեղի ունենալ ժողովրդային զանգուածային շարժումներ: Ժողովրդային նակատներու կողմէ ղեկավարուող այդ շարժումները, համընդհանուր երեւոյթի մը՝ Խորհրդային Միութեան քայքայումը՝ տեղական արտայայտութիւնները ըլլալով մէկտեղ, անոնցմէ իւրաքանչիւրը կը կրէր նաեւ տեղական պայմաններուն իւրայատկութիւնները: Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզին մէջ յառաջ եկած ժողովրդային շարժումը, շատ բնականօրէն, իր առջեւ կը դնէ Ղարաբաղը Ատրպէյճանի տիրապետութեան տակէն դուրս բերելու առաջնահերթ հարցը: Ղարաբաղի նակատագիրը հիմնական խնդիր կը դառնայ հարցին կենսականօրէն շահախնդիր երկու կողմերուն՝ Հայաստան եւ Ատրպէյճան՝ ժողովրդային Շարժումներուն համար: Ղարաբաղ կը թեւակոխէ իր ազատագրական պայքարին նորագոյն հանգրուանը:

Խորհրդային Միութեան փլուզումը, պատմական այն պահն էր, որուն սրտատրոփ կը սպասէին Փանթուրանիստները: Սակայն, երկու պարագաներ պատճառ կը դառնան որ անոնց նախատեսումները սահուն չընթանան.—

ա) Խորհրդային վարչակարգը փուլ կու գայ յարաբերաբար խաղաղ ընթացքով մը: Յառաջ եկած նոր Ռուսաստանը, ընդհանուր առմամբ կը ժառանգէ Խորհրդային Միութեան ռազմական հզօրութիւնը: Կարն տեղատուութեան մը ետք, Ռուսիա կը բռնէ նաեւ իր քաղաքական վարկն ու հեղինակու-



Թրքական դրօշակը եւ Քեմալ Աթաթիւրքի նկարը Պաքուի մէջ տեղի ունեցած ցոյցերուն ժամանակ:

թիւնը վերականգնելու ուղին:

բ) Ղարաբաղեան Հարցին վերարժարծումը եւ անոր ստացած տարողութիւնը բոլորովին անսպասելի էր: Փանթուրանական հաշուարկներուն մէջ թիրախը Հարաւային Հայաստանն էր՝ Զանգեզուրը, մինչդեռ Ղարաբաղը կու գար գլխիվայր շրջելու բոլոր նախահաշիւները:

Ատրպէյճանի մէջ յառաջ եկած ժողովրդային ձակաւոր, իշխանութեան հասնելու եւ Ղարաբաղի ազգային-ազատագրական պայքարը ճնշելու գոյց նպատակներով, սկզբնական շրջանին, կը փորձէ հաւասարապէս օգտուիլ շրջանի 2 մեծ պետութիւններէն՝ Պարսկաստանէն՝ որուն հետ ընդհանրական գիծ ունէր կրօնական պատկանելիութիւնը եւ Թուրքիայէն՝ որուն հետ ընդհանրական գիծ ունէր ազգային-լեզուական պատկանելիութիւնը: Ատրպէյճանի մէջ հակախորհրդային

շարժումը կը ստանայ Փանիսլամական եւ Փանթուրանական գունաւորում: Փանիսլամական ձգտումները իրենց գագաթնակետին կը հասնին 1990 Յունուարին, երբ «Մեծն Ատրպէյնան»-ի կոչերով ազերի ըմբոստներ, կը խորտակեն Խորհրդային Ատրպէյնանի եւ Պարսկաստանի սահմանաքաժան կառոյցները: Երեւոյթին ի տես, Իրանի հոգեւոր պետ Այաթոլլահ Ալի Խամենէի կը յայտարարէ թէ Խորհրդային Ատրպէյնանի մէջ տեղի ունեցող ցեղային բնոյթով բախումներուն պատճառը «իսլամութեան ուժեղ զարթօնն է»: Այդ օրերուն, իրանեան եւ ատրպէյնանական մամուլին մէջ, կը շատնան փոխհամակրական հրապարակումները եւ Ատրպէյնան, Իրանի առաջարկով եւ միջնորդութեամբ, պաշտօնապէս անդամ կը դառնայ Իսլամական Երկիրներու Համագումարին: Սակայն, Փանթուրանական տրամադրութիւնները կ'արտայայտուին շատ աւելի վաղ եւ շատ աւելի հետեւողական ձեւով: Պաֆու մէջ տեղի ունեցող զանգուածային ցոյցերուն, առաջին օրէն իսկ, կը պարզուին թրքական դրօշակներ եւ Քեմալ Աթաթիւրքի նկարները: Շարժման ղեկավարներէն մէկը՝ Ի. Ալիեւ՝ 1989 Սեպտեմբեր 17ին Ապու Տապիի «Ալ Պայան» թերթին տուած հարցազրոյցին մէջ կ'ըսէ. — «Սակայն մեր նպատակն է "Մեծ Թուրքիայի" ստեղծումը կամ արտասահմանեան բոլոր թուրքերուն միաւորումը Թուրքիոյ հովանիին տակ»<sup>1</sup>: Ժողովրդային ձակատի մէկ այլ ղեկավար Նեմաթ Փանախով (Սումկայիթի հակահայ ջարդերուն գլխաւոր կազմակերպիչներէն), թրքական «Թիւրքիյէ» օրաթերթին տուած հարցազրոյցին ընթացքին կու տայ նաեւ իր կողմէ գրուած բանաստեղծութիւններէն մէկը ուր կ'ըսուի. —

*«Խազարը, Պայքալը, Արալը տեսայ,  
Տեսայ, հոգին վրան՝ վիրաւոր թաղեցի.  
Թուրանը ինձմէ հեռու տեսայ,  
Բարե՛ւ, կախաղա՛ն...  
Խրխիզ եմ, Իւզպէք, Ղազախ, Թուրքմէն եմ  
Պաշկիր եմ, Քերքուքի կարօտը կը քաշեմ,  
Քու տեսած պանդուխտ թուրքն եմ,  
Բարե՛ւ, կախաղա՛ն»<sup>2</sup>:*

1) «Արարատ», 24/10/1989:


2 «Սփիւռք», 1990 Դեկտեմբեր, թիւ 18:

Փանիսլամական եւ Փանթուրանական տրամադրութիւններէն հաւասար չափով օգտուելու այս լարախաղացութիւնը երկար չի տուեր: Կշիռը կը թեփի դէպի Փանթուրանականութիւնը: Այս թեփումը ունէր իր տեղական, շրջանային եւ միջազգային պատճառները:

Խորհրդային Միութեան շրջանին, Ատրպէյնան՝ յատկապէս մայրաքաղաք Պաֆու՝ "Եւրոպականացած" էր եւ ժողովրդային լայն խաւերուն համակրութիւնը դէպի Եւրոպական ձեւի դեմոկրատիզմը կ'երթար՝ որուն շատ աւելի նման էր լայիք Թուրքիան քան իսլամական Իրանը: Ազերին, ինքզինք շատ աւելի կապուած կը զգար Թուրքիոյ իր ազգակիցին հետ՝ քան Պարսկաստանի իր կրօնակիցին՝ եւ լաւ գիտէր թէ Թուրքիոյ շահագրգռուածութիւնը շրջանին հանդէպ պատմականօրէն աւելի գործնական նախընթացներ ունի քան Իրանինը:

Թրքական թէ Իրանեան (իմա՝ Փանթուրանական թէ Փանիսլամական) հարցին որոշումը, միայն ազերիին կամֆէն կախուած չէր: Համայնավար վարչակարգին փլուզումով, այլ հանրապետութիւններու կարգին, Ատրպէյնանի եւ Կեդրոնական Ասիոյ իսլամական հանրապետութիւններուն մէջ եւս կ'առաջանայ գաղափարախօսական մշակութային բնոյթի պարապ մը: Այս պարապը լեցնելու պայքարը կը սկսին մղել Թուրքիան, Պարսկաստանը եւ որպէս լուսանցքային հաւակնորդ՝ Սէնտալական Արաբիան:

1979ի Իրանի Իսլամական Յեղափոխութեամբ, ամերիկամէտ քաղաքականութիւն վարող Շահի իշխանութիւնը տապալած էր եւ Թեհրան դարձած էր իսլամական կրօնի ամենէն կարեւոր կեդրոնը: Իրան որդեգրած էր շեշտակի ձեւով հակամերիկեան քաղաքականութիւն մը. այդ ծիրէն ներս ան կը պայքարէր Իսրայէլին եւ Սիոնիզմին դէմ: Իր հակազաղութատիրական կեցուածքներուն եւ ազգային-ազատագրական շարժումներուն թիկունք կենալուն պատճառով, Իրան, ԱՄՆի աջփին դարձած էր սահաբեկչական շարժումները քաջալերող երկիրներու ցուցակին պարագլուխը: ԱՄՆի արտաքին քաղաքականութեան կարեւոր հետապնդումներէն մին էր, եթէ ոչ ամենէն կարեւորը, նսեմացնել Իրանը եւ սահմանափակել անոր ազդեցութեան տարածումը յատկապէս իսլամական երկիրնե-



Հայաստանի "Դուռ"ին տիրանալու Թուրքիոյ եւ Պարսկաստանի պայքարը՝ դիտուած Հայրենի ծաղրանկարիչին աչքերով:

րուն վրայ: Միւս կողմէ, Թուրքիա կը շարունակէր մնալ ԱՄՆի հաւատարիմ դաշնակիցը: Ուստի, քաղաքական միաբեւեռ աշխարհին գերիզօրը դարձած ԱՄՆի շահերը կը պահանջէին որ Թուրքիոյ ազդեցութիւնը տարածուէր Անդրկովկասի եւ Կեդրոնական Ասիոյ վրայ: Այս դիտանկիւնէն, ճիշդ կը նկատէ «Ալ Նիտա» թերթի քաղաքական մեկնաբան Աշրաֆ Ալ Սէյիտ, երբ իր «Թուրքիոյ Փանթուրանական Ախորժակները – Իսլամական Կորսուած Դեբակատարութեան Մը Որոնումով» յօդուածին մէջ դիտել կու տայ թէ այս քաղաքականութեամբ, ապահովական օղակ մըն է որ կը հաստատուէր Իրանի շուրջ, պատկերասրահով համար արմատական իսլամականութեան տարածումը<sup>1</sup>: Ապահովական այդ օղակը ոչ միայն կ'ընդհատուէր Հայաստանի կողմէ, այլեւ, Հայաստան-Իրան բարիդրացիական յարաբերութեան որպէս արդիւնք, Հայաստան-Իրան սահմանը Իրանին համար կը դառնար դէպի տարածաշրջանը բացուող ցա-



Տեմիրէլ եւ Հայտար Ալիեւ Նախիջևանի մէջ:

մաքային կարեւոր անցք մը: Զանգեզուրը, որ Փանթուրանից-մին համար խիստ կարեւոր տարածք մը կը նկատուէր՝ կը ստանայ միջազգային նշանակութիւն: Ցամաքային այդ կապը, հանդիպակած կողմէ դիտած, կարեւոր նշանակութիւն կը ստանայ նաեւ Ռուսիոյ համար: Միւս կողմէ եւրոպական երկիրները, որոնք իրենց միջին-արեւելեան քաղաքականութեան մէջ հակասութիւններ կը դրսեւորէին ԱՄՆի հետ, Իրանի ազդեցութեան սահմանափակման հարցին կապակցութեամբ լուռ համախոհութիւն մը հանդէս կը բերեն: Այս կը վկայէ Գերմանիոյ վարչապետ Հելմուտ Գոլի 1993 Մայիսին Թուրքիա կատարած այցելութեան ընթացքին, Պոլսոյ Համալսարանէն Պատուոյ Տոկթորայի կոչումին ստանձման առիթով կատարած յայտարարութիւնը, երբ ան կ'ըսէ. – «Կեդրոնական Ասիոյ Հանրապետութիւնները մեծ յոյսեր դրած են Թուրքիոյ վրայ. Թուրքիա իր առջեւ դրած նոր նպատակներուն իրազորման համար կընայ վստահիլ Գերմանիոյ»:

Միջազգային այս ձեռնտու պայմաններուն տակ, կը սերտանան Թուրքիա-Ատրպէյճան-Կեդրոնական Ասիոյ Հանրա-

1) <<البناء>> 13/2/93:

պետութիւններ<sup>1</sup> այլաբնոյթ կապերն ու յարաբերութիւնները: Տեղի կ'ունենան պաշտօնական պատուիրակութիւններու բազմաթիւ փոխայցելութիւններ, որոնց ընթացքին կը կենտին համաձայնագիրներ, կը կատարուին յայտարարութիւններ, կը կազմակերպուին գիտական նստաշրջաններ, եւայլն: Այդպիսի այցելութեան մը ժամանակ Խրիստոստանի նախագահ Ասֆար Աղան, պիմաւորելով Թուրքիոյ ներքին գործոց նախարար Իսմէթ Սեզկինը, իր ողջոյնի ճառին մէջ կ'ըսէ. — «*Բարի գալուստ քեզ իսմէթ Աղա քու նախահայրերուդ հայրենիքը*»: Թրքական «ժուժուրիլէթ» բերթի թղթակից Ֆաթիհ Երմազ, Ղազախստանի մայրաքաղաք Ալմա Աթա կատարած իր այցելութեան վերադարձին կը գրէ. — «*Ա. — Թուրանական շարժումը, իբրև գաղափար եւ վարքագիծ, կենդանի է երկրին մէջ, մասնաւորաբար 1989 թուականէն ի վեր (այսինքն Գորբաչովեան շարժումի առարկայացման օրերուն), երբ հիմնուած է «Ալաշ» անուն կուսակցութիւն մը: Բ. — Այս կազմակերպութիւնը տակաւին խարխափումներու մէջ է անշուշտ, բայց կ'արտայայտէ ժողովուրդի կարեւոր մէկ հատուածին քաղաքական-մտածողական հակումը. — ա՛յն է՝ «Ղազախստանի մէջ հաստատել թուրք իսլամական պետութիւն մը եւ գործել ի նպաստ թուրանական շարժումի առարկայացման»:* Իր արտայայտութեանց մէջ շատ աւելի արմատական է Ալաշ կուսակցութեան անդամներէն Ռաշիտ, որ կ'ըսէ. — «*Մեր միակ ակնկալութիւնն է իրականացած տեսնել Թուրանականութիւնը: Այլ հանրապետութիւններու մէջ ալ մենք ունինք այս շարժումին յարած հոսանքներ: Թուրքիա պէտք է օգնէ մեզի: Պէտք է հաստատենք թրքական պետութիւն մը, որուն սահմաններուն մաս կազմեն միջին*

*ասիական եւ կովկասեան երկիրներ: Այս ձեւով միայն կրնանք տիրական ուժ դառնալ: — Եօթանասուն տարի, խորհրդային իշխանութիւնը մեր արիւնը քամեց: Հիմա կ'ուզենք, որ անոնք հեռանան այս հողերէն ու հոս խմբուին մեր խրխրզ, իւզպէք, ազերի, թիւրքմէն եղբայրները»<sup>1</sup>:*

Այս մթնոլորտին մէջ է որ, 1992ին, ռումբի պէս կը պայթի Թուրքիոյ նախագահ Թուրքուք Էօզելի «ԱՏՐԻԱԴԻՔ ՄՈՎԷՆ ՄԻՆՉԵՒ ԶԻՆԱԿԱՆ ՊԱՐԻՍՊ» հոչակաւոր լոզունգը: Ճիշդ է, որ վարչապետուհի Թանսու Զիլլեր, 1993 Սեպտեմբերին Մոսկուա կատարած այցելութեան ժամանակ այս առնչութեամբ թղթակիցներուն կողմէ տրուած հարցին կը պատասխանէ «*մոռնանք այդ լոզունգը*», սակայն, արդեօ՞ք դիւրին է մոռացութեան տալ նախագահի մը կողմէ արձակուած այնքան ծանրակշիռ լոզունգ մը: Տարակոյսէ վեր է, որ վարչապետուհին, Մոսկուայի մէջ կատարած «այդ լոզունգը մոռնալու» իր առաջարկին մէջ անկեղծ չէր: Որովհետեւ, երբ քանի մը տարի ետք, 1997 Մարտին, որպէս Թուրքիոյ արտաքին գործոց նախարար բացումը կը կատարէր Պոլսոյ մէջ հիմնադրուած Ղազախստանցիներու Հիմնադրամի Շէնքին, Էօզելեան լոզունգին համահունչ կը յայտարարէր. — «*Թրքական աշխարհը ուժեղ կը դառնայ միայն միասնութեան եւ միութեան պարագային: Խորհրդային Միութեան փլուզումէն յետոյ թուրքը գտաւ թուրքին: Ատրպէյճանի թուրքերը եւ թուրքմէն թուրքերը՝ բոլորս մէկ միասնութիւն կը կազմենք: Մենք մեծ ծրագրերն ենք ունինք: Անոնցմէ մէկն է կառուցումը այն երկաթուղիին, որ սկսելով Իւզպէքիստանէն եւ անցնելով Թուրքիայէն՝ պիտի հասնի մինչեւ Սպանիա»<sup>2</sup>:* Յամենայն դէպս, այդ լոզունգը չմոռցողներու կարգին էր ռուս ազգայնականութեան ներկայացուցիչ, Լիպերալ-Դեմոկրատ Կուսակցութեան պետ, երեսփոխան Վլատիմիր Ժիրինովսկին որ կ'ըսէ. — «*Թուրքիան պիտի յարձակի Կովկասի վրայ եւ շրջանէն ներս պատերազմ մը պիտի բռնկի որուն մէջ պիտի ներգրաւուին Իրաք, Աֆղանիստան, Իրան եւ Թուրքմէնիստան. նման պարագայի մը Ռուսիա պիտի մտնէ պատերազմին մէջ եւ թրքերէն լոսող ոչ ոք պիտի մնայ Պոլիսէն մինչ*

1) Թրքական հանրապետութիւններու մասին վիճակագրական տուեալներ, 1995 թուականի համաձայն. —

ԱՆՈՒՆ	ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆ	ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՏՈՎՈՍ	ՏԱՐԱՆՈՒԹԻՒՆ
1) Ատրպէյճան	7,384 Միլիոն	82% Ազերի	86506 ք.մ. <sup>2</sup>
2) Ղազախստան	17,242 Միլիոն	40% Ղազախ	717428 ք.մ. <sup>2</sup>
3) Խրիստոստան	4,612 Միլիոն	52% Խրիստ	198502 ք.մ. <sup>2</sup>
4) Իւզպէքիստան	21,871 Միլիոն	70% Իւզպէք	447293 ք.մ. <sup>2</sup>
5) Թիւրքմէնիստան	3,980 Միլիոն	72% Թիւրքմէն	488000 ք.մ. <sup>2</sup>
6) Թուրքիա	60,000 Միլիոն	75% Թուրք	779452 ք.մ. <sup>2</sup>

1) «Ազգակ», 11/2/92:  
2) «Մարմարա», 2/4/97:





## Փանթուրանիզմի ժամանակակից Գնահատումը

Խորհրդային Միության փլուզման նախօրեակին, Փանթուրանական շարժման աշխուժացման զուգահեռ, հայ ֆաղափական միտքը, Փանթուրանիզմի պատմաֆաղափական երեւոյթը գնահատելու հարցին մէջ, երկփեղկում կ'արձանագրէ: Հարցը կը դիտարկուի իր ֆաղափական անմիջական նշանակութեան մէջ միայն եւ ակնբերելու հիգ մը կը տարուի խուսափելու անոր պատմական եւ գիտական ֆննարկումը կատարել: Հայաստանի անկախութեան ջերմ շատագովները, ապացուցելու համար թէ Անկախ Հայաստանի լինելութեան հանդէպ ռազմաֆաղափական ոչ մէկ վտանգ կը սպառնայ, կը հասնին այն եզրայանգումին որ պատմութեան մէջ ընդհանրապէս Փանթուրանիզմ գոյութիւն չէ ունեցած եւ այդ ուսերու կողմէ յղացւած խրատիլակ մըն է՝ հայ ժողովուրդին մէջ ռուսական արեւելումը միշտ վառ պահելու համար<sup>1</sup>: Միւս կողմէ, կը փորձուի Հայաստանի նակատագիրը եւ Հայաստանի հաւանական անկախացումը միայն ու միայն Փանթուրանիզմի պատմական իրողութեան եւ անոր ներկայացուցած վտանգին դիտանկիւնէն ֆննարկելու: Տեսական այս վէճի արտայայտութիւններէն կ'ըլլայ Ղարաբաղ Կոմիտէի այն ծրագրային յայտարարութիւնը որ 1989 Յունիսին Հայաստանի խորհրդարանի ամպիոնէն կը կարդայ երեսփոխան եւ ապագային Հայաստանի նախագահ

1) 1990ին, տողերս գրողը, Երեւանի Տրամադրական Թատրոնին կից գտնուող «Ղարաբաղ Կոմիտէի» ժամանակաւոր կեդրոնին մէջ հանդիպում ունեցաւ Ծարժման ղեկավարներուն հետ, որոնք ամբողջապէս կը պաշտպանէին այս տեսակէտը: Աւելի յառաջ երթալով, Ծարժման ղեկավարներէն եւ ապագային Հայաստանի վարչապետ Վազգէն Մանուկեան, ջերմեռանդօրէն կը պաշտպանէր այն տեսակէտը թէ հայոց պատմութիւնը շատ ակնի բարենպաստ դասաւորում կ'ունենար եթէ հայ ժողովուրդը «ռուսական արեւելումին» փոխարէն ընդհանրապէս որդեգրած ըլլար «թրքական արեւելումը»:

Լեւոն Տէր Պետրոսեան: Յայտարարութեան մէջ կ'ըսուի.— «Հայաստան՝ որպէս Փանթուրքիզմի ծրագրերի իրականացումը խափանող եւ դրանով Ռուսաստանի շահերին ծառայող գործօնի ըմբռնումը Հայկական Հարցը կրկին ներքաշում է միջազգային քաղաքական յարաբերութիւնների բարդ ոլորտը, որը յղի է մեր ժողովրդի ճակատագրի համար բախտորոշ հետեւանքներով: Թէեւ Փանթուրքիզմը, որպէս դադափարախօսութիւն ապրելով իր ծաղկումը Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքում, ներկայումս կորցրել է քաղաքական գործօնի իր բովանդակութիւնը, քանի որ թուրքալեզու ժողովուրդները բռնել են ազգային զարգացման ուղին, սակայն նրա դէմ ուղղուած խաչակրաց արշաւանքի կոչերը ընդունակ են այն նորից վերածելու քաղաքական գործօնի եւ Հայաստանը դարձնելու Փանթուրքիզմի ու Փանիսլամիզմի թիրախ»:

Ղարաբաղեան Ծարժման Հայաստանի Կոմիտէն, աւելի քան մէկ տարի զլխաւորելով համաժողովրդական շարժումը, սկզբից եւեթ մերժել է օտար հովանաւորի վրայ յոյս դնելու եւ Փանթուրքիզմը որպէս մշտական սպառնալիք դիտելու վնասակար մտայնութիւնը եւ հետեւողականօրէն կենսագործել քաղաքական այն սկզբունքը, որ հայ ժողովուրդն իր ազգային իղձերին հասնելու համար պէտք է ապաւինի միայն ու միայն սեփական ոյժերին: Քաղաքական այն ուղին տուել է իր ակնյայտ դրական արդիւնքները եւ արցախեան խնդիրը մերժման, բռնադատման փուլից դուրս բերել լուծման փուլ:

...Գիտակցելով այս իրողութիւնը, արցախեան խնդիրը փակուղու առաջ կանգնեցնելու ձգտող ոյժերը հայ ժողովրդի դէմ նիւթել են մի հաւեր դաւ, որին այսօր կամայ թէ ակամայ մասնակցում են որոշ հայ մտաւորական գործիչներ: Փանթուրքիզմի վտանգի եւ թուրքիոյ կողմից նուաճուած հայկական տարածքների ինդրի արժարժումն այս պահին հետապնդում է միայն ու միայն մէկ նպատակ, հայ ժողովրդին ներկայացնելով որպէս ռեւանշիստներ, վարկաբեկել արցախեան արդարացի պահանջատիրութիւնը եւ զրանով գրկել նրան վերոյիշեալ դաշնակիցների համակրանքից»<sup>1</sup>:

Խորհրդային Միության ֆայնալումը, որպէս համաշխարհային

1) Տես «Հայկական Հարցը», Լենդրուշ Խուրշուդեան, Երեւան, 1995, էջ 74–75:

հային երեւոյթ, տեղի ունեցաւ հայութեան մէջ գործող քաղաքական այս կամ այն հոսանքին կամքէն անկախ: Ծնաւ Հայաստանի Հանրապետութիւնը, անկախ այն բանէն թէ հայ քաղաքական միտքը ինչպէ՞ս կը գնահատէ Փանթուրանիզմը եւ անկախ այն բանէն թէ Փանթուրանիզմը Հայաստանի անկախ գոյութեան հանդէպ ի՞նչ վերաբերում կ'ունենայ:

Խորհրդային Միութեան քայքայման պատճառները բնուարկելը հեռու է մեր շօշափած նիւթէն: Սակայն, կայ երեւոյթ մը, որ ուղղակիօրէն կ'առնչուի Փանթուրանիզմի այսօրուան գնահատականը կատարելու որեւէ փորձի հետ: 20րդ դարու աւարտին, նկատելի դարձան համաշխարհային երկու գուգահեռ շարժումներ. մէկ կողմէ քայքայման եւ տարբադադրման շարժումը եւ միւս կողմէ համախմբման եւ նոր դաշնակցութիւններ կազմելու շարժումը: Քայքայման ենթարկուեցան բոլոր այն համախմբումները, որոնք ստեղծուած էին ենթակայական արժէքներու վրայ (գաղափարախօսութիւն, ազգային եւ կրօնական պատկանելիութիւն եւ այլն): Այս երեւոյթի վառ օրինակներէն են Խորհրդային Միութեան, Եւրոկոմիսիոյ եւ Չեխոսլովակիոյ տարանջատումները: Նոյնպիսի վառ օրինակներ կարելի է նկատել, այդքան փափափուած արաբական երկիրներու եւ իսլամական երկիրներու միջեւ միացումներ յառաջ բերելու փորձերուն ձախողութիւնները: Աւելին. Մոցի Ա. եւ Բ. պատերազմները եկան ապացուցելու թէ ազգային եւ կրօնական պատկանելիութիւնները, տնտեսական շահերուն դիմաց շատ փոքր արժէքներ են: Միւս կողմէ, սկսան ստեղծուիլ նոր համախմբումներ, որոնք հիմք ունին նիւթական արժէքները՝ այսինքն տնտեսական փոխշահաւէտ գործակցութիւնները: Այդ երեւոյթին վառ օրինակներէն են Եւրոպական Շուկան, ԱՄՆ-Գանատա-Մեքսիկո համաձայնագիրը, Սեւծովեան երկիրներու Համախմբումը, Ռուսիոյ հովանաւորութեամբ՝ Հասսան-Իրան-Թուրքմէնիստան համաձայնագիրը, Կովկասեան Հասարակաց Շուկայ մը ստեղծելու ծրագիրը, Արաբական Հասարակաց Շուկայ ստեղծելու գաղափարը՝ որ կը փոխարինէ արաբական միասնականութեան գաղափարը, եւ այլն: Համաշխարհային այս երեւոյթի հեռապատկերին վրայ, թրքախօս ժողովուրդներու ազգային միասնականութեան գաղափարախօսութիւնը՝ զանոնք մէկ պետական կառոյցի մէջ միաւորելու ա-

ռաջադրանքով՝ կը թուի ըլլալ ժամանակի ոգիին եւ պահանջներուն չհամապատասխանող, ժամանցուած վարդապետութիւն մը:

Փանթուրանիզմի այսօրուան գնահատականը կատարելու համար, միայն վերոյիշեալ երեւոյթը նկատի առնելը բաւարար չէ: Դարասկիզբին, Փանթուրանիզմը, Ռուսական Կայսրութեան թրքախօս ժողովուրդներուն ազատագրական պայքարի գաղափարախօսութիւնն էր: Այսօր, Խորհրդային Միութեան քայքայումով, այդ ժողովուրդները ամփոփուած են 5 անկախ հանրապետութիւններու մէջ եւ ազատագրական պայքարի հարց չունին: Աւելին, Խորհրդային Միութեան քայքայումը եւ անկախ հանրապետութիւններու յառաջացումը տեղի չունեցան Թուրքիոյ ուղղակի եւ ներգործօն մասնակցութեամբ: Միջինասիական թրքախօս հանրապետութիւնները Թուրքիոյ վճարելիք բարոյական պարտք մը չունին: Անոնց չի սպառնար նաեւ իրենց անկախութիւնները կորսնցնելու անմիջական վտանգ: Անոնցմէ իւրաքանչիւրը բռնած է զարգացման անկախ ուղի եւ դժուար թէ անոնք իրենց սեփական անկախութեան կորուստին գնով Թուրքանական Կայսրութիւնը յառաջ բերելու պայքարին լծուին:

Փանթուրանիզմի այսօրուան գնահատականը կատարելու համար կարելու է նաեւ ուշադրութիւն դարձնել այն տարակարծութիւններուն վրայ, որոնք գոյութիւն ունին թրքախօս հանրապետութիւններուն միջեւ: Այդ տարակարծութիւններուն վառ օրինակն էր Խրիսթոստան-Իւզպէրիստան լարուածութեան սրումը (1990 Յունիս), որ երկու երկիրներուն միջեւ ստեղծեց պատերազմական իրավիճակ: Այդպիսի տարակարծութիւններ երեւան եկան Կեդրոնական Ասիոյ հանրապետութիւններուն «Իսլամական Գագաթաժողովին» (1992 Մայիս, Աշխապատ): Նոյնը կրկնուեցաւ թրքական հանրապետութիւններու առաջին գագաթաժողովին (1992 Հոկտեմբեր, Անգարա), երբ 6 հանրապետութիւնները բաժնուեցան 3 հոսանքներու.— Թուրքիա եւ Ատրպէյճան, Ղազախիստան եւ Իւզպէրիստան, Խրիսթոստան եւ Թուրքմէնիստան: Ուշագրաւ է որ այս ժողովին, Ղազախիստանի նախագահ Նազարպաեւ, բուռն կերպով ընդդիմացաւ յատկապէս Եգրափակիչ Յայտարարութեան մէջ Ղարաբաղի վերաբերեալ պարբերութեան: Այս երեւոյթները

կու գան փաստելու որ թրֆախօս հանրապետութիւններուն միջեւ կան խորը տարակարծութիւններ:

Վերոյիշեալ տուեալներէն ելած կրնանք ըսել թէ այսօր, Փանթուրանիզմ հասկացութիւնը կ'ընթանայ ոչ թէ թրֆախօս բոլոր ազգերը մէկ կայսրութեան մէջ միաւորելու հեռանկարով, այլ՝ թրֆախօս հանրապետութիւններուն միջեւ մշակութային, տնտեսական եւ այլ բնոյթի համագործակցութիւններ ստեղծելու ուղղութեամբ:

Փանթուրանիզմի ժամանակակից գնահատականը կատարելու մէջ, համանման եզրայանգումներու հասած են հայ ֆաղափական միտքի տարբեր հոսանքներու ներկայացուցիչները: Այս կապակցութեամբ Հրաչիկ Սիմոնեան կը գրէ. — «Անհնարին է նաեւ միասնական թուրքական պետութեան ստեղծումը թուրքալեզու բոլոր ժողովուրդներին միաւորման միջոցով: Փանթուրքիզմի գաղափարախօսութեան եւ գործունէութեան անցած ուղին ակնառու ցոյց է տուել, որ այդ գաղափարը անիրագործելի է ոչ միայն այն պատճառով, որ դրա իրականացման ճանապարհին իբրեւ խոչընդոտ առաջին հերթին կանգնած են Ռուսաստանը, Հայաստանը եւ այլ երկրներ, այլեւ այն պատճառով, որ նման միաւորման չեն ձգտում հենց իրենք՝ թրքալեզու ժողովուրդները, որոնք, եթէ ստանան քաղաքական անկախութիւն, ընաւ չեն ձգտի կորցնել այդ անկախութիւնը՝ այս անգամ էլ մտնելով թուրքիայի պետական կազմի մէջ»<sup>1</sup>:

Նոյն տեսակետը կը պարզէ Էտիկ Յովհաննէսեան երբ կ'ըսէ. — «Փանթուրքիզմի վտանգը քանի գնում, թուլանում է»<sup>2</sup>: Նոյնն է Մանուկ Մանուկեանի եզրայանգումը որ «Դրօշակ» պաշտօնաթերթին մէջ կատարած «Համաթրքութիւնը ժամանակակից Փուլում» ուսումնասիրութեան մէջ կը գրէ. — «Եզրակացութիւնը մէկն է՝ այսօր ձեւաւորում են «Մեծ Թուրանի» կառավարման օղակները, բայց դրանք հազիւ թէ հասցընեն միասնական պետութեան ստեղծման մակարդակին: Լաւագոյն դէպքում՝ կ'առաջանայ Եւրոպետութեան նման կոնգլոմերատ, որն ի վիճակի չի լինի իրականացնելու Համաթրքական ծրագրերը»<sup>3</sup>:

1) Տես «Թուրք- Հայկական Յարաբերութիւնների Պատմութիւնից», Հրաչիկ Սիմոնեան, Երեւան, 1991, էջ 622:

2) «Ազգակ», 22 Օգոստոս 1990:

3) «Դրօշակ», 20 Ապրիլ – 3 Մայիս, 1995, էջ 20:

Մօտաւորապէս նոյն կարծիքը կը պաշտպանէր նաեւ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան: 1997 Հոկտեմբերին, տողերս գրողը Լիբանանի խորհրդարանական պատուիրակութեան հետ նախագահ Տէր Պետրոսեանի հետ հանդիպման ժամանակ, տարածաշրջանի ֆաղափական իրավիճակի ֆննարկման ծիրէն ներս, նախագահը կը հաւաստիացնէր թէ ինք ծանօթ է Միջինասիական հանրապետութիւններու ղեկավարներուն, անոնց հետ ունի սերտ կապեր եւ լաւապէս գիտէ թէ անոնք թրֆական միասնական կայսրութիւն մը կերտելու Փանթուրանական ծրագիրներ չունին, անցնելով թէ անոնք Ռուսիոյ տիրապետութեան դուրս գալէ ետք չեն փափափիր Թուրքիոյ տիրապետութեան տակ մտնել:

Հայաստանի նախագահին տեսակետներուն համահնչիւն է Խրիստոսեանի նախագահ Ասֆար Աղաբալի թրֆական «Ճում-հուրիյէր» թերթին յայտնած կարծիքը, ուր ան կ'ըսէ. — «Օրէ օր, թրքացեղ Հանրապետութիւններու մէջ կը շեշտուի միութեան եւ գործակցութեան ձգտումը եւ ոմանք հակամիտութիւն մը կը տեսնեն Համաթրքութեան (Փանթուրքիզմի), բայց ես նման հեռանկար մը չեմ տեսներ: Համաթրքութեան Հանդէպ ի յայտ բերուած մտահոգութիւնները բոլորովին անտեղի են: Այսօր ընդհանուր ձգտում է բարօրութիւնը, հետեւաբար չեմ զարմանար որ ոմանք Համաթրքութեան մէջ գտած ըլլան այդ Հնարաւորութիւնը: Եթէ Խրիստոսեան կարենայ իրագործել տնտեսական մարզերու յատուկ իր ծրագրումները՝ Փանթուրքիզմը եւ իսլամապաշտութիւնը կը դադրին վտանգաւոր շարժումներ ըլլալէ»<sup>1</sup>:

Այսօրուան Փանթուրանիզմը ա՛յս ձեւով բնութագրել, երբեք չի նշանակեր ժխտել անոր պատմական գոյութիւնը կամ ուրանալ որ ան, պատմութեան տարբեր հանգրուաններուն, ինքզինք դրսեւորած է տարբեր դիմագիծերով եւ ունեցած է տարբեր առաջադրանքներ: Մանաւանդ չի նշանակել բացառել այն հնարաւորութիւնը, որ պատմական այլ հանգամանքներու պայմանով, ան կրնայ իր առջեւ գործնական այլ առաջադրանքներ դնել:

Ճիշդ է, որ ֆաղափականութիւնը հնարաւորին արուեստն

1) «Ազգակ», 12/2/92:

է, բայց, քաղաքականութիւնը նաեւ հնարաւոր զարգացումները հաշուարկելու եւ ըստ այնմ նախապատրաստուելու արուեստն է: Իսկ հնարաւորը հաշուել, առաջին հերթին կը նշանակէ հր-նարաւոր ամենէն վտուր, ամենէն ժխտականը նկատի առնել: Դրական ու ձեռնուր զարգացումները, առանց նախապատ-րաստութեան ալ կարելի է յաջողութեամբ դիմակալել: Անըն-պաստ զարգացումներն են որ պէտք ունին նախապատրաստու-թեան: Այս իմաստով, շատ աւելի խոհեմ է նախապատրաս-տուիլ Փանթուրանիզմի վտանգին հանդէպ, քան վարդագոյն ապագայի յոյսերով անոր հանդէպ նստիլ ձեռնածալ: Միւս կողմէ, պատմութեանն եւ քարտէսէն ջնջուելու վախը ապրած փոքր ժողովուրդ մը, ինչպիսին է հայը, շատ բնական է, որ իր հոգեբանութեան եւ ենթագիտակիցին մէջ (թէկուզ բարդոյթի ձեւով) բնաջնջման ենթարկուելու գերագոյն վախը ունենայ ու իր լինելութիւնը ապահով տեսնելու մտավախութեամբ մտա-տանջուի: Պատմութեան ընթացքը կրնայ միայն այդ մտա-վախութիւնը վերացնել. ուրիշ ոչ ոք կրնայ այդ երաշխիքը տալ:

Այս ելակէտէն մեկնած, անսովոր կամ գրգռիչ ոչինչ պէտք է տեսնել այն երեւոյթին մէջ, որ հայ քաղաքական միտքը շարունակէ իր ուշադրութեան կեդրոնը պահել Փանթուրանիզ-մը՝ անոր գաղափարախօսութիւնը, պատմութիւնը եւ յատ-կապէս ժամանակակից դրսեւորումները: Նոյն ելակէտէն մեկ-նած, տարօրինակ պէտք չէ գտնել նաեւ, որ Հայ ժողովուրդի մէկ մեծ հատուածը, շրջանային հզօր ոյժի մը հետ բարեկամա-կան սերտ յարաբերութեան մէջ տեսնէ Հայրենիքին ու ժողո-վուրդին ապահովութեան գրաւականը:

Փանթուրանիզմի ժամանակակից ընդհանուր գնահա-տականը կատարելուն եւ գայն հայ ժողովուրդի լինելութեան դիտանկիւնէն գնահատելուն մէջ կայ նաեւ նրբութիւն մը: Հայաստանին եւ Հայ ժողովուրդին գոյութեան առաւելաբար կը սպառնան Փանթուրանիզմի հանդէպ Թուրքիոյ եւ Ատրպէյճա-նի ունեցած կեցուածքները եւ ոչ թէ Միջինասիական հանրա-պետութիւններունը: Այս իմաստով, ակնառու փաստերը կը խօսին այն մասին, որ բրբական հանրապետութիւններուն մէջ, Փանթուրանիզմի հետապնդման տեսակէտէն Թուրքիա եւ Ա-տրպէյճան ամենէն հետեւողականներն են: Եթէ այսօր, անմի-ջապէս հնարաւոր չէ իրագործել «Մեծն Թուրանի» կայսրու-թիւնը, սակայն, Թուրքիա-Ատրպէյճան ցամաքային միացում

մը, կրնայ այդ հեռանկարին մասնակի իրագործումը ըլլալ. ա-մենէն կարեւոր իրագործումը:

Փանթուրանիզմը ճանչնալը, անոր դէմ տեսական ու քա-րոզչական պայքար տանիլը, անոր որեւէ յոռի դրսեւորման հանդէպ նախապատրաստուիլը կամ շրջանէն ներս ռազմավա-րական դաշնակիցներ ունենալը, բնաւ հակասութեան մէջ չեն մտնէր անկախ ու ինքնիշխան Հայաստանը պահելու եւ հզօրա-ցընելու անհրաժեշտութեան հետ: Վերջին հաշուով, Փանթու-րանիզմի վտանգը չէզոքացնելու ամենէն վստահելի միջոցը Հայաստանի տնտեսական եւ ռազմական կարողականութիւնը զօրացնելն է: Միւս կողմէ, զօրաւոր Հայաստան մը շատ աւելի դիրաւ կրնայ ռազմավարական դաշնակիցներ ունենալ քան սկար ու շրջանային քաղաքական կեանքին մէջ իր դերը չունե-ցող Հայաստան մը:

\*  
\*\*

Փանթուրանիզմի անցեալը, ներկան եւ ապագան ի՛նչ ձեւով որ ալ գնահատենք, ամուր եւ հզօր Հայաստան մը ունե-նալը չի դադրիր բոլոր ձեւի վտանգները դիմագրաւելու ամե-նէն ապահով երաշխիքը ըլլալէ, Հայ ժողովուրդի գոյերթը ա-պահովելու կոչուած հիմնական խարխախը ըլլալէ:

Այդ կերտելու պատմական առիթ մը տրուած է մեզի:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	ԷՁ
Նախաբան	3
Փանթուրանիզմ Բառին Սահմանումը Ստուգաբանումը Եւ Ծագումը	5
Պատմական Ակնարկ	7
Փանթուրանիզմի Զարգացումը Ռուսական Կայսրութեան Մէջ	9
Փանթուրանիզմի Զարգացումը Օսմանեան Կայսրութեան Մէջ	14
Փանթուրանիզմը Համաշխարհային Ա. Պատերազմին	31
Փանթուրանիզմը Համաշխարհային Ա. Պատերազմէն Ետք	45
Փանթուրանիզմը Համաշխարհային Բ. Պատերազմին	56
Փանթուրանիզմը Պաղ Պատերազմի Տարիներուն	61
Փանթուրանիզմը Խորհրդային Միութեան Զայքայումէն Ետք	70
Փանթուրանիզմի Ժամանակակից Գնահատումը	82
Բովանդակութիւն	91